



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 119 2020

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեվանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Արթուր Չախոյան ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999 թ.) և դոկտորական (2002 թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 29.09.2020 թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 5 տպ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է
«Տիր» հրատարակչության տպարանում
Երևան, Ա. Միկոյան 2/2

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2020 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արամ Թամրազյան, Մարիամ Բաղդասարյան Պետության կողմից դաժանության դրսևորումը որպես անհնազանդության ճնշման և բնակչության ահաբեկման միջոց.....	3
Մուշեղ Արամյան Հափշտակության տեսակները արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ.....	11
Դավիթ Օհանյան «Վնաս» եզրույթի հասկացությունը և սահմանները. գրավառուփի վնաս պատճառելը հանցակազմի համատեքստում.....	16
Զարուհի Հարությունյան Ներանձնային խնդիրները որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ.....	22

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ժորա Զհանգիրյան Սահմանադրական դատարանի տեղը իշխանությունների տարանջատման համակարգում՝ ըստ Հայաստանի Հանրապետության 2015 թ. Սահմանադրության.....	28
Ռազմիկ Մարիկյան ԴՆԹ բնութագրերի պահպանումը՝ միջամտություն անձի անձնական կյանքը հարգելու իրավունքին.....	37

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սամինե Պետրոսյան Ընդհանուր սեփականության հասկացությունը: Բաժնային սեփականությունը որպես ընդհանուր սեփականության տեսակ.....	41
--	----

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տաթևիկ Սարուխանյան Հաշտարարության կամավորությունը և պարտադիր հաշտարարությունը որպես կամավոր սկզբունքի բացառություն.....	48
---	----

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Лусине Тасалян Медиация или трудовой спор.....	56
--	----

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Համլետ Հարությունյան Ծառայությունից արձակվելու սահմանափակումը աշխատանքի ազատ ընտրության իրավունքի համատեքստում.....	58
---	----

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անի Մեծումյան Անչափահասների վիկտիմիզացիան որպես սոցիալ-իրավական գործընթաց.....	63
--	----

ՄԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts.....	68
--	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները.....	80
---	----

ԱՐԱՄ ԹԱՄԱԶՅԱՆ

Արդարադատության պետական խորհրդական,
ՀՀ վաստակավոր իրավաբան,
իրավաբանական գիտությունների դոկտոր

ՄԱՐԻԱՄ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
իրավական ապահովման և սպասարկման
բաժնի գլխավոր մասնագետ

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅՑ ԴԱԺԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՏ
ԱՆՆԱՉԱՆԴՈՒԹՅԱՆ ՃՆՇՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԱՆԱԲԵԿՄԱՆ ՄԻՋՈՑ**

Դաժանությունն իր ծագմամբ և դրսևորման ձևերով նույնքան հին է, որքան մարդկային քաղաքակրթությունը: Դաժանության դրսևորումները մշտապես ուղեկցել են մարդկության պատմությանը, որոնք ինչպես պետության պատմության վաղ շրջանում, այնպես էլ դրան հաջորդող բազմաթիվ դարերի ընթացքում, հանդիսացել են ինչպես հանցավոր վարքագծի դրսևորման անձնական հատկանիշ, այնպես էլ պետության և պետական իշխանության ձեռքին միջոց՝ ցանկացած անհնազադության ճնշման և բնակչությանն ահաբեկման մեջ պահելու համար: Ավելին, վերջին դեպքում, փաստորեն, պետության պատմության, նրա պատմական զարգացման շատ մեծ ժամանակաընթացքում դաժանությունն իր դրսևորումներով գրեթե բարձրացվել և հասցվել էր օրենքի աստիճանի, որպիսին իր արտացոլումն էր գտնում, ամրագրվում և դրսևորվում ինչպես կատարված հանցագործությունների համար նախատեսվող պատժամիջոցների տեսակներում, այնպես էլ կատարված հանցավոր արարքների մեջ անձի մեղավորության ապացուցման գործընթացում՝ որպես դատավարության առանձին տարր:

Պետական մակարդակով դաժանության առանձին դրսևորումները նախաքրիստոնեական (հեթանոսական, զրադաշտական) ժամանակներում համարվում էր որպես՝ «Աստծո դատաստանի» տեսակ, որն հաճախ, իր անհեթեթ պարզունակությամբ հավասարեցվում էր անգամ «ճակատագրական մեղքի» գաղափարին՝ կապված անձին դաժան եղանակներով փորձությունների ենթարկելու հետ:

Դրանով էր պայմանավորված նաև անձի կողմից հանցանք կատարած լինելու կամ այն կատարած չլինելու ապացուցվածությունը:

Դրանց մեջ էին մտնում այսպես կոչված «երկաթի և ջրի փորձությունը», որի իմաստը կայանում էր նրանում, որ եթե մեղադրյալը շիկացած երկաթը բռնած մի քանի քայլ անելուց հետո հետագայում բուժվում էր ստացված այրվածքներից, ապա նա համարվում էր անմեղ, իսկ եթե վերքը չէր բուժվում՝ մեղավոր, իսկ «ջրի փորձության դեպքում, եթե կապկպված վիճակում գետը նետված անձը ջրասույզ էր լինում, համարվում էր մեղավոր, իսկ ջրասույզ չլինելու դեպքում՝ անմեղ»:

Նախաքրիստոնեական, այնուհետև նաև վաղ քրիստոնեական ժամանակաշրջաններին հայտնի էին այնպիսի դաժան պատժամիջոցներ, ինչպիսիք էին, օրինակ՝ կաշին քերելը և կաշին քերթելը, որոնցից կաշին քերելը՝ հատուկ գործիքի միջոցով անձի մաշկը մասնակիորեն կամ տեղ-տեղ քերելով տառապանք պատճառելը մարմնական պատժամիջոց հանդիսանալուց զատ հանդիսացել է նաև անձից անհրաժեշտ ցուցմունքներ, այդ թվում և ինքնախոստովանական ցուցմունքներ կորզելու միջոց: Ի տարբերություն կաշին քերելու մարմնական պատժատեսակի, կաշին քերթելը կամ մորթագերծ անելը զրադաշտական աշխարհում հանդիսացել է մահապատժի ամենատարածված, հրապարակայնորեն կիրառվող, սարսափազդու, և անասելի տանջանքներով ուղեկցվող «ծանրմահապատճառելու» պատժատեսակներից մեկը: Այն ի տարբերություն առանց այլ տանջանքների անմիջական կիրառմամբ ուղեկցվող մահապատժի՝ «թեթև մահ պատճառելու» պատժատեսակի, սահմանվել է առանձնապես ծանր հանցագործությունների համար, հիմնականում՝ թագավորների, աստվածների նկատմամբ «անշնորհակալ» գտնվողների, անհա-

վատ «դարձի չեկածների», աղանդավորների, պետական դավաճանության մեջ մերկացվածների, սեռական բնույթի որոշ հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ:

Կաշին քերելու և կաշին քերթելու պատժատեսակների բնույթին և կիրառման կոնկրետ դեպքերին իրենց աշխատություններում, նաև որպես ականատեսներ անդրադարձել են հայ պատմիչներ Ագաթանգեղոսը, Եզնիկ Կողբացին և այլք¹:

Հնագույն ժամանակներում մահապատժի կիրառման դաժան եղանակներից էր նաև անձի կոկորդը հալած պղինձ, արծաթ, երկաթ, արճիճ, կամ այլ հեղուկ լցնելը: Հայտնի է, որ Պոնտոսի արքա Միհրդատ VI-ը Քրիստոսից առաջ 88 թվականին՝ Պրոտոտախիի ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո, հրամայել է հալած ոսկի լցնել հռոմեացի զորապետ Ակվիլիայի կոկորդը՝ դրանով միաժամանակ մատնացույց անելով նաև հռոմեացիների կողմից կաշառակերության տարածվածության ամոթալի աստիճանի մասին:

Հնագույն ժամանակներում կիրառվում էր նաև սոված առնետների օգտագործումը: Հորիզոնական վիճակում կապված դատապարտյալի որովայնին ամրացվում էր առանց հատակի վանդակ, որի մեջ փակված էր սոված առնետ, որն էլ քաղցը բավարարելու, կամ՝ ազատության մեջ հայտնվելու համար սկսում էր ամբողջովին ավերել մարդու ներքին օրգանները, առաջացնելով մահ:

Հնագույն Չինաստանում կիրառվում էր նաև մահապատժի այնպիսի տեսակ, ինչպիսին էր մարմինը երկու կես անելը: Մահապատժի այս տեսակի հեղինակն էր արքունիքի ծառայող Շան Յանին (Ք.ա. 390-330 թթ.), որի բարեփոխումների և դատական կարգադրությունների մեջ կար հետևյալ գրառումը. «Նա, ով չի հայտնի հանցագործի մասին՝ կդատապարտվի մարմինը երկու կես անելու»: Միջնադարյան Չինաստանում, որպես մահապատիժ, կիրառվում էր նաև քառատումը: 1048 թվականին Չինաստանում քառատվել է գյուղացիական խոշոր ապստամբության ղեկավար Յան Յզին: Ռուսաստանում, մահապատժի այս տեսակը դրսևորվում էր մահվան դատապարտվածի

ձեռքերը, ոտքերը և գլուխը հերթականությամբ հատելով: Քառատումը հաճախ կիրառվել է տարբեր ապստամբների նկատմամբ:

Անտիկ ժամանակներից մահապատժի կատարման եղանակ էր նաև խաչելությունը, որի հավանական ծագումը վերագրվում է փյունիկեցիներին, որոնցից այն ընդօրինակել են կարթագենցիները, որոնցից էլ՝ հռոմեացիները: Օրինակ՝ Սպարտակի ապստամբության ժամանակ հռոմեացիները ճամփեզրին խաչեցին վեց հազար ստրուկի:

Միջնադարյան Ճապոնիայում տարածված էր մահապատժի հենց այս տեսակը: Ընդ որում, նախքան ապստամբության ղեկավարի խաչելությունը, նրա աչքի առաջ սպանում էին վերջինիս ընտանիքի անդամներին:

Խաչելությունը կիրառվել է նաև Հնդկաստանում և Չինաստանում:

Հետաքրքիր է այն փաստը, որ խաչելությունը որպես մահապատժի տեսակ դեռևս կիրառվում է Սուդանում: Սակայն հարկ է նշել, որ այն իրականացվում է անձին կախաղան հանելուց հետո, այսինքն՝ խաչվում է մահացած մարմինը:

Առանձնակի դաժան պատիժների ընտրությունն ու կիրառումը հանդիսանում էր նաև օտար նվաճողների կողմից մի դեպքում՝ որպես վրեժի դրսևորում, վախի մթնոլորտի ստեղծում, մյուսում՝ իշխանությունը պահպանելու հիմնական միջոց:

Օրինակ, մոնղոլ-թաթարական հորդանների լծի ներքո գտնվող անձինք ծանր հանցագործությունների կատարման համար մահապատժի էին ենթարկվում գլխատելու, ողնաշարը կտրելու, քառատելու, ձիերին կապելով քարշ տալու և այլ եղանակներով: Միջնադարի մութ ժամանակներում լայնորեն կիրառվում էր նաև խարույկի վրա այրելու եղանակով մահապատժի ենթարկված անձի նկատմամբ հրապարակված դատավճռի կատարումը:

Անգլիացիների դեմ մի շարք հաղթանակներ տանելուց հետո 1429 թվականին գերի ընկած Ֆրանսիայի ազգային հերոս Ժաննա դ'Արկը անգլիացիների կողմից հանձնվեց ինկվիզիցիայի դատին՝ սատանայական կապեր

1. **Խաչատրյան Ա. Ա.**, Կաշին քերելը և կաշին քերթելը ըստ գրադաշտական և քրիստոնեական իրավունքի, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու 1 2014 թ. էջ 693-711:

ունենալու մեղադրանքով՝ անշուշտ կրած պարտությունը արդարացնելու միտումով: Արդյունքում հերետիկոսության մեջ մեղադրվող 19-ամյա «Օրլեանի կույսը» 1431 թվականի մայիսի 30-ին, Ռուանի հին շուկայի հրապարակում այրվեց խարույկի վրա, այն էլ երեք անգամ, որպեսզի աղջկա մարմնից որևէ մասունք չմնա: Հետագայում, գրավված տարածքներն ազատագրելուց հետո նույն Ռուանում եկեղեցական նոր ատյանը բեկանեց նախկին դատավճիռը՝ մաքրելով Ֆրանսիայի ազգային հերոսին բոլոր մեղադրանքներից, իսկ՝ 1920 թվականի մայիսի 16-ին ժաննա դ'Արկը դասվեց կաթոլիկ եկեղեցու սրբերի շարքը:

Մեկ այլ օրինակ՝ միջնադարյան հռոմեական խավարամիտ ինկվիզիցիայի ձեռամբ բանտում անցկացրած յոթ տարիների ընթացքում մշտապես ֆիզիկական տանջանքների և տառապանքների ենթարկված, սակայն իր գաղափարներից ու սկզբունքներից չհրաժարված, Վերածննդի ժամանակաշրջանի մեծ մտածող և բանաստեղծ Ջորդանո Բրունոն 1600 թվականի փետրվարի 17-ին Հռոմում մահապատժի ենթարկվեց խարույկի վրա այրելու եղանակով:

Տեղին է հիշել մահվան շեմին կանգնած մեծ մտածողի վերջին խոսքերը՝ «Այրել չի նշանակում հերքել, գալիք դարերն ինձ կհասկանան ու կգնահատեն»:

Միջնադարյան խավար տարիներին Իտալիայում, Իսպանիայում և Եվրոպայի այլ կաթոլիկ երկրներում ստեղծված ինկվիզիցիոն մարմինների կողմից ամենազեղծելի ու դաժան մեթոդներով ու եղանակներով իրականացված հետաքննության արդյունքում կախարդության, սատանաների հետ կապ ունենալու և այլ անհեթեթ ու շինծու մեղադրանքով խարույկի վրա այրելու եղանակով զանգվածաբար մահվան էին դատապարտվում բազում գիտնականներ, հիմնականում՝ աստղագետներ, փիլիսոփաներ, բժիշկներ, գյուտարարներ և այլք: Հերետիկոսներ ճանաչվածների հրապարակային ողջակիզումը՝ Աուտոդաֆեն ուներ հատուկ արարողակարգ, որը միաժամանակ մյուսների համար հանդիսանում էր յուրահատուկ ահաբեկման ակտ: Անձին ողջակիզմամբ մահվան դատապարտելու առանձին դաժան եղանակի մեղքի տակ չմտնելու մտավախությունը քողարկելու նպատակով կաթոլիկ և բողոքական կրոնավորները բացատրում էին

այդ եղանակի ընտրությունը նրա «անարյուն» բնույթով, հավելելով նաև, որ կրակի բոցը օժտված է շրջապատը և անձանց մաքրող հատկություններով: Հենց միայն Իսպանիայում հազարավոր մարդիկ խարույկի վրա այրվել են կախաղան բարձրացվելուց հետո:

Կաթոլիկ երկրներում 15-րդ դարի վերջերից ինկվիզիցիոն հետաքննական մարմինների հավատաքննության իրավասության մեջ մտան նաև սև ուժերի հետ պայման կապած վիուկների դատական զանգվածային գործընթացները, համապատասխան ողջակիզմամբ մահվան դատապարտման հետևանքներով:

Փաստորեն ինկվիզիցիոն մարմինները հերետիկոսների անվան տակ բռնում էին նրանց, ովքեր պայքարում էին եկեղեցու ապօրինի հարստությունների և հսկայական հողատարածքների սահմանափակման, միահեծան եպիսկոպոսության, եկեղեցու անսահմանափակ քաղաքական իշխանության սահմանափակման, մարդկանց միջև հավասարության հաստատման, քաղաքային բնակչության և ընչազուրկ գյուղացիության ձգտումների իրականացման համար պայքարողներին:

Հերետիկոսները համարվում էին ոչ միայն եկեղեցու, այլև պետության թշնամիներ և այդ անունը մշտապես օգտագործվում էր բացասական իմաստով:

14-րդ դարից սկսած ինկվիզիցիոն մարմիններում նշանակվեցին ինկվիզիտորների օգնականներ՝ փորձագետ իրավաբաններ (որակողներ), որոնց խնդիրը մեղադրանքի և դատավճռի ձևակերպումն էր այնպես, որ այն «չհակասի» օրենսդրությանը: Վերջիններս, սակայն զրկված էին մեղադրյալի գործին ծանոթանալու հնարավորությունից, ինկվիզիտորի կողմից նրանց տրվում էր միայն գործի առնչությամբ կարճ ամփոփ տեղեկություն՝ առանց մեղադրյալի և մեղադրանքը հիմնավորող անձանց անվանումների վկայակոչման: Ամենաբարձր հետևողականությամբ ամեն ինչ արվում էր գործով մատնիչների, կեղծ վկայություններ տվողների, այդ թվում այդ նպատակով միևնույն խցում տեղավորված քրեական տարրերի՝ մարդասպանների, ավազակների, զոդերի, սադրիչների ինքնությունը չպարզելու, ինկվիզիտորների կողմից թույլ տված բռնությունները թաքցնելու նպատակով: Այս ամենը գաղտնի էր պահվում նաև մեղադրվողից: Բոլոր վկաները, մեղադրանքի կողմի (ինկվիզի-

տորի) ներկայացրած վկաներն էին: Արգելվում էր առերես հարցաքննությունը մեղադրյալի և վկաների միջև: Ձերբակալվածները պահվում էին, մութ և խոնավ խցերում, հաճախ երկաթե կապանքներով շղթայված վիճակում, երբեմն երկար տարիներ:

Մեղադրյալների նկատմամբ կիրառվում էր աննկարագրելի դաժանության կտտանքներ՝ մետաղական տարբեր գործիքներով նրանց մարմինը ճզմելու, կոտրելու, ձգելու, խեղելու, պատռելու, ծակելու, այրելու եղանակներով և այլն:

1789 թվականի Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության հաղթանակից հետո ինկվիզիցիայի դերը կտրուկ ընկավ: Տարածվում էին լուսավոր գաղափարներ նաև այն մասին, որ եկեղեցու չափազանց մեծ ազդեցությունը խոչընդոտում է հասարակության զարգացմանը, իսկ նրա ինկվիզիցիոն կառույցի առկայությունը չարիք է մարդկության համար: Արդյունքում մարդկության պատմության այս խայտառակությունը վերացվեց միայն 19-րդ դարում:

Միջնադարյան Ռուսաստանը նույնպես աչքի էր ընկնում առանձնակի դաժան պատժատեսակներով, այդ թվում՝ մահապատժի կիրառման պարզ և որակյալ տեսակներով:

Այսպես՝ 15-17-րդ դարերում Ռուսաստանում իշխող դասի նկատմամբ կատարվող գրեթե բոլոր հանցագործությունների, այդ թվում՝ քաղաքական, ինչպես նաև վարչակարգի դեմ ուղղված հանցագործությունների, աստվածանարգության, կրոնափոխության, կեղծ փող պատրաստելու, կնոջ կողմից ամուսնու սպանության և բազմաթիվ այլ հանցագործությունների համար կիրառվում էր մահապատժի, որը պայմանավորվում էր պետության պատժիչ գործունեության ուժեղացմամբ: Ահաբեկման աստիճանը բարձրացնելու նպատակով մահապատժի իրականացվում էր հրապարակայնորեն, մարդկանց բազմության ներկայությամբ, տարբեր եղանակներով: Կախաղան բարձրացնելը, գլխատելը, խեղդամահ անելը, ըստ պատժի կիրառման բնույթի համարվում էր մահապատժի պարզ տեսակներ, իսկ քառատման, խարույկի վրա այրելու, հանցավորի կոկորդը հալած երկաթ լցնելով, անձին կենդանի թաղելու եղանակներով մահապատժի կիրառումը, ըստ պատժի կիրառման բնույթի համար-

վում էր մահապատժի որակյալ տեսակներ: Օրինակ, աստվածանարգությունը պատժվում էր կրակի վրա այրելով, կեղծ փողեր պատրաստելը՝ հանցավորի կոկորդի մեջ հալած երկաթ լցնելով, կնոջ կողմից ամուսնու սպանությունը՝ կնոջը կենդանի վիճակում թաղելով և այլն:

Միջնադարյան Ռուսաստանում ընդունված էր նաև մահապատժի կիրառումը ցցի հանելու եղանակով:

Իր դաժանությամբ և մահապատժի «էկզոտիկ» և նրանց կոմբինացված տեսակների կիրառմամբ աչքի է ընկել Իվան Ահեղը (1530-1584 թթ.), որի օրոք մահվան դատապարտված անձին կտտանքների ենթարկելուց հետո անգիտակից վիճակում կամրջից գետը նետելուց բացի, նրա հետևից ձեռքերը և ոտքերը կապված վիճակում գետն էր նետվում նրա կինը և երեխաները, իսկ պետական դավաճանների նկատմամբ կիրառվում էր մահապատժի կիրառման հատուկ տեսակ՝ մահապատժի դատապարտվածը նստեցվում էր յուղով, գինով կամ ջրով լցված կաթասի մեջ, ձեռքերը կաթասիին ամրացված հատուկ օղակների մեջ և կաթասն դրվում էր կրակի վրա աստիճանաբար հեղուկը հասցնելով եռման աստիճանի:

Միջնադարյան Գերմանիայում այս կերպ էին վարվում կեղծ դրամ պատրաստողների հետ:

Ռուսաստանի 1649 թվականի Օրենքների ժողովածուն նախատեսում էր մահապատժի կիրառումը 35 հանցագործությունների դեպքերում: Հաճախ էր կիրառվում քառատումը, որը սկսվում էր բոլոր չորս վերջույթների հատմամբ և ավարտվում գլխատմամբ և անվաջարդումը՝ որն իրականացվում էր հորիզոնական ամրացված անիվի վրա հանցավորի մարմնի խոշոր ոսկորները կոտրելով:

Մահապատժի չնախատեսող հանցագործությունների դեպքերով նույնպես կիրառվում էին առանձին դաժանության բնույթ կրող մարմնական պատժներ, ինչպիսիք էին՝ շիկացած երկաթով խարանելը, մտրակով հարվածներ հասցնելը, գավազանով հարվածելը և այլն: Ամենախիստ մարմնական պատժը անդամախեղումն էր, որը դրսևորվում էր ձեռքը, ոտքը, ականջը, քիթը կտրելով և այլն:

Անգլիական նավատորմի 18-րդ դարի

կանոնադրության մեջ ապստամբած նավատիներին կատմամբ կիրառվող պատժատեսակը առագաստափայտից կախաղան հանելն էր: Հետաքրքրական է, որ նույն արարքի համար շնածկներով լցված հարավային ծովերում ձևավորվել էր այլ կարգավորում, համաձայն որի դանակով և մահակով «զինված» ապստամբին ոտքերը կապած վիճակում իջեցնում էին նավակողից այնպես, որպեսզի նրա ոտքերը դիպչեն ջրին: Նավաստու բախտը կախված էր զուտ պատահականությունից: Եթե այդ ընթացքում նրան հաջողվում էր խուսափել շնածկներից, ապա դա համարվում էր Աստծո կամք և նրան ներում էր շնորհվում: Ենթադրվում էր՝ շնածկներին կերակրելու դաժան փորձությունը կարող էր հաղթահարվել միայն Աստծո կամքով:

Ինչպես դժվար չէ նկատել վերոնշյալ պատժատեսակը իր բնույթով խիստ նմանվում է նախաքրիստոնեական ժամանակներում հայտնի, մեր կողմից արդեն իսկ քննարկված, «Աստծո դատաստանի» և «ճակատագրական մեղքի» գաղափարին: Պարզապես, նշված դաժան փորձության հաղթահարումը Աստծո կամք, մենք կհամարենք «Աստծո ողորմածություն»:

Փաստորեն, ինչպես նկատեցինք, բազմաթիվ հանցագործությունների դեպքերում հենց իր պետության և պետական իշխանության կողմից դրսևորվում էր առանձնակի դաժանություն, մի բան, որը հաճախ անհամաչափ էր հանցագործության բնույթին և վտանգավորության աստիճանին, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ հաճախ այն կիրառվում էր նաև ոչ բռնությամբ կատարված հանցագործությունների դեպքերում, այն էլ մահապատժի որակյալ տեսակների՝ քառատման, ողջակիզման, անվաջարդման, հանցավորի կոկորդը հալած երկաթ լցնելով, անձին կենդանի վիճակում թաղելու տեսքով և այլ առանձին դաժան եղանակներով, իսկ ինչպես վերը նկատեցինք՝ այդ թվում նաև հարյուր հազարավոր անմեղ մարդկանց նկատմամբ:

Պետության կողմից պատժի առանձնակի դաժանությունը դրսևորվում էր նաև պետության գլուխ հանդիսացող անձանց նկատմամբ:

Այսպես, Անգլիայի թագուհի Եղիսաբեթ I-ի կողմից ձերբակալված և 18 տարի Անգլիայի տարբեր ամրոցներում հսկողության տակ

պահվող իր զարմուհի՝ Շոտլանդիայի թագուհի Մարի Սոյուարտը 1587 թվականի փետրվարի 8-ին գլխատվեց Ֆոտերինգեյ ամրոցում Եղիսաբեթ I-ի սպանության նախապատրաստությանը մասնակցություն ունենալու կասկածելի մեղադրանքով:

Թագավորի դեմ քաղաքացիական պատերազմի ընթացքում Օլիվեր Կրոմվելի գլխավորությամբ Անգլիայում կատարված հեղափոխության արդյունքում Անգլիայի թագավոր Կառլոս I-ը ճանաչվեց պետական դավաճան և բռնակալ ու 1649 թվականի հունվարի 30-ին գլխատվեց Լոնդոնում:

1789 թվականի հուլիսի 14-ին սկսված Ֆրանսիական մեծ հեղափոխության հաղթանակը ոչ միայն վերացրեց Ֆրանսիայում միապետությունը և հռչակեց Ֆրանսիան որպես հանրապետություն, այլև գահընկեց արեց Լյուդովիկոս XVI-ին, որն հետագայում դատապարտվեց մահապատժի, որն էլ ի կատար ածվեց Փարիզում 1793 թվականի հունվարի 21-ին՝ գլխատման եղանակով:

1793 թվականի հոկտեմբերի 16-ին Փարիզի «Համաձայնության» հրապարակում, հազարավոր մարդկանց առջև դահիճ Սանտոնի կողմից գլխատվեց Ֆրանսիայի թագուհի Մարիա Անտուանետան:

1918 թվականի հուլիսի 16-ի լույս 17-ի գիշերը Եկատերինբուրգում բուլշևիկների կողմից դաժանաբար գնդակահարվեց Ռոմանովների դինաստիայի վերջին՝ Նիկոլայ 2-րդ թագավորը, նրա կինը՝ Ալեքսանդրա Ֆեոդորովնան, 14-ամյա որդի Ալեքսեյը, աղջիկներ՝ Օլգան, Տատյանան, Մարիան և Անաստասիան, ընտանիքի բժշկի, աղախնի, սպասավորի հետ միասին:

Մարդկության պատմության զարգացման ընթացքում, հատկապես միջնադարում կիրառվող մահապատժի բազմաթիվ տեսակներ աստիճանաբար վերացել են:

19-րդ դարի երկրորդ կեսին սկսվեց ավելի մեծ չափով դրսևորվել պատժի սպառնալիքի միջոցով հանցագործությունների կանխարգելման իշխանության մղումը: Առաջին պլան մղվեց հատուցման գաղափարը: Միաժամանակ, հենց այս ժամանակաշրջանում, նկատելի էր առանձին դաժան պատժամիջոցների կիրառումից աստիճանաբար հրաժարումը, որի չարդարացված դաժանությունը և անիմաս-

տությունը հայտնի էր հասարակության զարգացման ամենահին ժամանակներից:

Փաստորեն, աստիճանաբար պատժամիջոցի կիրառման առանձնակի դաժան եղանակները դուրս մղվեցին պատժի կիրառման համակարգից:

21-րդ դարը «թևակոխած» մահապատժի հիմնական տեսակները մնացին գնդակահարությունը և կախաղան հանելը, ավելի պակաս՝ հատկապես ԱՄՆ-ում՝ մահապատժի կիրառումը էլեկտրական աթոռի և մահացու ներարկման միջոցով, առավել պակաս՝ գազով թունավորումն ու գլխատելը: Որոշ մուսուլմանական երկրներում շարունակում են զոյություն ունենալ մահապատժի այնպիսի տեսակներ ինչպիսին են՝ քարկոծելը կամ ժայռից նետելը, անդունդը զցելը:

Մահապատժի կախաղան հանելու և գնդակահարության եղանակները ներկայացնելու անհրաժեշտություն չկա: Ինչ վերաբերում է էլեկտրական աթոռի, մահացու ներարկման, գազով թունավորման եղանակներով մահապատժի ի կատար ածելուն, ապա նկատենք, որ էլեկտրական աթոռի միջոցով մահապատժի այս տեսակի հայտնագործման «կասկածելի» պատիվը պատկանում է հանրահայտ գյուտարար Թոմաս Էդիսոնին, որին էլ հաջողվել է համոզել Նյու Յորքի հատուկ հանձնաժողովին, որ էլեկտրական աթոռի միջոցով մահապատժի կիրառումը ավելի մարդասիրական է, քան կախաղան բարձրացնելը: Էլեկտրական աթոռը պատրաստվել և առաջին անգամ 300 վոլտ հզորությամբ փորձարկվել է 1891 թվականին: Մինչև օրս էլեկտրական աթոռը շարունակում է մնալ մահապատժի իրականացման ամենահայտնի ձևը ԱՄՆ-ում: Պատժի իրականացումը տեղի է ունենում մահապատժի դատապարտված անձի մարմնի միջով էլեկտրական հոսանք բաց թողնելու միջոցով: Մահը վրա է հասնում սրտի կանգի և շնչառական մկանների կաթվածի հետևանքով:

Մահացու ներարկման միջոցով մահապատժի իրականացումն առաջին անգամ օրենսդրական ամրագրում է ստացել 1977 թվականին ԱՄՆ-ի Օկլահոմա և Տեխաս նահանգներում, իսկ մահացու ներարկման ենթարկված առաջին անձը եղել է Չարլզ Բրուկսը՝ 1982 թվականին: Մահապատժի այս տեսակի ընդունումը նույնպես բացատրվել է մահապատ-

ժի գործընթացը հնարավորինս քիչ ցավոտ դարձնելու հանգամանքով: Մահացու ներարկման միջոցով մահապատժի իրականացումը իրենից ներկայացնում է արագ ներգործող քիմիական համապատասխան պատրաստուկի մահացու չափաքանակի ներարկումը անձի օրգանիզմ:

Մահապատժի այս տեսակը կարելի է նմանեցնել անտիկ ժամանակների մահապատժի այնպիսի տարատեսակին, ինչպիսին է թունավոր խմիչք ըմպելու եղանակով մահապատժի ինքնասպանությունը: Այս եղանակով կատարված ամենահայտնի մահապատժը հույն փիլիսոփա Սոկրատեսինն էր, ով Ք. ա. 399 թվականին դատարանի դատավճռով խմեց խնդամոլիի (խնակոթի) թույնը:

Գազով թունավորման միջոցով մահապատժի իրականացումը ԱՄՆ-ում արտաքինից ունի բացահայտ նմանություն նացիստական «մարդախեղդ մեքենաներին», սակայն ի տարբերություն նացիստական հանցագործների կողմից ֆաշիստական ճիրաններում հայտնված հարյուր հազարավոր անմեղ մարդկանց տարբեր նպատակներով գազախցիկներում խեղդամահ անելուն, ԱՄՆ-ում ընդունված մահապատժի կիրառման այս տեսակը անմիջականորեն վերաբերում է առանձնապես ծանր հանցագործության համար դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով մահապատժի դատապարտված անձանց դատավճռի ի կատար ածմանը:

Գազով թունավորելու միջոցով մահապատժի իրականացումը տեղի է ունենում հերմետիկ սենյակում բազկաթոռին կապված մահվան դատապարտված անձի խցիկ թունավոր գազ բաց թողնելու արդյունքում վերջինիս շնչահեղձությամբ մահ պատճառելու եղանակով:

Այս ամենով հանդերձ՝ նկատենք, որ առանձնապես ծանր հանցագործությունների համար ԱՄՆ-ում կիրառվել և կիրառվում է նաև ցմահ ազատազրկում պատժատեսակը, որը 2005 թվականից սկսած դաշնային մակարդակով սահմանված մահապատժի փոխարեն կիրառվող հիմնական պատիժն էր, սակայն 15 տարվա ընդմիջումից հետո, 2020 թվականի հունիս ամսին ԱՄՆ-ում դաշնային մակարդակով վերականգնվեց մահապատժի իրականացումը՝ ցմահ ազատազրկման պատժատեսակի

հետ զուգահեռ:

Հետագայում՝ 20-րդ դարում, համաշխարհային հանրությունը անհրաժեշտ միջոցների ձեռնարկմամբ՝ հետևողականորեն փորձեց հասնել մարդկանց նկատմամբ դաժանության դրսևորման վերացմանը, որը պայմանավորված էր ոչ միայն խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի վերացմամբ, այլև մահապատժի վերացմամբ ընդհանրապես:

Մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5-րդ և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածներով ամրագրվեց, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի: Նույն գաղափարն էր ամրագրված նաև 1975 թ.-ի դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին հռչակագրում:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ ՄԱԿ-ի 1984 թվականի դեկտեմբերի 10-ի (ուժի մեջ է մտել 1987 թվականի հունիսի 26-ին) կոնվենցիայի 16-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է իր իրավագրության ներքո գտնվող ցանկացած տարածքում կանխել դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ցանկացած դրսևորում:

Նույն դրույթներն ամրագրված են նաև Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին 1987 թվականի նոյեմբերի 26-ի եվրոպական կոնվենցիայում: Կոնվենցիայի դրույթների գործնական կիրառման համար ստեղծվել է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն՝ օժտված խորհրդատվական լիազորությունների լայն շրջանակով, որի հիմնական գործառույթը ազատությունից զրկված

անձանց խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ոչ դատական, կանխարգելիչ միջոցներով պաշտպանելն է:

Միջազգային մի շարք փաստաթղթերում ամրագրվեց, որ մարդու կյանքի իրավունքը բացարձակ իրավունք է և չի ուղեկցվում որևէ վերապահմամբ: 1983 թ. ապրիլի 28-ին ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 6 արձանագրության 1-ին հոդվածով ամրագրվեց, որ «Մահապատիժը վերացվում է: Ոչ մեկին չի կարելի մահապատժի դատապարտել կամ մահապատժի ենթարկել»: Սակայն, նույն արձանագրության 2-րդ հոդվածն անում էր վերապահում, որն էր՝ «Պետությունը կարող է իր օրենսդրության մեջ մահապատիժ նախատեսել պատերազմի ժամանակ կամ պատերազմի անխուսափելի սպառնալիքի դեպքում կատարված գործողությունների համար: Նման պատիժը կիրառվում է միայն օրենքով սահմանված դեպքերում և դրա դրույթներին համապատասխան: Պետությունը եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հաղորդում է այդ օրենսդրության համապատասխան դրույթները»:

Ի տարբերություն կոնվենցիայով սահմանված նշված բացառության ՀՀ Սահմանադրությունը բացառել է մահապատժի կիրառման որևէ հիմքի ամրագրում, այդ թվում՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Հետագայում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան մահապատժի վերացման հարցում ամրագրեց միանշանակ իրավական դիրքորոշում՝ «Բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին» իր թիվ 13 արձանագրությամբ:

Այս առումով համաձայն ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 17-ի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի» «Բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով»

ՍԴՈ-694 որոշմամբ ամրագրվել է, որ՝ «Սույն Արձանագրությունը հանդիսանում է փոխլրացնող գործոն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 15-րդ հոդվածի ամբողջական իրացման համար»: Այսինքն՝ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»:

Ներկայումս ավելի քան 100 պետության ներպետական օրենսդրությամբ մահապատիժը վերացված է:

Մահապատժի վերացումը ճիշտ է ոչ միայն նրա դաժան բնույթի տեսանկյունից, այլև նրա կիրառման հետ կապված այլ հանգամանքներով պայմանավորված:

Մասնավորապես մահապատժի կիրառումը առաջ է բերում անդառնալի հետևանքներ, անձի ֆիզիկական ոչնչացում, կորուստ, մահ,

մինչդեռ հայտնի են ոչ քիչ դեպքեր, երբ հետագայում՝ մահապատժի դատավճիռն ի կատար ածելուց հետո պարզվել է, որ տվյալ հանցագործությունը կատարել է ոչ թե այն անձը, ով դատապարտվել է մահապատժի, այլ մեկ ուրիշ անձ: Դրա վառ օրինակն էր սեքսուալ մարդասպան Չիկատիլոյի գործը, որի քննությանը պարզվեց, որ մինչև մի քանի տասնյակ սպանություններ կատարած սեքսուալ մարդասպանի բացահայտումը և պատասխանատվության ենթարկելը, վերջինիս կողմից կատարած սպանության համար մեղադրվել և մահապատժի էր դատապարտվել բոլորովին անմեղ անձ, և փաստորեն թույլ տրված դատական սխալն իր բնույթով անդառնալի կորստի էր հանգեցրել, իսկ նման օրինակները եզակի չեն:



ՄՈՒՇԵՂ ԱՐԱՄՅԱԼ

Ավան և Նոր Նորք վարչական
շրջանների դատախազի տեղակալ

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱԲ

Եվրոպական երկրների մեծամասնության քրեական օրենսգրքերում բացակայում է հափշտակություն հասկացությունը: Որպես ընդհանրական հասկացություն օգտագործվում է «գողություն» հասկացությունը: Ինչը հատուկ է Գերմանիայի, Շվեյցարիայի, Ավստրիայի, Շվեդիայի, Իսպանիայի և այլ երկրների քրեական օրենսգրքերի համար: Այս երկրների քրեական օրենսգրքերում գողությունը բնութագրվում է, որպես ուրիշի գույքի հափշտակություն, որը կատարվել է շահադիտական նպատակներով, ընդ որում գաղտնիության հատկանիշի մասին այստեղ չի նշվում ի տարբերություն ՀՀ-ն, ՌԴ-ն և ԱՊՀ այլ պետությունների քրեական օրենսգրքերի:

Գողությունը, կողոպուտը, ավազակությունը, յուրացումը կամ վատնումը, խարդախությունը մեծ թիվ են կազմում ոչ միայն մեր երկրում, այլև ինչպես ցույց են տալիս միջազգային կազմակերպությունների տվյալները նման պատկերը հատուկ է բոլոր ժամանակակից պետություններին:

Այժմ անդրադառնանք մի քանի արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ նախատեսված հափշտակության տեսակներին, ինչպես նաև դրանց միջև առկա նմանություններին ու տարբերություններին: Ռուսաստանի օրենսդրության մեջ հափշտակության ընդհանուր հասկացությունն ի հայտ եկավ բավականին ուշ՝ 20-րդ դարի սկզբին:

ՌԴ գործող քրեական օրենսգրքում հափշտակության հասկացությունը նախատեսված է քր. օր-ի 158-րդ հոդվածով, համաձայն որի՝ հափշտակություն է համարվում, շահադիտական նպատակով ուրիշի գույքի ապօրինի, անհատույց հափշտակությունը հանցավորի կամ այլ անձի օգտին, ի վնաս գույքի սեփա-

կանատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի: Պետք է նշել, որ ՌԴ քրեական օրենսգրքում հափշտակության հասկացությունը ամբողջությամբ չի նախատեսում հափշտակության բոլոր տեսակների հատկանիշները, այդ իսկ պատճառով այն հստակեցման կարիք ունի: Հափշտակության տեսակներն են՝ գողությունը, որը բնութագրվում է որպես զգալի չափով ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն, խարդախությունը՝ խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի հափշտակություն, յուրացումը կամ վատնումը՝ կողոպուտը, ավազակությունը, առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակությունը:

Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքը ընդունվել է 1999 թ-ին և գործողության մեջ է մտել 2001 թ-ից: Օրենսգրքի 8-րդ բաժինը կոչվում է «Սեփականության դեմ ուղղված հանցագործությունները և տնտեսական գործունեություն իրականացնելու կարգը» և սկսվում է 24-րդ գլխով, որը նվիրված է «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններին»²: Այս գլխով հափշտակությունը հասկացվում է որպես՝ շահադիտական նպատակով դիտավորյալ ուրիշի գույքի կամ գույքային իրավունքի ապօրինի, անհատույց հափշտակությունը, որը կատարվել է գողության, կողոպուտի, ավազակության, շորթման, խարդախության, պաշտոնեական դիրքի չարաշահման, յուրացման և վատնման կամ համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով: Այս հասկացության մեջ նշվում է մեղքի ձևը, այսինքն՝ նշվում դիտավորյալ հափշտակություն, սակայն կարծում ենք, որ այս մոտեցումը սխալ է, քանի որ հափշտակությունն արդեն իսկ ենթադրում է դիտավորություն, և անզգույշ հափշտակություն չի լինում, ուստի ավելորդ

1. Տե՛ս ՌԴ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածը:
2. Уголовный кодекс Республики Беларусь-<http://mvd.gov.by/main.aspx?guid=101163>.

անգամ դիտավորությունը հողվածում նշելն անհարկի ծանրաբեռնում է հողվածի դիսպոզիցիան: Այս տեսակետից ավելի ճիշտ կարելի է համարել ՌԴ Քր. օր-ում տեղ գտած «հափշտակություն» հասկացության ձևակերպումը, որում մեղքի ձևը չի նշվում:

Բելառուսի քր. օր-ով գողությունը բնորոշվում է որպես ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն³: Եթե համեմատենք ՀՀ քր. օր-ով նախատեսված գողության հողվածի հետ, ապա կարող ենք առանձնացնել հետևյալ նմանություններն ու տարբերությունները: Նմանությունը կայանում է նրանում, որ երկուսի համար էլ գաղտնիությունը համարվում է պարտադիր հատկանիշ՝ այսինքն օբյեկտիվ կողմը դրսևորվում է գաղտնի եղանակով, սակայն նմանության հետ մեկտեղ առկա է նաև տարբերություն, որը կայանում է նրանում, որ ի տարբերություն ՀՀ քր. օր-ի, որտեղ գողության հանցակազմում նշվում է նաև հափշտակության չափը, այսինքն ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունն է զգալի չափով, Բելառուսի քր. օր-ով գողության հանցակազմի մեջ չափի մասին ոչինչ չի նշվում:

Կողոպուտ է համարվում ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը⁴: Կարող է զուգորդվել նաև կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնությամբ կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքով: Այս հողվածը գրեթե կրկնում է ՌԴ և ՀՀ քր. օր-ով նախատեսված կողոպուտի հողվածները:

Ավազակություն է համարվում ուրիշի գույքի հափշտակության նպատակով կատարվող կյանքի կամ առողջության համար վտանգավոր՝ բռնության գործադրումը կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքը: Այստեղ կարելի նկատել, որ ի տարբերություն ՀՀ քր. օր-ի, ավազակության հանցակազմում բացակայում է հարձակում տերմինը: Եվ այս առումով Բելառուսի Հանրապետության օրենսդրի մոտեցումը ավելի առաջադիմական է:

Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքով ի տարբերություն ՀՀ քր. օր-ի՝ հափշտակության տեսակ է համարվում նաև շորթումը, որը բնորոշվում է որպես՝ տուժողի կամ նրա մերձավորների նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, իրենց պատկանող

գույքը ոչնչացնելու կամ վնասելու, անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ այլ տեղեկատվությունը, որոնք նրանք ցանկանում են գաղտնի պահել, հրապարակելու սպառնալիքով ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջը:

Խարդախության, յուրացման կամ վատնման հանցակազմերը ընդհանուր առմամբ համընկնում են ՀՀ քր օր-ով նախատեսված նույն հողվածների հետ:

Ուկրաինայի քր. օր-ի հատուկ մասը բաղկացած է 20 բաժիններից, որի 6-րդ բաժինը կոչվում է «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» (185-198-րդ հողվածներ): Ուկրաինայի քրեական օրենսգրքով ինչպես ՀՀ քրեական օրենսգրքում բացակայում է հափշտակության հասկացությունը: Հափշտակության տեսակներ են համարվում՝ ավազակությունը, խարդախությունը, գողությունը և կողոպուտը, յուրացումն ու վատնումը, հափշտակությունը՝ պաշտոնեական դիրքի չարաշահմամբ: Բելառուսի և ՌԴ քրեական օրենսգրքով այս հափշտակության տեսակները նախատեսված են անկախ այն հանգամանքից, թե ո՞ւմ սեփականությունն է հանդիսանում հափշտակված գույքը: Սակայն Ուկրաինայի քրեական օրենսգրքն այս տեսակետից ունի որոշակի առանձնահատկություն, որը կայանում է նրանում, որ այս նշված հափշտակության տեսակները վերաբերվում են միայն պետական և կոլեկտիվ սեփականության դեմ ուղղված հանցագործություններին: Մասնավոր սեփականության դեմ ուղղված հանցագործություններն իրենց մեջ ընդգրկում են միայն հափշտակության 4 տեսակ՝ գողությունը, կողոպուտը, ավազակությունը և խարդախությունը:

Գողությունն ու կողոպուտը բնորոշվում են որպես գույքի գաղտնի և բացահայտ հափշտակություն: Ավազակությունը բնորոշվում է որպես ուրիշի գույքը հափշտակելու նպատակով կատարված հարձակումը, որը զուգորդվում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա կիրառելու սպառնալիքով: Խարդախությունը բնորոշվում է որպես խաբեությամբ կամ վստահությունը

3. Տե՛ս 4.1 ԿԿ ՔԵ էջ 205:

4. Տե՛ս 4.1 ԿԿ ՔԵ էջ 206:

չարաշահելու եղանակով ուրիշի գույքի կամ գույքային իրավունքի հափշտակություն:

Ուզբեկստանի քրեական օրենսգրքի «Ուրիշի գույքի հափշտակություն» գլուխը, որն ընդգրկում է 164-169-րդ հոդվածները սկսվում է առավել վտանգավոր հափշտակության տեսակով. այն է՝ ավազակությանը և ավարտվում ավելի նվազ վտանգավոր տեսակով, այն է՝ գողությանը: Ուզբեկստանի Հանրապետության քր. օր-ում որպես հափշտակության տեսակներ նշվում են ավազակությունը, խարդախությունը, յուրացումը կամ վատնումը, շորթումը, գողությունը և կողոպուտը: Ավազակության հասկացությունը գրեթե չի տարբերվում ՌԴ քր օր-ով նախատեսված ավազակության հասկացությունից: Միակ տարբերությունը վերաբերում է ավազակության նպատակին. Ուզբեկստանի քր. օր-ով այն նախատեսված է եզակի թվով, այն է՝ «Հափշտակելու նպատակով»: Կողոպուտի հասկացությունը ամբողջությամբ համընկնում է ՀՀ և ՌԴ քր օր-ով նախատեսված կողոպուտի հասկացության հետ. այն է՝ ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն:

Լատվիայի քր. օր-քի 18-րդ գլուխը կոչվում է «Հանցավոր արարքներ՝ ուղղված սեփականության դեմ»: Այս գլուխը սկսվում է գողության 175-րդ հոդվածով, որը բնորոշվում է, որպես շարժական գույքի գաղտնի կամ բացահայտ հափշտակություն⁵:

Այս հասկացության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ, եթե ՀՀ, ՌԴ քր օր-ով նախատեսված գողության հանցակազմի համար պարտադիր հատկանիշ է գաղտնիությունը, ապա այստեղ գողությունը կարող է կատարվել ինչպես գաղտնի, այնպես էլ բացահայտ: Ակնառու է, որ «գողության առարկա» հասկացությունից հանվում է անշարժ գույքը: Սակայն առարկայի տակ հասկացվում են նաև թմրամիջոցները, հոգեմետ և թունավոր նյութերը, պայթուցիկ նյութերը, զենքը և զինամթերքը: Այս առարկաների հափշտակությունը դիտարկվում է, որպես սեփականության, այլ ոչ թե հասարակական անվտանգության կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն, ինչպես օրինակ՝ ՀՀ կամ ՌԴ քր օր-ով է: Բացահայտ հափշտակությունը համարվում է գողություն Լատվիայի օրենքով միայն այն

ժամանակ, եթե չի զուգորդվել բռնության կիրառմամբ, մինչդեռ ցանկացած տեսակի բռնության կիրառում բնորոշ է ավազակության հանցակազմին:

Անգլիայում սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կարգավորվում են 1968 թ. Ընդունված «Գողության մասին» օրենքով, 1971 թ. ընդունված «Դիտավորությամբ գույքին վնաս պատճառելու» մասին օրենքով և 1978 թ. ընդունված «Գողության» մասին օրենքով:

Գողությունից բացի Անգլիայում առանձնացնում են սեփականության դեմ ուղղված հանցագործությունների հետևյալ տեսակները՝ թալան, բերգլերի, խաբեությամբ գույքի ձեռք բերում, շորթում, գողոնի թաքցնում կամ պահում, ինչպես նաև գույքին տարբեր ձևերով վնաս պատճառելը: Այս հանցագործությունների համար պատասխանատվությունը նախատեսվում է 1971 թ-ի «Գողության մասին» օրենքով:

Առանձնացվում են գողության հետևյալ տեսակները՝ խաբեությամբ գույքի ձեռք բերում, անձին սեփականությունից ընդմիջտ զրկելու մտադրություն: Գողության կարևորագույն հատկանիշը կայանում է նրանում, որ այն կատարվում է առանց անձին ֆիզիկական վնաս պատճառելու: Սեփականության հասկացությունը Անգլիայի օրենսդրության մեջ ներառում է, ոչ միայն դրամը, այլև շարժական և անշարժ գույքը, պահանջի իրավունքը, ինչպես նաև այլ ոչ նյութական բարիքներ (օրինակ՝ հեղինակային իրավունքը): Տվյալ հանցագործությունների օբյեկտի այսպիսի լայն հասկացության շնորհիվ հնարավոր է դառնում պատասխանատվություն նախատեսել նաև հեղինակային իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների համար: Անգլիայի 1968թ.-ի օրենքով գողության համար նախատեսվում է պատասխանատվություն մինչև 10 տարվա ազատազրկման ձևով: Ընդ որում՝ դատարանը կարող է միևնույն պատիժ նշանակել ինչպես խոշոր չափերի, այնպես էլ ոչ մեծ չափերի գողության համար: Այս հարցի լուծումը ամբողջովին կախված է դատարանից:

Անգլիական քրեական օրենսդրությամբ ավազակությունը համարվում է հափշտակության այնպիսի տեսակ, որը զուգորդվում է

5. Տե՛ս Լատվիայի քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածը:

տուժողին ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման ենթարկելով: «Գողության» մասին 1968 թ-ի օրենքի համաձայն, անձը մեղադրվում է ավազակության կատարման մեջ, եթե ուրիշի գույքին տիրանալու նպատակով տուժողին պատճառվել է ֆիզիկական կամ հոգեբանական վնաս կամ գործադրվել է այդպիսի սպառնալիք: Հենց այդ հատկանիշով է ավազակությունը տարբերվում գողությունից: Ավազակության համար որպես առավելագույն պատիժ նախատեսված է ցմահ ազատազրկումը:

Բերգլերին անգլիական և ամերիկյան իրավունքի յուրահատուկ ինստիտուտներից է: Բերգլերին իր մեջ ներառում է 2 հասկացություն՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգություն և ոտնձգություն՝ ուղղված անձի դեմ: Մինչև 1968թ. բերգլերի հասկացությունն էր՝ ուրիշի բնակարանն ապօրինի մուտք գործելը, այնտեղ բռնաբարություն, գողություն կամ այլ հանցագործություններ կատարելու նպատակով: Ընդ որում, այս հանցագործության համար պատիժ նշանակելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, թե հանցագործությունը կատարվել է գիշերվա, թե ցերեկվա ժամին:

1968 թ. «Գողության» մասին օրենքն ընդունելուց հետո բերգլերի ինստիտուտի հասկացությունը փոխվում է: Անձը կարող է մեղադրվել բերգլերի համար, եթե նա

- ապօրինի մուտք է գործել բնակարան կամ այլ շինություն, այնտեղ գողություն կատարելու կամ այնտեղ գտնվող գույքը վնասելու նպատակով:
- ապօրինի մուտք է գործում բնակարան կամ այլ շինություն այնտեղ բռնաբարություն կատարելու նպատակով

Բերգլերին կարող է լինել ծանր և թեթև: Բերգլերին համարվում է ծանրացնող հանգամանքով կատարված, եթե անձի մոտ առկա են լինում զենք կամ այլ առարկա, որը կարող է ծանր վնաս հասցնել տուժողի կյանքին կամ առողջությանը: Առանց նշված ծանրացնող հանգամանքի կատարված բերգլերին համարվում է թեթև և պատժվում ազատազրկմամբ մինչև 14 տարի: Ծանրացնող հանգամանքով կատարված բերգլերին պատժվում է ցմահ ազատազրկմամբ:

Անգլիական իրավունքում գոյություն ունեն ուրիշի գույքին տիրանալու մի քանի ձև: Դրանցից է օրինակ՝ ուրիշի գույքին տիրանալը

անձին մոլորության մեջ գցելով, ինչպես նաև առկա է մեկ այլ նույնանման հանցակազմ, այն է՝ տուժողին մոլորության մեջ գցելու միջոցով դրամական օգուտ ստանալու նպատակի հետապնդումը:

Մինչև «Գողության» մասին օրենքի ընդունումը՝ անգլիական քրեական օրենսգրքում բացակայում էր շորթման հանցակազմը: Սակայն օրենքի ընդունման հետ մեկտեղ քրեական օրենսգրքում ավելացավ շորթումը, որպես առանձին հանցագործություն, որն իր մեջ ներառում էր հետևյալ հատկանիշները՝ 1) որևէ չհիմնավորված պահանջի ներկայացում, 2) պահանջն ուղեկցվում է սպառնալիքով, 3) շահույթի հետապնդում: Շորթումը պատժվում էր 14 տարի ազատազրկմամբ: Ընդ որում արարքը չի կարող որակվել, որպես շորթում, եթե հանցավորը համոզված է իր պահանջի հիմնավորվածության մեջ:

Բոլոր հարավամերիկյան նահանգների օրենսդրություններում առկա է հափշտակության միևնույն հասկացությունը, որն իր մեջ ներառում է հիմնական 3 հանցագործություն՝ գողություն, յուրացում և խարդախություն:

Չնայած հարավամերիկյան նահանգների օրենսդրություններում հափշտակության հասկացության առկայությանը, այս ինստիտուտը շարունակում է կառուցվել Անգլիայում գործող գողության ինստիտուտի հիման վրա: ԱՄՆ-ի քրեական օրենսգրքը պարունակում է բերգլերի հասկացության հետևյալ տարբերակը՝ անձը մեղադրվում է բերգլերի կատարման մեջ, եթե նա մուտք է գործում շենք կամ շինություն՝ այնտեղ հանցագործություն կատարելու նպատակով, եթե այդ ժամանակ տվյալ շենքը կամ շինությունը փակ է եղել, ինչպես նաև, եթե հանցավորը չունեի այդ տարածք մուտք գործելու հնարավորություն: Ընդ որում հանցագործություն կատարելու նպատակը կարող է տարբեր լինել՝ սպանություն, բռնաբարություն և այլն:

Այսպիսով ամփոփելով կարելի է հանգել այն եզրակացության, որ ՌԴ գործող քրեական օրենսգրքում հափշտակության հասկացությունը ամբողջությամբ չի նախատեսում հափշտակության բոլոր տեսակների հատկանիշները, այդ իսկ պատճառով այն հստակեցման կարիք ունի: Ինչպես նաև Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքով հափշտակության

հասկացության մեջ նշվում է մեղքի ձևը, այսինքն՝ նշվում է դիտավորյալ հափշտակություն, սակայն կարծում եմ, որ այս մոտեցումը սխալ է, քանի որ հափշտակությունն արդեն իսկ ենթադրում է դիտավորություն, և անզգույշ հափշտակություն չի լինում, ուստի ավելորդ

անգամ դիտավորությունը հոդվածում նշելն անհարկի ծանրաբեռնում է հոդվածի դիսպոզիցիան: Այս տեսակետից ավելի ճիշտ է ՌԴ Քր. օր-ում տեղ գտած «հափշտակություն» հասկացության ձևակերպումը, որում մեղքի ձևը չի նշվում:



ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

«ՎՆԱՍ» ԷԶՐՈՒՅԹԻ ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԳՐԱՎԱՌՈՒԻՆ ՎՆԱՍ ԴԱՏՃԱՌԵԼԸ ՀԱՆՅԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀՀ քրեական օրենսգրքի 184.1 հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ գրավ դրված գույքը դիտավորությամբ ոչնչացնելը, թաքցնելը, օտարելը, վնասելը կամ որևէ այլ կերպ ոչ պիտանի դարձնելը, որով խոչընդոտվել է գրավառուի գույքային իրավունքի իրականացումը, և նրան պատճառվել է Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկը գերազանցող գումարի չափով վնաս:

Ինչպես կասեին քրեագետները գործունենք նյութական հանցակազմի հետ, քանզի որպեսզի ձևավորվի հանցակազմ, պետք է գրավառուի համար առաջանա որոշակի հետևանք, այն է՝ վնաս: Հարց է առաջանում՝ այս հարաբերություններում ինչ տեսակ վնասի մասին է խոսում օրենսդիրը: Քննարկվող հանցակազմում խոսքը գնում է գրավառուին պատճառված վնասի մասին: Իհարկե գրավառուին պատճառված վնասը կարող է առաջանալ նաև գրավի առարկան վնասելով, սակայն այս հարաբերություններում օրենսդիրը պաշտպանում է ոչ թե գույքը, այլ գրավառուին: Պետք է տարբերել գույքային վնասը գրավառուին պատճառված վնասից: Գույքային վնաս եզրույթը հանդիպում է քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներում (քր. օր. 184-րդ հոդված, 185-րդ հոդված, 217-րդ հոդված, 276-րդ հոդված, 308-րդ հոդված և այլն): Ճիշտ է քննարկվող հանցակազմում խոսվում է գույքը ոչնչացնելու կամ վնասելու մասին, բայց դրանք այս հարաբերություններում ոչ թե ինքնին հետևանքն են, այլ զուտ օբյեկտիվ կողմի դրսևորումներ, որոնք բերում են հետևանքի: Հետևաբար հարց է առաջանում ինչ վնասի մասին է խոսում օրենսդիրը: Կարծում ենք՝ այս հարաբերություններում վնաս եզրույթի հստակեցման տեսանկյունից «գնդակը» գտնվում է քաղաքացիական իրավունքի դաշտում:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի

17-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ վնասներ են համարվում իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կատանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

Այսինքն՝ օրենսդիրը նախատեսել է վնասի երկու հիմնական տեսակ՝

1. իրական վնաս,
2. բաց թողնված օգուտ:

Իրական վնասը օրենսդիրը բաժանում է երկու մասի՝ փաստացի ձևավորված վնաս՝ գույքի կորստի կամ վնասվածքի տեսքով, և այն ծախսերը, որոնք անձը կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքները վերականգնելու համար: Ինչ վերաբերում է այս կարգավորմանը՝ քննարկվող իրավահարաբերության մասով, ապա պետք է նշել, որ գույքի կորուստ կարելի է դիտարկել գրավի դիմաց տրված փոխառությունը, որը գրավառուի կողմից չի վերադարձվել գրավառուին: Իսկ այն ծախսերը, որոնք գրավառուն կատարել է կամ պետք է կատարի իր խախտված իրավունքները վերականգնելու համար (դատական ծախսեր, պետական տուրք և այլն), նույնպես կարելի է դիտարկել որպես իրական վնաս:

Ինչ վերաբերում է բաց թողնված օգուտի տեսքով պատճառված վնասի հատուցման հարցին, ապա հարկ է ընդգծել, որ վճռաբեկ դատարանը նշել է, որ բաց թողած օգուտի առկայությունը, այսինքն՝ անձի իրավունքի չխախտման պարագայում եկամուտի ստացման իրական հնարավորությունը որոշելը, յուրաքանչյուր գործով ինքնուրույն գնահատման ենթակա հարց է, որի ընթացքում պետք է հաշվի առնվեն տվյալ գործի առանձ-

● ՕՐԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 119 2020

նահատկությունները: Ընդ որում, բաց թողած օգուտի առկայությունը որոշելու համար նախ և առաջ պետք է հաշվի առնվի մինչև իրավունքի խախտումը քաղաքացիական շրջանառությունում համապատասխան գույքի ունեցած կարգավիճակը կամ սեփականատիրոջ իրական մտադրության և հնարավորության միաժամանակյա առկայությունն այդ գույքի տնօրինման եղանակների առնչությամբ (այդպիսին կարող է լինել, օրինակ՝ իրավունքը խախտված անձի կողմից այլ անձանց ուղարկված համապատասխան օֆերտան) (տես՝ Ջուլիետա Պետրոսյան, Կարեն Դավթյան և Արման Դավթյան ընդդեմ Թևոս Սաֆարյանի՝ պատճառված վնասների հատուցման պահանջի մասին, թիվ 3-691(ՎԴ) գործով Վճռաբեկ դատարանի 30.07.2007թ. որոշումը)¹:

Սակայն այս ամենը վնասի ինստիտուտի մասին քաղաքացիական իրավունքի ընդհանրական բնորոշումներն են, որոնք պետք է տեղայնացնել քննարկվող իրավահարաբերության համատեքստում: Խնդիրը կայանում է նրանում, որ գրավի պարտավորությունները հանդիսանում են լրացուցիչ պարտավորություն և ուղեկցում են առաջնային կամ հիմնական պարտավորության: Վերջինս մեր իրականության մեջ դրսևորվում է առավելապես դրամական փոխառությունների տեսքով: Իսկ պրակտիկայում փոխառությունները հատկապես մասնագիտացված սուբյեկտների (բանկեր, վարկային կազմակերպություններ, գրավատներ և այլն) կողմից տրվող փոխառությունները ուղեկցվում են տարատեսակ ֆինանսական պարտավորություններով: Մասնավորապես՝ այդ պարտավորություններում կողմերի միջև սովորաբար ձևավորվում են՝

1. պարտավորությունների չկատարման համար նախատեսվող տուժանքներ (տուգանքներ, տույժեր),
2. դրամական պարտավորությունների խախտման համար գանձվող տոկոսներ,
3. մատուցվող ծառայությունների հա-

մար նախօրոք սահմանված տարատեսակ վճարներ:

Տուժանք: Տուժանքը պարտավորությունների խախտման համար կիրառվող հիմնական պատասխանատվության միջոցն է և դա բացատրվում է առաջին հերթին կիրառման հեշտությամբ: Ինչպես նշում են Մ. Ի. Բռագինսկին և Վ. Վ. Վիտրյանսկին՝ տուժանքին բնորոշ են հետևյալ չափանիշները՝ պատասխանատվության չափի նախօրոք կանխորոշվածությունը, իրավախախտման փաստի համար (առանց վնասների առկայությունն ապացուցելու²) գանձելու հնարավորությունը, իրենց հայեցողությամբ տուժանք նախատեսելու կամ օրենքով սահմանված չափն ավելացնելու իրավահարաբերության մասնակիցներին վերապահված հնարավորություն³:

Այս առանձնահատկությունների մեջ ամենակարևորը այն է, որ տուժանքի կիրառման համար բավարար է ապացուցել միայն օրենքով արգելված արարքի կատարման փաստը: Այդ արարքով առաջացած հետևանքներին անդրադառնալու անհրաժեշտություն չկա⁴:

«Քաղ. օր. 369-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել: Ինչպես բխում է տուժանքի օրենսդրական սահմանումից այն կարող է լինել և՛ օրենսդրական, և՛ պայմանագրային:

Ինչպես նշում է պրոֆեսոր Ս. Կ. Բարսեղյանը իր դոկտորական ատենախոսությունում՝ կիրառման առաձնահատկություններով պայմանավորված, որպես իրավախախտման համար նախատեսված սանկցիա⁵, տուժանքը նման է վնասների փոխհատուցմանը, բայց իր

1. Տես «Վճռաբեկ դատարանի 13.02.2009թվ. թիվ ՀՔԴ 3/0016/02/08 որոշումը:

2. Այս երկրորդ չափանիշն ինքնին սահմանված է «Քաղ. օր. 369-րդ հոդվածի առաջին մասում՝ տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել:

3. Տես Брагинский М.И., Витрянский В. В. Договорное право, Общие положения, М., 1997, էջ 387:

4. Տես Иоффе О. С. Обязательственное право, М., 1975, էջ 107:

5. Ամենինի չցանկանալով թերագնահատել քաղաքացիական իրավունքի դոկտրինայում ձևավորված տուժանքի՝ որ-

բնույթով, ներգործության եղանակով էապես տարբերվում է վնասների հատուցումից⁶: Ինչպես շարունակում է պրոֆեսորը՝ ի տարբերություն վնասների հատուցման, որը, որպես պատասխանատվության ընդհանուր միջոց, կիրառվում է բոլոր իրավախախտումների դեպքում, տուժանքը համարվում է պատասխանատվության հատուկ միջոց, որը կիրառվում է միայն իրավախախտումների դեպքում, երբ այդ նպատակի համար հատկապես նախատեսված է օրենքով կամ պայմանագրով, երկրորդ, անկախ նրանից իրավախախտմամբ վնաս է պատճառվել թե, ոչ, երրորդ, եթե վնասների հատուցումը կոչված է ապահովելու հավասարաբեք փոխհատուցում, ապա տուժանքի չափը կարող է գերազանցել առաջացած վնասները (տուգանային տուժանք) և փոխհատուցել վնասներն ամբողջությամբ կամ մասնակիորեն: Վերջապես, եթե վնասների չափը կախված չէ կողմերի ցանկությունից, իրավախախտողի մեղավորության աստիճանից, ապա տուժանքի չափը կարող է փոփոխվել և կողմերի համաձայնությամբ (քաղ. օր. 371 հոդված) և դատարանի որոշմամբ (քաղ. օր. 372 հոդված):

Օ. Ս. Իոֆֆեն նշում է, որ տուժանքը տարբերվում է վնասների հատուցումից հետևյալ առանձնահատկություններով՝

1. Վնասները գանձնվում են միայն այն դեպքում, երբ իրականում պատճառված են, մինչդեռ չնայած իրավախախտման առկայությանը, վնասներ կարող են չառաջանալ: Տուժանքի բացակայության դեպքում նման իրավախախտումներ թույլ տվող անձանց համար բացասական հետևանքներ չեն առաջանում: Որպեսզի այդպիսի հետևանքներ առաջանան, նպատակահարմար է պարտավորություններն ապահովել հատուկ ապահովման միջոցներով, ինչին էլ միտված է տուժանքի պայմանը:

2. Վնասների գանձման համար անհրաժեշտ է ապացուցել ոչ միայն դրանց չափը, այլև

այն, որ իրավագոր անձը ձեռք է առել բոլոր անհրաժեշտ միջոցները դրանք վերացնելու համար: Գործնականում դա իրավագոր անձին դնում է դժվարին դրության մեջ և առանձին դեպքերում կարող է հանգեցնել փաստացի վնաս պատճառողի պատասխանատվությունից ազատելուն: Այդպիսի հետևանքներից խուսափելու համար ցանկալի է իրավագոր անձի համար ապահովել թեկուզև ճշգրիտ հաստատագրված չափի փոխհատուցման գումար: Տուժանքը ծառայում է նաև այս նպատակին:

3. Վնասներն անորոշ մեծություն են, դրանք ձևավորվում են միայն իրավախախտումից հետո, այն դեպքում, երբ տուգանքը ճշտվել հաստատագրված, վաղորոք սահմանված և պարտավորության երկու մասանկիցներին վաղորոք հայտնի մեծություն է⁷:

Ինչպես իրավագիտորեն նկատում են Մ. Ի. Բոագինսկին և Վ. Վ. Վիտրյանսկին՝ իրավախախտողի տեսանկյունից վնասների հատուցման կիրառությունը նշանակում է իրավախախտմամբ պատճառված վնասների վնասների լրիվ փոխհատուցում, որը, բնականաբար, պահանջում է ապացուցում, իսկ տուժանքի գանձումն իրավախախտման համար պատասխանատվության անխուսափելիություն, որը կիրառվում է անկախ նրանից, վնասների պատճառման փաստը կապացուցվի, թե ոչ⁸:

Ինչպես տեսնում ենք՝ քաղաքացիաիրավական դոկտրինան միասնական է տուժանքի և վնասների հարաբերակցության մասով: Չնայած ընդգծված մի շարք նմանություններին այս երկու ինստիտուտները ունեն էական տարբերություններ: Իսկ այն հանգամանքը, որ տուժանքը վերը պարզաբանված մի շարք դեպքերում ուղղակիորեն հանդիսանում է վնասների փոխարինման արդյունավետ կառուցակարգ, ինքնին արդեն վկայում է այն մասին, որ այդ երկու ինստիտուտները միմյանց փոխլրացնող, դիալեկտիկական կապի մեջ գտնվող, ինքնուրույն ինստի-

պես պարտավորության կատարման ապահովման միջոց, թե իրավախախտման համար պատասխանատվության միջոց դիսկուրսին, չենք ցանկանում այս աշխատանքում անդրադարձ կատարել դրան, քանզի քննարկվող իրավահարաբերությունների մասով այն անպտուղ է:

6. Տե՛ս **Քարտեղյան Տ. Կ.**, Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը, ԵՊՀ հրտ, Երևան, 2006թ., էջ 112:

7. Տե՛ս **Иоффе О. С.** Обязательственное право, М., 1975, էջ 159-160:

8. Տե՛ս **Брагинский М. И.**, Витрянский В. В. նույն տեղում, էջ 538:

տուտներ են⁹: Հետևաբար, քննարկվող իրավա-
հարաբերությունների մասով ևս չի կարելի
դրանք նույնացնել կամ դիտարկել մաս-ամբողջ
հարաբերակցության մեջ:

Մեր վերոնշյալ հետևությանը լրացուցիչ
հիմնավորում է հանդիսանում նաև տուժանքի
ինստիտուտին բնորոշ և քաղ. օր. 372-րդ
հոդվածում նախատեսված տուժանքի առա-
վելագույն չափը և այն պակասացնելու կառու-
ցակարգը¹⁰: Ըստ հոդվածի երկրորդ մասի՝
դատարանը կամ ֆինանսական համակարգի
հաշտարարը պարտապանի պահանջով
պակասեցնում է վճարման ենթակա կամ
վճարված պայմանագրով որոշված տուժանքի
չափը, եթե տուժանքն ակնհայտորեն անհա-
մաչափ է պարտավորության խախտման հե-
տևանքներին:

Պատկերացնենք մի իրավիճակ. վա-
րույթն իրականացնող մարմինը քրեական
գործ է հարուցում քր. օր. 184.1 հոդվածի հատ-
կանիշներով: Որպես գրավառուին պատճառված
վնաս հաշվարկվում է պարտավորությունների
չկատարման արդյունքում նախատեսված
տուժանքները, դրա հաշվին ձևավորվում է
հոդվածում նշված 4 միլիոն (առաջին մաս) կամ
10 միլիոն (երկրորդ մաս) ՀՀ դրամի չափով
վնասի շեմը և անձը ենթարկվում է քրեական
պատասխանատվության: Հետագայում նույն
վեճի շուրջ քաղաքացիական դատավարության
արդյունքում դատարանը գտնում է, որ
գանձման ենթակա տուժանքը ակնհայտորեն
անհամաչափ է պարտավորության խախտման
հետևանքներին և պակասեցնում է տուժանքի
չափը: Ստացվում է մի իրավիճակ, երբ ան-
ձը քրեական պատասխանատվության է են-
թարկվել մի վնասի համար, որն այլևս գոյություն
չունի: Կարծում ենք, որ տուժանքի չափը պա-

կասեցնելու օրենսդրական կառուցակարգը
ուղղակիորեն բացառում է քննարկվող հա-
րաբերություններում տուժանքը որպես գրա-
վառուին պատճառված վնաս դիտարկելու հնա-
րավորությունը:

Տոկոսներ: Դրամական միջոցների փոխա-
ռության համար մեծամասամբ սուբյեկտները
ակնկալում են եկամուտների ստացում՝ որո-
շակի տոկոսների տեսքով: Այս ինստիտուտը
հետապնդում է պարտականությունները բա-
րեխղճորեն կատարողների իրավունքներն
ու շահերը իրենց կոնտրագենտների ան-
օրինական, հաճախ նաև խարդախ գործո-
ղություններից պաշտպանվելու և նրանց
պատճառած կորուստները փոխհատուցելու
նպատակ¹¹: Այդ պատասխանատվությունը
կիրառվում է ուրիշի դրամական միջոցները
ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց
խուսափելու, վճարման այլ կետանցմամբ
դրանք օգտագործելու կամ այլ անձի հաշվին
անհիմն ստանալու կամ խնայելու դեպքում
տոկոսների գանձմամբ: Այդ տոկոսներն
անհրաժեշտ է տարբերել ինչպես դրամական
միջոցների օրինաչափ օգտագործման հա-
մար գանձվող տոկոսներից, այնպես էլ օրենս-
դրական տուժանքի համար սահմանված
տոկոսներից: Օրինակ՝ քաղ. օր. 879-րդ
հոդվածի համաձայն՝ փոխատուն իրավունք
ունի փոխառության գումարից տոկոսներ
ստանալ փոխառության պայմանագրով սահ-
մանված չափով և հաշվարկման կարգով:
Այդ տոկոսները, ինչպես բնորոշում է Վ. Վ.
Վիտրյանսկին, տրամադրված դրամական
միջոցներն օրինաչափ օգտագործելու համար
օրենքով կամ պայմանագրով սահմանված
վճար են¹²:

Ինչ վերաբերվում է քաղ. օր. 411-րդ

9. Այդ կապի վառ ապացույցն է հանդիսանում նաև տուժանքի և վնասների հարաբերակցությունը քաղ. օր. 410-րդ
հոդվածում, որի 1-ին մասը սահմանում է՝ եթե պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար
սահմանված է տուժանք, ապա վնասները հատուցվում են տուժանքով չձածկված մասով: Օրենքով կամ պայմանագրով
կարող են նախատեսվել դեպքեր, երբ՝ 1) թույլատրվում է բռնագանձել միայն տուժանքը, սակայն ոչ՝ վնասները: 2)
վնասները կարող են բռնագանձվել լրիվ գումարով՝ չհաշված տուժանքը: 3) պարտատիրոջ ընտրությամբ կարող են
բռնագանձվել կա՛մ տուժանքը, կա՛մ վնասները: Այս հոդվածի կարգավորումից բխեցվում է տուժանքի 4 տեսակ՝
հաշվարկային, բացառիկ, տուգանային և այլընտրանքային:

10. Պետք է նկատել, որ այս կառուցակարգը նորույթ չէ. այն միշտ ուղեկցել է տուժանքի ինստիտուտին և, ըստ էության,
հանդիսանում է պարտավորության՝ անբարեխիղճ կողմի չարաշահումները զսպելու գործուն միջոց: Այն նախատեսված
է եղել նաև 1964թ. քաղ. օր.-ով, որի 219-րդ հոդվածի համաձայն՝ դատարանն իրավունք ուներ տուժանքը (տուգանքը,
տույժը) պակասեցնել, եթե վճարման ենթակա տուժանքը պարտատիրոջ վնասների համեմատությամբ չափազանց
մեծ էր:

11. Տե՛ս Брагинский М.И., Витрянский В. В. նույն տեղում, էջ 547:

12. Տե՛ս Витрянский В. В., Проценты за пользование чужими денежными средствами// Хозяйство и право, 1998, N 12

հողվածով նախատեսված տոկոսներին, ապա քաղաքացիական իրավունքի թե՛ դոկտրինայում, թե՛ պրակտիկայում այդ մասով իրավաբանները միասնական չեն: Այսպես՝ ՌԴ քաղ. օր. մեկնաբանություններում իրավաբանների մի մասը գտնում է, որ դրանք, ըստ էության, դրամի օգտագործման համար սովորական վճար են, մյուսները դրանք դիտարկում են որպես դրամական պարտավորությունների չկատարման համար հատուկ սանկցիա¹³: Տարեկան տոկոսները պարտապանին պատկանող դրամական միջոցները օգտագործելու համար վճար են համարում նաև Մ. Գ. Ռոզենբերգը¹⁴ և Ե. Ա. Սուխանովը¹⁵:

Ն. Գ. Վիլկովան տոկոսները համարում է դրամական եկամուտներ, որը պարտապանը ստանում է պարտատիրոջ դրամական միջոցներն ապօրինի խնայելու կամ օգտագործելու հետևանքով: Տոկոսները գանձելու համար հիմք են ծառայում պարտապանի հակաօրինական գործողությունները, որոնք դրսևորվում են իր կողմից խնայված դրամական միջոցներից անհիմն եկամուտներ ստանալով¹⁶:

Այլ հեղինակներ գտնում են, որ ուրիշի դրամական միջոցները անօրինական օգտագործելու համար գանձվող տոկոսները համարվում են օրենսդրական տուժանք, և հաշվի առնելով, դրանց բնույթը, եզրակացնում են, որ դրանք գանձելիս, կարելի է կիրառել տուժանքը պակասեցնելու կանոնները¹⁷:

Մեր կարծիքով, քննարկվող ինստիտուտը խնդիր ունի փոխհատուցել պարտատիրոջ այն անհարամարությունները, որոնք նրան պատճառվել են՝ համապատասխան դրամական միջոցներից օգտվելու հնարավորությունից զրկելով: Կարծում ենք՝ տոկոսները, որոնք անձը պետք է ստանար, սակայն չի ստացել, ամբողջությամբ կարելի է դիտարկել որպես բաց թողնված օգուտ: Հետևաբար՝ քննարկվող հանցակազմում վսասը որոշակիացնելիս

պետք է ներառել նաև դրանք:

Տարատեսակ վճարներ: Գրավային հարաբերություններում, երբ որպես գրավառու և միևնույն ժամանակ վարկատու հանդես է գալիս մասնագիտացված սուբյեկտը (բանկ, վարկային կազմակերպություն), շատ հաճախ հաճախորդների համար սահմանվում են տարատեսակ վճարներ: Այդ վճարները նախատեսվում են տարբեր ծառայությունների մատուցման համար: Պրակտիկայում այդպիսի վճարներ են հանդիսանում են կանխիկացման, սպասարկման և այլ ծառայությունների վճարները: Այդ վճարները, որպես կանոն, նորմատիվ իրավական հիմքեր չունեն: Դրանք կարգավորվում են կամ կազմակերպությունների կանոնադրություններով և ներքին անհատական ակտերով, կամ պայմանագրով, կամ գործարար շրջանառության սովորույթներով: Սակայն մի բան ակնհայտ է՝ կոնտրագենտը ի սզկբանե տեղեկացվում է դրանց առկայության և պայմանների մասին և պայմանագիր կնքելիս իր վրա վերցնում է պարտականություն: Բնականաբար, երբ գրավառուի կողմից մատուցվում են նմանատիպ ծառայություններ և հատուցում չի լինում, գործ ունենք վերջինիս պատճառված վնասի հետ: Հետևաբար քննարկվող հանցակազմի տեսանկյունից այդ վճարները ևս պետք է դիտարկել որպես վնաս:

Մեր կողմից, վերլուծության ենթարկվեց գրավային հարաբերություններում գրավառուին սովորաբար պատճառվող վնասները: Ընդ որում, այդ վնասները ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել՝ կախված մասնավոր իրավահարաբերությունների փոփոխման հետ:

Քննարկվող հանցակազմի որակման տեսանկյունից որքան կարևոր է վնասի շրջանակի հստակեցումը՝ այսինքն՝ թե ինչ է մտնում վնասի մեջ, նույնքան էլ այդ վնասի սահմանները: Խնդիրը կայանում է նրանում, որ վնասի մեջ կան ծախսեր, որոնք հստակ և ստատիկ են (օրինակ՝ իրական վնասը), բայց

էջ 28:

13. Сѣн Комментарий к гражданскому кодексу РФ, части первой, постатейный, М, 1998, էջ 644:

14. Сѣн Комментарий к гражданскому кодексу РФ, , М, 1995, էջ 12-113:

15. Сѣн Гражданское пражо, Ж 2-х т, Т 1, Под ред. Е. А. Суханова, Автор главы Е. А. Суханов, էջ 456-457:

16. Сѣн **Вилкова Н. Г.**, Проценты годовые по денежным обязательствам из договора внешнеторговой купли-продажи, Материалы секции права ТПП СССР, вип. 34, М, 1993, էջ 57-59:

17. Сѣн Гражданское право, Под ред. А. Г. Калпина, А. И. Масляева, Ч 1, М. 1997 էջ՝ 454, Попов А. Ответственность за не исполнение денежного обязательства// Хозяйство и право, 1997, N 8, էջ 79, **Лавров Д. Г.** Денежные обязательства в российском гражданском праве, СПб, 2001, էջ 127:

կան նաև վնասներ, որոնք փոփոխական են և ժամանակի ընթացքում կարող են ավելանալ (օրինակ՝ տոկոսները): Պատկերացնենք մի իրավիճակ. վարույթն իրականացնող մարմինը քրեական գործ է հարուցում գրավառուին վնաս պատճառելու հանցակազմով: Այդ փուլում վնասը կազմում է 5 միլիոն ՀՀ դրամ: Քրեական գործի քննության ընթացքում ավելանում է նաև ժամկետանց տոկոսներ ևս 1 միլիոն ՀՀ դրամի չափով: Կարծում ենք, որ այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է վերաորակի արարքը, առավել ևս, որ ունենք հանցանքի երկրորդ մասի շեմ՝ 10 միլիոն ՀՀ դրամ: Մասնավոր հարաբերություններում այդ վնասները կարող են շատ ավելին լինել: Ընդ որում չի բացառվում, որ գրավառուն կարողանա ամբողջությամբ հիմնավորել և ետ

վերադաձնել այդ վնասները քաղաքացիական դատավարության կարգով: Սակայն, արդյոք, վնասի այդ ամբողջ չափը պետք է դրվի արարքի քրեաիրավական որակման հիմքում: Կարծում ենք, որ ոչ: Արարքի քրեաիրավական որակման տեսանկյունից վնասի չափը պետք է սահմանափակվի գրավի առարկայի չափով: Բանն այն է, գրավառուին վնաս է պատճառվում՝ ոտնձգելով գրավի առարկան: Այլ կերպ ասած, սույն հանցակազմով պաշտպանվում է, ոչ թե գրավառուին պատճառված ցանկացած վնաս, այլ այն վնասը, որն ապահովված էր գրավով: Հետևաբար, անկախ գրավառուին պատճառված քաղաքացիաիրավական վնասի չափից, քրեաիրավական տեսանկյունից վնասի հաշվարկը սահմանափակվում է գրավի առարկայով:



ԶԱՐՈՒՎՈՒ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հ պետական կառավարման ակադեմիայի վերապատրաստման և որակավորման բարձրացման բաժնի դասախոս, «Լիգա Ինվեսթիգեյշն» իրավաբանական ընկերության տնօրեն և գլխավոր իրավաբան

ՆԵՐԱՆՁՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՈՈՒՊՅՈՒՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏՃԱՌ

«Վայ նրանց, որ գինի խմելու համար զորավոր են, իսկ կաշառքի համար ամբարիշտին կարդարացնեն և արդարին իր իրավունքից կզրկեն» (Աստվածաշունչ, Եսայի 5:22), ինչպես նաև՝ «անիծյալ է նա, որ անմեղ մարդուն մեռցնելու համար կաշառք կվերցնի և անիծյալ է նա, որ այս օրենքի բոլոր խոսքերը չի կատարի» (Աստվածաշունչ, Երկրորդ օրինաց 27:25):

Մեր դասավանդման պրակտիկայում (ՀՀ պետական կառավարման ակադեմիայում՝ 2015-2019 թթ. պետական աշխատակիցների համար անցկացված կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ վերապատրաստումներ), դասընթացի ժամանակ, երբ հիշատակեցինք Աստվածաշնչյան վերոգրյալ դրույթը (որպես նախաբան ցույց տալու համար, թե ինչ վաղ ժամանակներից է կոռուպցիան ուղեկցում մարդկությանը), դասընթացի մասնակիցներից մեկը բավական մտահոգված և փոքր ինչ ահաբեկված հարցրեց. «Հաստատ նման դրույթ կամ գրված», մեկ այլ մասնակից էլ հարցրեց. «Իսկ կաշառք տվողի համար կամ նման անե՞ծք» (և այլ նմանաբնույթ հարցեր ամեն անգամ մեզ տրվում էր տարբեր մասնակիցների կողմից դասընթացների շարքի այս հատվածում):

Կարծես թե, այդ հարցերը պատահական չտրվեցին. մեկն ուզում էր համոզվել, արդյոք նման պատիժ կա սահմանված, իսկ մյուս մասնակիցը (ով ամենայն հավանականությամբ իր կյանքի ընթացքում առնչվել էր կաշառք տալու հետ) փորձում էր հասկանալ իր գործած արարքին վերաբերում է այդ պատիժը, թե ոչ: Ընդգծենք, որ նշված տողերի մասին հիշատակեցինք ընդհամենը մեկ րոպե, իսկ մնացած մոտ երկու ժամը ներկայացնում էինք կոռուպցիան իրավական հարթությունում, սակայն զարմանալին այն

էր, որ իրենցից շատերի մեջ հետաքրքրություն և անհանգստություն առաջացնում էր Աստվածաշնչում նշված հենց այդ կետը: Անգամ դասընթացի ավարտից հետո խնդրեցին տրամադրել ասվածի հղումը, որպեսզի համոզվեն դրանում, կամ, գուցե, նրա համար, որ իրենց մեջ որոշեն կոռուպցիայի հետ առնչվելիս ինչ քաղաքականություն որդեգրել հետագայում:

Վերապատրաստումների ընթացքում հետազոտելով (զրույցներ, հարցազրույցներ) պետական աշխատակիցների վերաբերմունքը կոռուպցիոն վարքագծի վերաբերյալ՝ պարզեցինք, որ **երբեմն** կոռուպցիայի դեմ պայքարելու համար այդքան ի զորու չեն իրավական դրույթները, բազմազան և բազմապիսի օրենքներն օգնելու, որքան հակակոռուպցիոն ազդակներ պարունակող ենթագիտակցության և (կամ) գիտակցության վրա ազդեցություն ունեցող գործիքակազմը: Վերջինս վերոնշյալ օրինակում խոսքն էր, որը հասցվել էր տվյալ անձի արժեքային համակարգի ճիշտ նշանակետին: Ներկայացված իրավիճակում կարող ենք արձանագրել, որ գոնե այդ պահին իրենց մեջ ինչ-որ մի բան փոխվեց, ամեն դեպքում ավելի շատ, քան երբ ներկայացնում էինք կոռուպցիայի վերաբերյալ օրենսդրությունը:

Կարծում ենք, որ **որոշ դեպքերում** կոռուպցիայի դեմ պայքարի համար իրականացվող անձի ենթագիտակցության վրա ներգործող ազդեցության մեխանիզմները կարող են ավելի ազդեցիկ գործել, քան կոռուպցիայի դեմ պայքարի համար իրականացվող օրենսդրական կարգավորումները: Ավելի կոնկրետ ասված՝ կոռուպցիայի դեմ պայքարը պետք է սկսել հաղթահարել «կոռուպցիայի ծննդավայրից»՝ այսինքն անձի հոգեկանի կառուցվածքի առանձնահատկություններից,

• ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 119 2020

հետո նոր «կոռուպցիայի ապրելավայրից»՝ այսինքն՝ իրավական, տնտեսական և այլ գործոններից: Իհարկե, անձի հոգեկանի առանձնահատկությունները սուբյեկտիվ են, քանի որ յուրաքանչյուր անձ ունի անհատական հոգեբանություն, ներանձնային ուրույն խնդիրներ, ուստիև կարևոր է նշել նաև, որ յուրաքանչյուրի ենթագիտակցության վրա ազդեցություն կարող է թողնել տարբեր իրողություններ, դրանք չեն կարող լինել նույնը բոլորի համար, բնականաբար անձի ենթագիտակցության վրա ազդեցություն ունեցող գործիքները ևս պետք է կրեն սուբյեկտիվ բնույթ՝ լինեն տարբեր և անհատական: Վերջիններս կարիք ունեն բացահայտման և ուսումնասիրության, որը հանդիսանում է քրեաբանության (կրիմինալոգիայի) ուսումնասիրության ոլորտ, քանի որ այն նախ ուսումնասիրում է հանցագործության (կոռուպցիոն հանցագործությունների) դրդապատճառ և ըստ դրա՝ կանխարգելում:

Այսպես՝ նախ պետք է գտնել անձի հոգեկանում թողնված, պայմանական ասված այն «մատնահետքը», որի պատճառով անձը դիմում է կոռուպցիոն վարքագծի, հետո արդեն այն չեզոքացնել: Այդ «մատնահետքը» կարող է լինել **համոզմունք, ընկալում, ներանձնային խնդիր** և այլն: Վերոնշյալ օրինակով՝ անպատժելիության համոզմունքի դեպքում, կոտրելով այն, ստանում ենք արդյունք: **Ընկալման** դեպքում կոտրում ենք, օրինակ, այն **ընկալումը**, որ կաշառքը դա կաշառք չէ, այլ շնորհակալության նշան է և ստանում ենք արդյունք: Մասնավորապես, շատ ենք հանդիպել այդպիսի դեպքերի, երբ վերապատրաստման մասնակիցները պնդում են, որ պետական պաշտոնյային նվերներ տալը դա իրենց աշխատանքի դիմաց ցուցաբերված հարգանքի և շնորհակալության նշան է և իրենք կաշառքը դիտարկում էին որպես շնորհալի վերաբերմունք:

Մի փոքր բարդ է **ներանձնային խնդիրների** դեպքում, քանի որ դրանք առավել խորն են թաքնված և իրենց հետ աշխատանքներ տանելը բավական բարդ գործընթաց է, դրա համար փորձենք առավել խորքային ուսումնասիրել այն սույն հոդվածի

շրջանակներում: Ներկայացնենք կոռուպցիոն վարքագիծ ծնող մի քանի ներանձնային պատճառ, որպեսզի պարզենք նաև՝ **ինչպիսի ազդեցության մեխանիզմ կիրառել** տվյալ հանցածին տարրերը չեզոքացնելու համար: Այս մասով հետաքրքիր հետազոտություն է իրականացրել Յուրի Անտոնյանը, համաձայն որի՝ անձի կոռուպցիոն վարքագծի պատճառ (ներանձնային խնդիրներից ծագող պատճառ) կարող է լինել խաղային պահանջմունքը:

Մի շարք կոռուպցիոններն են հանդիսանում են խաղացողներ, քանի որ կոռուպցիան շատերի մոտ ասոցացվում է խաղի հետ: Այդ խաղին մասնակցելը իրենց հաճույք է պարգևում, սակայն նրանք դա չեն գիտակցում, քանի որ այդ ամենը տեղի է ունենում ենթագիտակցորեն:

«Խաղից» ստացած հոգեբանական մեծ բավարարվածությունն է գլխավոր պատճառն այն բանի, որ այդ անձիք երկար տարիների ընթացքում կատարում են կոռուպցիոն հանցագործություններ՝ չգիտակցելով, թե ինչու են իրենց վարքագծի իրական պատճառը՝

Իսկ ինչու՞ է նման պահանջմունք առաջանում մեծահասակների մոտ՝ փորձենք մենք բացատրել: Մեծ հասակում խաղի պահանջմունքի առաջացման պատճառներից մեկը, կարծում ենք, կարող է լինել մանկության շրջանում խաղի փուլն անավարտ թողնելը:

Անավարտ՝ այսինքն՝ երեխան ինչ-որ հանգամանքների բերումով՝ օրինակ ծնողի կորստի դեպքում վաղ աշխատանքի անցնելու պատճառով կարող է թողնել խաղը և անցնել կյանքի գործունեության մյուս փուլերին:

Ինչպես հայտնի է մարդու կյանքի գործունեության հիմնական փուլերն են՝ խաղը, ուսումը, աշխատանքը², իսկ տարիքային հիմնական փուլերն են՝ մանկությունը, պատանեկությունը և հասունությունը:

Որպես կանոն՝ մարդն անցնում է կյանքի այս փուլերի միջով, սակայն ոչ միշտ է այդպես լինում: Եթե ինչ-ինչ պատճառով մարդը չի կարողանում անցնել և ավարտել մի փուլը՝ օրինակ խաղի, մանկության փուլը, ապա նրա մոտ հնարավոր է ողջ կյանքում անգիտակցական մղումներով պահպանվի խաղի պահանջմունքը, քանի որ այն բաց է

1. <http://antonyan-jm.narod.ru/inter3.html>.
2. <http://www.psychologyguide.ru/psychols-887-1.html>.

մնացել: Չէ որ պարզագույն տրամաբանական կանոնի համաձայն՝ ինչը չի ավարտվում, ապա չի վերջանում, մարդուն հետապնդում է ամենուր և միշտ՝ իրականացման համար սպասելով նպաստավոր հանգամանքների: Արդեն կախված անձի մեջ առկա այլ հանցավոր նախադրյալներից և համապատասխան իրադրությունից՝ խաղի պահանջմունքի առկայությունը, կարող է դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ: Մինչդեռ այն դեպքում, երբ անձի մեջ առկա չեն հանցավոր նախադրյալներ, ապա հնարավոր է անձն իրականացնի իր խաղային պահանջմունքները ոչ կոռուպցիոն ճանապարհով, այլ, օրինակ, իր երեխաների հետ խաղալու միջոցով և այլ եղանակներով:

Միաժամանակ գտնում ենք, որ խաղային պահանջմունքի առկայության դեպքում, պաշտոնատար անձանց գրասենյակում խաղերի առկայությունը (համակարգչային խաղ, շախմատ և այլ) կարող է միջոց հանդիսանալ կոռուպցիոն վարքագիծը հնարավորինս չեզոքացնելու, քանի որ իրենք իրենց չբավարարված խաղային պահանջմունքերը կարող են բավարարել թեկուզ և այդ ճանապարհով: Իհարկե կրկին նշենք, որ այդ ամենն իրականացնում է չգիտակցելով, անձը չի հասկանում, որ դրա միջոցով չեզոքացնում է հանցածին տարր:

Կարծում ենք, որ մանկության շրջանում խաղի փուլն անավարտ թողնելու **պատճառներից երկրորդը** կարող է հանդիսանալ այն, որ երեխան չի դաստիարակվում որպես երեխա, ով պետք է խաղա և զբաղվի իր տարիքին համապատասխան գործով: Բնականաբար, նման երեխաներն իրենց տարիքի համապատասխան չեն պահի իրենց, այլ հասուն մարդկանց պես կլինեն իրենց խոսելաձևով, պահվածքով, զբաղմունքներով, իրենց համար խաղալն անգամ գուցե հարիր չլինի, նույնիսկ նման երեխաները չեն ընդունում, որ գնում են նախադպրոցական հաստատություն, այլ ասում են, որ իրենք գնում են «աշխատանքի»: Ամենի արդյունքում անձի հոգեկանում խաղի փուլը կմնա բաց:

Մանկության շրջանում խաղի փուլն անավարտ թողնելու հնարավոր **պատճառներից երրորդը** կարծում ենք կարող է լինել այն, որ օրենքով սահմանված կարգով երեխայի դպրոց հաճախելու տարիքն ավելի

վաղ է լինում սահմանված, քան երեխայի պատրաստվածությունն իր կյանքի գործունեության երկրորդ փուլին՝ ուսմանը: Եվ երեխան, գտնվելով իր կյանքի գործունեության առաջին փուլում՝ խաղային պահանջմունքների առկայության բուռն շրջանում, թողնում է խաղը կիսատ և անցնում է ուսումի: Ուստի՝ առաջարկում ենք, որպեսզի պետության իրավասու մարմինները դպրոց հաճախելու տարիքը սահմանելիս հաշվի առնեն այդ իրականությունը: Լավ կլիներ, որ խաղային պահանջմունքի առկայության թե՛ շրջանում երեխան չհաճախեր դպրոց, իսկ հաճախելու դեպքում էլ՝ չձանրաբեռնվեր դասերով, որպեսզի զուգահեռ ժամանակ ունենա խաղալու: Բացի այդ, սույն խնդրի լուծման համար առաջարկում ենք ևս երկու տարբերակ:

Նախ՝ անավարտ մանկության դեպքեր չունենալու համար անհրաժեշտ է խստագույնս պահպանել իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետությանը բնորոշ այն մոտեցումը համաձայն որի՝ սոցիալական ոլորտում պետության հիմնական խնդիրներից է ընտանիքը, մայրությունը, մանկությունը պաշտպանելը և հովանավորելը: Սակայն անհերքելի է, որ ամբողջովին վերահսկել յուրաքանչյուր ընտանիք՝ քննարկվող գործառույթը պատշաճ իրականացնելու համար, գրեթե անհնար է: Ուստի՝ տեսնում ենք փոքր, բայց նաև այլ տարբերակներ: Մասնավորապես՝ տալ անձին այն, ինչի պակասը նա ունի: Այս պարագայում խնդրի լուծման տարբերակներից կարող է լինել պետական պաշտոնյաների գրասենյակներում «պրոֆիլակտիկ» նկատառումներից ելնելով որևէ ինտելեկտուալ խաղ տեղադրելը: Սա թեկուզ և քիչ չափով, բայց կարող է օգնել նման խնդիր ունեցող անձին իրականացնել իր խաղային պահանջմունքը: Բացի այդ, գտնում ենք, որ այս խնդրի լուծմանը կարող է աջակցել նաև ֆուտբոլի, բասկետբոլի, ինտելեկտուալ և այլ խաղերի կազմակերպումը պետական պաշտոնյաների համար՝ իհարկե չբարձրաձայնելով վերջիններիս կազմակերպման և իրականացման իրական պատճառը:

Օրինակ՝ «Ինչ, որտեղ, երբ» խաղը և այլ նմանաբնույթ խաղերը լավ տարբերակ են նման խնդիր ունեցող անձի համար՝ չեզոքացնելու իր մեջ առկա քննարկվող հանցածին տարրը: Իհարկե այն անձը, որը դիմում է կոռուպցիոն վարքագծի՝ ոչ խաղային պահանջմունքի առ-

կայության դրդապատճառով, այլ, օրինակ, ֆիզիոլոգիական պահանջմունքի առկայության դրդապատճառով (ապրուստի միջոց հոգալու), ապա նման խաղերը ոչ մի ազդեցություն չեն թողնի այդ անձի վրա կոռուպցիոն վարքագիծ դրսևորելու տեսանկյունից, քանի որ այդ անձը կոռուպցիոն վարքագիծ էր ցուցաբերում բացառապես այլ դրդապատճառից ելնելով՝ ոչ խաղային պահանջմունքը, այլ՝ ֆիզիոլոգիականը բավարարելու համար: (Վերջինիս մենք անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածներում):

Ի դեպ՝ արխեոլոգիական տվյալները (պեղումներ ստադիոնների, պատկերագրական նկարներ) վկայում են, որ վաղ ժամանակներում նույնպես թագավորները խաղացել են խաղազնդակով խաղեր միմյանց հետ և դա չէր դիտվում որպես խաղ, այլ այն հանդիսանում էր արարողակարգ³:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ կոռուպցիայի դեմ պայքարի գործում խաղային պահանջմունքը կարևորելը կոպիտ ասած այդքան էլ լուրջ չէ, կամ կարող է թվալ առհասարակ ուշադրություն չպետք է հատկացնել այդ խնդրին, բայց բավական է ականատես լինել, թե երբեմն ինչպես են պետական պաշտոնյաներն իրենց խաղային պահանջմունքը բավարարելու համար երկար ժամանակ անցկացնում խաղատներում (մինչև անգամ հսկայական գումարներ վատնում բյուջեից) կարելի է նորովի գնահատել ներանձնային խնդիրների ազդեցության դերը կոռուպցիայի դեմ պայքարի գործում:

Շարունակելով անդրադառնալ կոռուպցիոն վարքագծի՝ ներանձնային խնդիրների ուսումնասիրությանը՝ նշենք, որ, մեր կարծիքով, անձի հոգեկանում առկա թերարժեքության բարդույթը ևս կարող է ծնել կոռուպցիոն վարքագիծ: Դիտարկենք, թե ինչպես: Նախ՝ թերարժեքության բարդույթը անհրաժեշտ է տարբերել թերարժեքության զգացողությունից:

Թերարժեքության զգացողությունը սկիզբ է առնում մանկությունից. երեխան անհանգստանում է, երբ անօգնական է երկար ժամանակ այն պատճառով, որ ապրելու

համար պետք է կախված լինի ծնողներից: Այդ փաստը երեխային անհանգստություն է պատճառում և առաջ է բերում ընտանիքի մյուս անդամների համեմատ խոր թերար-ժեքության զգացողություն, քանի որ ընտանիքի մյուս անդամները երևում են իր համար ավելի ուժեղ, կարող և հզոր (քանի որ կարողանում են իրենք միայնակ տանից դուրս գալ, ինքնուրույն հաց ուտել, որոշումներ կայացնել և այլն):

Թերարժեքության զգացողության՝ այդ վաղ փորձը սկիզբ է դնում երկար պայքարի՝ շրջապատին գերազանցելու, ինչպես նաև կատարելության հասնելու նպատակով: Մինչդեռ թերարժեքության զգացումը որոշ մարդկանց մոտ կարող է ունենալ ծայրահեղ ելք՝ ձևավորելով թերարժեքության բարդույթ, որն արդեն սեփական թուլության զգացումի չափազանցումն է⁴:

Ավստրիացի բժիշկ և հոգեթերապևտ, անհատական հոգեբանության հիմնադիր Ա. Ադլերը նկատել է, որ թերարժեքության զգացողությունը դրդում է անձին ձեռք բերել փոխհատուցում նրա համար, որպեսզի փոխհատուցի՝ կոմպենսացնի իր թերարժեքությունը: Որոշակի օրգանի թերարժեքությամբ տառապող հիվանդները փորձում են կոմպենսացնել այդ թերարժեքությունը պարապմունքների կամ վարժությունների միջոցով, որը հետագայում մեծ ուժի և վարպետության ձեռքբերման նախադրյալ է դառնում⁵: (Փոխհատուցումն է պատճառը, որ երբեմն ականատես ենք լինում, թե ինչպես նվազ կարողություններով երեխաները հասնում են մեծ նվաճումների երգի, պարի կամ այլ ոլորտներում):

Ադլերի պնդմամբ բոլոր տաղանդաշատ կամ հայտնի մարդիկ տառապել են ինչ-որ օրգանի թերությամբ: Սակայն միշտ չէ, որ փոխհատուցումը կարող է արտահայտվել դրական արարքներում, եթե խոսքը հատկապես թերարժեքության բարդույթի մասին է, ուրեմն այս պարագայում տեղի կունենա հիպերփոխհատուցում՝ գերհատուցում, որն Ադլերն անվանել է գերազանցության բարդույթ:

Այդպիսի բացասական ազդեցությունների արդյունքում ձևավորվում է մարդու

3. <https://postnauka.ru/video/71426>.

4. Хвेलл Л., Зиглер Д., Теории личности, 3-е изд. С-ПБ, Изд-во «Питер». 2009, 607с, С. 169.

5. Նույն տեղում, էջ 168:

կյանքի որոշակի ոճ: Այս պարագայում մարդու ստեղծագործական ես-ը չի ծավալվում: Չկա սոցիալական հետաքրքրություն, անձն այլևս չի գործում՝ ի բարօրություն սոցիալական միջավայրի: Անձը ձգտում է ամեն ինչ սեփական շահին ծառայեցնել, միջավայրում ամեն ինչ դասավորել այնպես, որ յուրաքանչյուր իրավիճակից շահած դուրս գա: Մարդը դառնում է իշխանատենչ, ագրեսիվ և ձգտում է ամեն գնով գերազանցել մյուսներին: Նման զգացողություն ունեցող անձանց համար, կարծում ենք, կոռուպցիան կարող է հանդիսանալ ինչպես փոխհատուցում, այնպես էլ գերփոխհատուցում: Նման փոխհատուցման դեպքում անձը ձգտում է իշխանության, ճանաչման, հասարակության համար ընդունելի լինելու: Այսինքն՝ իր ենթագիտակցության մեջ առկա ներանձնային խնդիրը լուծելու համար անձը կարող է պատրաստ լինել խախտելու օրենքը, տալ կաշառք՝ իշխանության հասնելու համար, միայն թե բավարարի և փոխհատուցի իր թերարժեքության բարդույթը:

Փոխհատուցում ստանալու համար անձը կարող է ընտրել կոռուպցիոն ճանապարհը, քանի որ վերջինիս միջոցով նա հաղթահարում է իր մեջ առկա ներանձնային խնդիրը:

Իհարկե ասվածը չի նշանակում, որ պարտադիր պայման է այն, որ տվյալ խնդիրը ունեցող անձիք բացառապես կոռուպցիոն ճանապարհով պետք է հասնեն իշխանության: Հայտնի է, որ Թեոդոր Ռուզվելտն իր մանկության ժամանակ եղել է շատ թույլ և հիվանդոտ, սակայն նա դարձավ ԱՄՆ նախագահ⁶ ոչ կոռուպցիոն ճանապարհով:

Նշենք նաև, որ անձի մեջ փոխհատուցման և գերփոխհատուցման ձգտումը կարող է վկայել այն մասին, որ նա ցանկություն ունի իրականացնելու իր ինքնահարգանքի և ինքնաիրականացման պահանջմունքը: Դրանք, իրենց հերթին, նույնպես կարող են հանդիսանալ կոռուպցիոն վարքագծի պատճառներ: Վերջինս հասկացել ենք նաև մեր հետազոտության արդյունքում: Շատերը խոստովանեցին, որ իրենց համար պետական պաշտոն զբաղեցնելը չի նշանակում, որ իրենց դուր է գալիս այդ աշխատանքը, ավելին՝ իրենք շատ ցածր աշխատավարձ

են ստանում վերջինիս համար, բայց ձգտում են ստանալ և մնալ այդ պաշտոնում: Երբ հարցրեցինք, թե ինչու, պատասխանեցին, որպեսզի հասարակությունը իրենց ճանաչի, գնահատի և հարգի: Կարող ենք ասել, որոշ անձանց համար պետական աշխատանքի անցնելը՝ ինքնահարգանքի պահանջմունքի բավարարման միջոց է:

Առհասարակ թերարժեքության բարդույթի պատճառով մարդն իրեն զգում է անլիարժեք, առավել թերի մյուս մարդկանց համեմատ և նա անգիտակցորեն ցանկանում է ձերբազատվել այդ բարդույթից, իսկ ձերբազատման համար, ինչպես նշեցինք, անձը կարող է դիմել ամենատարբեր միջոցներ՝ մինչև անգամ հանցավոր վարքագծի: Վերջինիս ամենատարածված օրինակը՝ դիմել կոռուպցիոն վարքագծի պետական պաշտոն զբաղեցնելու համար:

Այսպես, կարծում ենք՝ թերարժեքության զգացողությունը ինչպես նաև թերարժեքության բարդույթը կարող է դառնալ ինչպես փոխհատուցման, այնպես էլ գերփոխհատուցման պատճառ, որոնք էլ կարող են դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ:

Ի վերջո, կոռուպցիան ինքնին հենց «փոխհատուցում» է:

Ստացվում է՝ եթե անձը թերարժեքության բարդույթի պատճառով է դիմում կոռուպցիոն վարքագծի, ապա կոռուպցիայի դեմ պայքարի համար իրականացվող իրավական միջոցառումները՝ օրենքի փոփոխություն, աշխատավարձի բարձրացում կամ այլ միջոցառումներ, այդքան էլ դրական արդյունք չեն տա, քանի որ իրենք կոռուպցիոն վարքագծի չէին դիմում գումար չունենալու կամ ցածր աշխատավարձի պատճառով, այլ դիմում էին ենթագիտակցորեն, որպեսզի լուծեն իրենց մեջ առկա ներանձնային խնդիրը՝ թերարժեքության բարդույթը: Իսկ արդեն իրավական, տնտեսական բարեփոխումները դրական աջակցություն կունենային այն պարագայում, երբ անձն ունենար գումարի կարիք և այդ պատճառով դիմեր կոռուպցիոն վարքագծի:

Իհարկե ներանձնային խնդիրները, որոնք կարող են հանգեցնել կոռուպցիոն վարքագծի

6. **Օ'Կոններ Ք.** Психология вредных привычек /Ричард Օ'Коннер; пер с англ. А. Логвинской; [науч. ред. А. Логвинская]. М. Манн, Иванов и Фербер, 2015. 256 с., С. 86.

այսքանով չեն սահմանափակվում (դրանք մենք կներկայացնենք հաջորդ հոդվածներում):

Կարծում ենք՝ **ներանձնային խնդիրների դրդապատճառով** կոռուպցիոն վարքագիծ շտկելու հարցում որոշակի աջակցություն կարող է ցուցաբերել նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց համար մասնագիտացված հոգեբանների ինստիտուտի ներդրումը:

Ցավալի է, որ կրիմինալոգիայի և հոգեբանության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի համար կիրառվող ներանձնային ազդեցության մեխանիզմները և վերջինիս մշակման համար անհրաժեշտ կոռուպցիոն վարքագծի ներանձնային պատճառների ուսումնասիրությունը հետին պլան են մղվել:

Մինչդեռ գտնում ենք, որ կոռուպցիայի դեմ պայքարի գործում կարևորություն պետք է տրվի նաև կոռուպցիոն վարքագծի ներանձնային պատճառների բացահայտմանը և չեզոքացմանը, քանզի կոռուպցիան ի սկզբանե ծնվում է մարդուց, ուստիև դրա դեմ պայքարը, որպեսզի լինի ամբողջական, պետք է սկսել անձից՝ ուսումնասիրելով անձի ներանձնային առանձնահատկությունները և դրդապատճառների ոլորտը, որոնք առաջին հայացքից կարող են թվալ կոռուպցիայի դեմ պայքարի գործում ոչ էական դեր ունեն, մինչդեռ լինեն առանցքային:



ԺՈՐԱ ԶՃԱՆԳԻՐՅԱԼ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՏԵՂԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԱՐԱՆՁԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ` ԸՍՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ**

Ցանկացած պետությունում երկրի հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը, իրավական պաշտպանության կարիք ունի, այն է պետք է ապահովվի սահմանադրական նորմերի կյանքի կոչումը-իրացումը, այդ նորմերի բովանդակությանը համապատասխան և թույլ չտրվի վերջինիս խախտումը ինչպես քաղաքացիների, այնպես էլ պաշտոնատար անձանց կողմից:

Կարծում եմ, որ վերջինիս ապահովմանն է ուղղված ՀՀ Սահմանադրության այն դրույթը, համաձայն որի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն Սահմանադրությամբ և օրենքներով լիազորված գործողություններ (հոդված 6):

Սահմանադրության իրավական պաշտպանության գործառույթի իրականացման համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրական դատարանը, որը կոչված է սահմանադրական արդարադատության իրականացման միջոցով ապահովել սահմանադրականությունը: Հարկ է նշել, որ այդ գործառույթը իրականացնելիս Սահմանադրական դատարանը անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը:

Հենց այս բացահայտ անկախությունն էլ հիմք է հանդիսանում՝ ձևավորելու տարբեր տեսակետներ Սահմանադրական դատարանի տեղը իշխանությունների տարանջատման համակարգում որոշելու համար:

1. Սահմանադրական հսկողությունը նույնացվում է դատական իշխանության հետ.

2. Սահմանադրական հսկողությունը դիտվում է որպես հսկողական իշխանության

տարատեսակ.

3. Սահմանադրական հսկողությունը իր բնույթով վերնաշենքային կառույց է և չի պատկանում իշխանության ոչ մի թևի՝:

Նպատակ չունենալով վերլուծել բերված տեսակետներից և ոչ մեկը, փորձենք համեմատականներ անցկացնել տարբեր պետությունների սահմանադրությունների միջև, ցույց տալու համար այս կամ այն պետության մոտեցումը վերը շարադրված հարցի շուրջ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ՝ ա/ կան պետություններ, որոնք իրենց սահմանադրություններում նույնացնում են արդարադատություն և սահմանադրական արդարադատություն հասկացությունները և սահմանում, որ Սահմանադրական դատարանը դատական իշխանություն իրականացնող մարմին է վերջիններիս ընդգրկելով «դատական իշխանություն» գլխի մեջ՝:

բ/ կան պետություններ (օրինակ Մակեդոնիան), որոնք Սահմանադրական դատարանը դիտում են որպես սահմանադրականության և օրինականության պաշտպանող միակ հանրապետական մարմին, ինչը ամրագրված է սահմանադրության առանձին IV բաժնում, իսկ «Պետական իշխանության կազմակերպումը» վերտառությունը կրող III բաժնի մեջ ընդգրկում են օրենսդիր իշխանությունը՝ պառլամենտը, նախագահը, գործադիր իշխանությունը՝ կառավարությունը և արդարադատությունը:

Հարկ է նշել, որ Մակեդոնիայի սահմանադրությամբ ուղղակի սահմանված է, որ դատական իշխանության կրողը հանդիսանում են՝ դատարանները՝ վերջինիս մեջ ընդգրկելով

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 119 2020

1. Տե՛ս **Джангирян Ж. Д.** Разделение властей в республике Армения: конституционная модель и практика, Изд. Московского университета МГУ. 2003, стр. 187.

2. Տե՛ս Ռուսաստանի Դաշնության՝ 1993 թ. Սահմանադրությունը:

Սահմանադրական դատարանը³:

Ալբանիայի Հանրապետության Սահմանադրության 8-րդ բաժինը նվիրված է Սահմանադրական դատարանին, իսկ 9-րդ բաժինը դատարաններին, ընդ որում՝ 124-րդ հոդվածում ուղղակի սահմանված է, որ «Սահմանադրական դատարանը երաշխավորում է հարգանքը Սահմանադրության նկատմամբ և տալիս է նրա վերջնական մեկնաբանումը», իսկ 135 հոդվածով սահմանված է, որ «Դատական իշխանությունը իրականացվում է Գերագույն դատարանի, ինչպես նաև վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների կողմից, որոնք ստեղծվում են օրենքին համապատասխան»⁴:

3. Կան պետություններ, որոնք Սահմանադրական Դատարանը դիտում են Սահմանադրական յուրիսդիկցիայի միակ մարմինը, (Ուկրաինայի Հանրապետություն, Մոլդովայի Հանրապետություն): Մոլդովայի Հանրապետության Սահմանադրության III բաժինը նվիրված է «հանրային իշխանություններին», որն իր մեջ ներառում է պառլամենտը՝ օրենսդիր իշխանությունը՝ գլուխ IV, նախագահը՝ պետության գլուխը՝ գլուխ V, կառավարությունը՝ գլուխ VI, դատական իշխանությունը՝ գլուխ IX: Սահմանադրության 114 հոդվածով ուղղակի սահմանված է, որ «արդարադատությունը իրականացվում է օրենքի անունից միայն դատական ատյանների կողմից», որոնց շարքին են պատկանում՝ բարձրագույն դատական պալատը, վերաքննիչ պալատը, տրիբունալները և դատարանները, հատուկ դատարանները՝ ըստ օրենքի (հոդված 115):

Ինչպես տեսնում ենք՝ Սահմանադրական Դատարանը ընդգրկված չէ արդարադատություն իրականացնող դատական իշխանության մարմինների համակարգում: Սահմանադրության V բաժինը նվիրված է Սահմանադրական Դատարանին, որտեղ ըստ 134 հոդվածի 1-ին կետի «Սահմանադրական Դատարանը-Մոլդովայի Հանրապետությունում սահմանադրական յուրիսդիկցիայի միակ

մարմինն է, որը ենթարկվում է միայն Սահմանադրությանը»⁵: Նույնանման կարգավիճակ է սահմանված Ուկրաինայի Սահմանադրությանը արդարադատությանը նվիրված բաժնում (XII բաժին, հվ. 124)⁶:

Այստեղից հետևում է, որ Սահմանադրական Դատարանը դիտվում է որպես Սահմանադրական վերահսկողության միակ մարմին, քանի որ Սահմանադրական յուրիսդիկցիան ոչ այլ ինչ է քան սահմանադրությամբ համապատասխան պետական մարմինների համար սահմանված լիազորությունների ամբողջություն, լուծելու իրավական վեճեր և իրավախախտման հետ կապված գործեր⁷:

Դժվար չէ նկատել, որ եվրոպական շատ պետությունների սահմանադրություններով հստակ տարբերակված են, «Արդարադատություն» և «Սահմանադրական արդարադատություն» հասկացությունները, առաջինի իրականացումը վերապահելով դատարանների միասնական համակարգին, իսկ երկրորդը՝ Սահմանադրական Դատարանին. ավելին՝ այդ պետությունների սահմանադրություններով Սահմանադրական Դատարանը չի դիտվում որպես դատական իշխանության մարմին:

Կարծում եմ՝ կարևորն այն չէ, թե Սահմանադրական Դատարանը դատական իշխանության մարմին է թե ոչ, կարևորը այն է, թե ինչ դեր և տեղ կունենա Սահմանադրական Դատարանը միասնական դատական համակարգում, եթե այն դիտվի դատական իշխանության մարմին, այլ կերպ ասած, որն է Սահմանադրական Դատարանի տեղը դատական իշխանության մարմինների միասնական բուրգում:

Փորձենք պարզել այն Հայաստանի Հանրապետության՝ 2015 թ. սահմանադրությամբ սահմանված Սահմանադրական Դատարանի իրավական կարգավիճակով:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո՝ 1995 թ. ընդունված Սահմանադրության 6-րդ գլուխը կրում էր «Դատական իշխանությունը» վերտառությունը,

3. Տե՛ս Մակեդոնիայի 1991 թ. Սահմանադրությունը IV ք. 108 հոդված:

4. Տե՛ս Ալբանիայի Հանրապետության՝ 1998 թ. Սահմանադրությունը:

5. Տե՛ս Մոլդովայի Հանրապետության՝ 1994 թ. Սահմանադրությունը:

6. Տե՛ս Ուկրաինայի Հանրապետության՝ 1996 թ. Սահմանադրությունը:

7. Տե՛ս **Барихин А. Б.**, Большой юридический энциклопедический словарь, М., Книжный мир, стр. 710.

որի 91 հոդվածով սահմանված էր, որ արդարադատությունը ՀՀ-ում իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իսկ 92 հոդվածում թվարկված է դատարանների համակարգը, որը իր մեջ ընդգրկում էր առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: Համաձայն այդ հոդվածի՝ ՀՀ-ում գործում էին նաև Տնտեսական, Զինվորական, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դատարաններ: Արտակարգ դատարանների ստեղծումը արգելված էր:

Սահմանադրության 6-րդ գլխի և նշված հոդվածների վերլուծությունը հնարավորություն է տալիս անելու հետևյալ դատողությունները:

1. Սահմանվում է «արդարադատություն» հասկացությունը որպես միասնական կատեգորիա, որը իրականացվում է բոլոր դատարանների կողմից՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Չի առանձնացվում սահմանադրական արդարադատություն հասկացությունը և Սահմանադրական Դատարանը որպես վերջինիս իրականացող: Այն ամրագրված է Սահմանադրական Դատարանի օրենքի մեջ:

3. Բոլոր դատարանները, այդ թվում նաև Սահմանադրական Դատարանը, դիտվում էին որպես դատական իշխանության մարմիններ և ընդգրկվում մեկ միասնական դատական համակարգի մեջ:

4. Սահմանված չէր, թե որ մարմինն էր համարվում բարձրագույն դատական ատյան, այլ կերպ ասած՝ դատական մարմինների համակարգի բուրգի գլուխը:

Հայաստանի Հանրապետության հետագա սահմանադրական բարեփոխումների արդյունքում 2005 թ. ընդունվեց նոր սահմանադրություն, որը լինելով 1995 թ. սահմանադրության իրավահաջորդը չգնաց նախորդի վերը նշված դրույթների նույնաբովանդակ ամրագրման ուղիով, այլ հակառակը, վերջիններիս տվեց մի նոր ուղղվածություն: 2005 թ. Սահմանադրության 6-րդ գլուխը շարունակեց կրել «Դատական իշխանություն» անվանումը, որտեղ 91 հոդվածում սահմանվեց, որ արդարադատությունը

ՀՀ-ում իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իսկ 92 հոդվածով ամրագրվեց ՀՀ-ում գործող դատարանների համակարգը, որը իր մեջ ընդգրկում էր ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, ինչպես նաև մասնագիտացված դատարանները՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից՝ վճռաբեկ դատարանն է, ամրագրված էր 92 հոդվածում, իսկ սահմանադրական արդարադատությունը ՀՀ-ում իրականացնում է Սահմանադրական Դատարանը (93 հոդված):

Եթե համադրենք 2005 թ. սահմանադրությունը 1995 թ. սահմանադրության հետ, կտեսնենք և՛ ընդհանրություններ, և՛ առանձնահատկություններ:

1. Բոլոր դատարաններն էլ, այդ թվում և Սահմանադրական Դատարանը, դիտվում են որպես դատական իշխանության մարմիններ:

2. 2005 թ. սահմանադրությամբ առանձնացվում է սահմանադրական արդարադատություն հասկացությունը: Ստացվում է, որ կատարվում է դատարանների միասնական համակարգի կողմից, որի բարձրագույն ատյանը վճռաբեկ դատարանն է, մյուսը՝ սահմանադրական արդարադատությունը, որը իրականացվում է Սահմանադրական Դատարանի կողմից:

Այստեղից հետևում է, որ մեկ միասնական դատական իշխանությունը ունի երկու համակարգ, որոնցից յուրաքանչյուրը ունի իր գլուխը, ինչը անընդունելի է թեկուզ և դատական իշխանության միասնության, արդարադատության միասնականության գաղափարից ելնելով:

Պետության ներսում կա մեկ միասնական արդարադատություն, որը ոչ այլ ինչ է, քան քաղաքացիների, կազմակերպությունների և պետության շահերի պաշտպանության նպատակով դատարանի կողմից քաղաքացիական, քրեական ինչպես նաև տնտեսական վեճեր լուծելիս դատարանի կողմից իրականացվող

իրավակիրառ գործունեություն⁸, որը իրականացվում է միայն սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Կարելի է առանձնացնել այդ ոլորտները, գործառույթները և ոչ թե բաժանել միասնական դատական իշխանությունը և համակարգը:

3. Դատարանների համակարգում թվարկված չէ Սահմանադրական Դատարանի անունը (92 հոդված): Կարելի է ենթադրել, որ Սահմանադրական Դատարանը դասվում է մասնագիտացված դատարանների շարքին:

Ի տարբերություն 1995 թ. և 2005 թ. ՀՀ Սահմանադրությունների, 2015 թ. ՀՀ Սահմանադրությունը, լինելով նախորդ սահմանադրությունների իրավահաջորդը, պահպանեց դատական իշխանությանը վերաբերող որոշ դրույթներ, բայց հիմնականում ենթարկվեց էական փոփոխությունների:

1. «Դատական իշխանություն» անվանումը կրող գլուխը փոխարինվեց «Դատարանները և բարձրագույն դատական խորհուրդը» անվանումը կրող գլխով, ինչը, մեր կարծիքով, ոչ թե լոկ անվանման, այլ բովանդակային լուրջ փոփոխություն է:

Սահմանադրությամբ սահմանվեց միայն դատարանների կողմից Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան արդարադատության իրականացման սահմանադրական նորմ սկզբունքը (162 հոդվ.) և այն կյանքի կոչող դատարանների համակարգը. այն է՝ Սահմանադրական Դատարանը, վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը (163 հոդվ.): Նույն հոդվածով սահմանվեց օրենքով նախատեսված մասնագիտացված դատարաններ ստեղծելու հնարավորության և արտակարգ դատարաններ ստեղծելու արգելման սկզբունքները:

Դժվար չէ նկատել, որ միայն այս երկու հոդվածներով լուծվեց երկու հիմնական՝ մինչ այդ չլուծված հիմնահարց:

Առաջին. ամրագրվեց «միասնական արդարադատություն» կատեգորիան, որը իր մեջ ընդգրկում է նաև Սահմանադրական արդարադատությունը:

Երկրորդ. սահմանվեց միասնական արդարադատություն իրականացնող դատական մարմինների միասնական համակարգ, որը գլխավորում է Սահմանադրական Դատարանը, ինչը բխում է 163 հոդվածում թվարկված դատարանների հաջորդականությունից՝ առջևում Սահմանադրական Դատարանն է:

Ակամայից հարց է ծագում՝ նման դիտարկումները անձնական երևակայության արդյունք են, թե սահմանադրական նորմերով ամրագրված և հիմնավորված գաղափարներ:

Նման հարցադրումը պայմանավորված է նրանով, որ վերը նշված նորմ-սկզբունքները իրենց իրացումը չեն ստացել սահմանադրական մյուս նորմերում, դրա վառ ապացույցն է սահմանադրության 171 հոդվածը, որտեղ սահմանված է «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի (ընդգծումը ժ.Դ.), Վճռաբեկ դատարանն է», իսկ 167 հոդվածի համաձայն՝ «Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը»:

Այստեղից հետևում է, որ սահմանադրությամբ տարբերակված են «արդարադատություն» և «Սահմանադրական արդարադատություն» հասկացությունները, ինչը նշանակում է, որ հարցականի տակ է դրված միասնական արդարադատության և այն կյանքի կոչող դատական մարմինների միասնական համակարգի առկայությունը: Ստացվում է՝ առկա է երկու համակարգ, որոնցից մեկը գլխավորում է Վճռաբեկ դատարանը, իսկ մյուսը՝ Սահմանադրական Դատարանը, այլ կերպ ասած՝ միասնական դատական իշխանության առկայությունը դրվում է հարցականի տակ, ինչը անընդունելի է:

Պետք է հիշել, որ Սահմանադրական Դատարանի հիմնական գործառույթը Սահմանադրության գերակայության ապահովումն է, ինչը իրականացնում է պետական իշխանության մարմինների, պաշտոնատար անձանց կողմից ընդունվող իրավական նորմերի, միջազգային պայմանագրերի և այլն՝ Սահմանադրությանը

8. Տե՛ս Тихомиров А.В., Тихомиров М.Ю., Юридическая Энциклопедия, М., 1998, стр. 347, Барихин А. Б., Большой юридический энциклопедический словарь, М., Книжный мир, 2005 стр. 478

համապատասխանության հարցի լուծման միջոցով: Ստացվում է, որ սահմանադրական արդարադատությունը սահմանադրական հսկողության իրականացման հիմնական ձևերից մեկն է, որը իրականացվում է սահմանադրական դատավարության ձևով հատուկ դատական մարմինների կողմից⁹: Այստեղից հետևում է, որ սահմանադրական արդարադատության բովանդակությունը սահմանադրական հսկողության իրականացման միջոցով Սահմանադրության՝ որպես երկրի հիմնական օրենքի գերակայության ապահովումն է, ինչը չի կարելի վերագրել դատական իշխանության մարմինների՝ դատարանների կողմից իրականացվող արդարադատությանը:

Արդարադատությունը միասնական հասկացություն է և ի վերջո օրինականության ապահովման արդյունքն է, իսկ օրինականությունը միասնական է պետության ներսում, ինչը իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածում որպես սահմանադրական սկզբունք, որի կյանքի կոչելը ցանկացած պետական մարմնի, պաշտոնատար անձանց պարտականությունն է:

Արդարադատության իրականացումը դատական իշխանության մարմինների հիմնական գործառույթն է, այլ կերպ ասած՝ այդ մարմինները ստեղծվել են հենց այդ գործառույթի իրականացման համար:

Կարելի է առանձնացնել արդարադատության ոլորտները՝ ըստ իրավական պատասխանատվության տեսակների՝ քրեական, քաղաքացիական-գույքային, վարչական, կարգապահական, սահմանադրական, որոնց նպատակը արդարադատություն ապահովելն է, որը հնարավոր է միայն իրավունքի այնպիսի նորմի կիրառման դեպքում, որը համապատասխանում է երկրի Սահմանադրությանը, այսինքն՝ սահմանադրական է:

Հենց այդ սահմանադրականության ապահովման գործառույթի իրականացման համար է ստեղծված Սահմանադրական Դատարանը, հետևաբար սահմանադրական արդարադատությունը պետք է դիտարկել որպես միասնական դատական իշխանության

գործառույթ, որի իրականացման համար ստեղծել վճռաբեկ դատարանի կազմում մի նոր՝ Սահմանադրական արդարադատության պալատ և վճռաբեկ դատարանը վերանվանել Գերագույն դատարան:

Վերջինիս իրականացումը հնարավորություն կտա լուծելու երկու հիմնական հարց.

ա/ Սահմանադրական Դատարանը դիտարկել որպես դատական իշխանության մարմին, որի գլխավոր խնդիրը և նպատակը կլինի Սահմանադրության գերակայության ապահովումը.

բ/ դատական մարմինների համակարգի՝ բուրգի գլխամասում տեսնել Գերագույն դատարանը, ինչը ամբողջությամբ հիմնավորված է և արդարադատության միասնականության, և իշխանությունների տարանջատման տրամաբանությամբ¹⁰:

Բնականաբար սա տեսակետ է, որը կարող է ընդունվել կամ չընդունվել: Պետք է ընկալել, որ հարցի՝ նման ձևով լուծումը վերջ կդնի իրավագիտության մեջ առկա վեճերի լուծմանը և Սահմանադրական Դատարանը դատական իշխանության գլուխ դիտարկող անձանց ախորժակի սահմանափակմանը:

Անկախ մոտեցումներից, այսօր ՀՀ-ում գործող Սահմանադրական Դատարանի՝ որպես սահմանադրականությունը ապահովող ինստիտուտի շուրջ առկա է ճգնաժամային իրավիճակ: Ո՞րն է պատճառը:

Հայտնի է, որ 2014 թ. «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում» հեղինակները ՀՀ-ում առկա թերությունների պատճառը տեսնում էին նաև 1995-2015 թթ. գործող ՀՀ Սահմանադրական Դատարանի մոդելի ոչ ճիշտ ընտրության մեջ և առաջարկում էին ընտրել մի նոր մոդել, ինչը և արվեց:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրական Դատարանին վերաբերող դրույթներն ամրագրվեցին ՀՀ սահմանադրության 7-րդ գլխում, փոխվեց Սահմանադրական Դատարանի կազմավորման կարգը և պաշտոնավարման ժամկետները:

Գործող սահմանադրությամբ Սահմանադրական Դատարանը ձևավորվում է պե-

9. Տե՛ս **Барихин А.Б.**, Большой юридический энциклопедический словарь, М., Книжный мир, 2005, стр. 251.

10. Կարծում եմ, որ նման պարագայում կկորցնի ԲԴԽ-ի պահպանման անհրաժեշտությունը:

տական իշխանության բարձրագույն ներկայացուցչական օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի կողմից, ինչը նշանակում է, որ Սահմանադրական Դատարանն իր սահմանադրական արդարադատություն իրականացնելու լիազորությունները ստանում է անմիջապես ժողովրդի ընտրյալներից, ինչը ունի էական նշանակություն և բարձրացնում է նրա դերը արդարադատության մարմինների համակարգում:

Ազգային ժողովը համաձայն ՀՀ Սահմանադրության 166 հոդվածի ընտրում է Սահմանադրական Դատարանի դատավորներին 12 տարի ժամկետով հանրապետության նախագահի, կառավարության և դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ, պահպանելով հավասարության սկզբունքը՝ յուրաքանչյուրն առաջարկում է երեք թեկնածու:

Այստեղից հետևում է, որ Սահմանադրական Դատարանի ձևավորմանը մասնակցում են օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունները և պետության գլուխը՝ նախագահը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համապատասխան՝ Սահմանադրական դատարանը իր կազմից՝ վեց տարի ժամկետով ընտրում է Սահմանադրական դատարանի նախագահ և փոխնախագահ առանց վերընտրվելու իրավունքի:

Կատարված նորամուծությունները բնականաբար ողջունելի են և իրավաբանորեն հիմնավորված: Այն հիմնավորված է նաև ՀՀ նախկին Սահմանադրական Դատարանի դառը փորձով, որտեղ և նախագահը, և դատարանի անդամները անփոխարինելի և անփոփոխ էին, ինչի արդյունքը եղավ այն, որ Սահմանադրական Դատարանի նախկին և միակ նախագահ Գ. Հարությունյանը «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում» ընդունում է, որ ՀՀ-ում իրավունքի գերակայություն չի եղել, մոռանալով, որ վերջինիս ապահովումը Սահմանադրական Դատարանի հիմնական գործառույթն է եղել, և որ Սահմանադրական Դատարանը լեգիտիմացրել է նախկին ոչ լեգիտիմ իշխանությունները և որ չի կարող լինել իրավունքի գերակայություն-սահմանադրականություն, եթե իշխանությունը լեգիտիմ

չէ¹¹:

Սահմանադրական այդ դրույթների ուժի մեջ մտնելու համար սահմանվեցին ժամկետներ, մասնավորապես Սահմանադրության 209-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվեց, որ ի թիվս այլ դրույթների Սահմանադրության 7-րդ գլուխն ուժի մեջ է մտնելու նորընտիր հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնած օրը 2018թ. ապրիլի 9-ին, և մինչև այդ շարունակում են գործել 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության համապատասխան դրույթները: Հոդվածի բովանդակությունից հետևում է, որ նախագահի պաշտոնավարման պահից պետք է գործեին նոր Սահմանադրության նորմերը, ինչի արդյունքում պետք է ձևավորվեր նոր Սահմանադրական Դատարան, ինչը միայն թվում է, քանի որ Սահմանադրության 213 հոդվածով սահմանված էր մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական Դատարանի նախագահը և անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը:

Կարծում եմ, որ հենց այս հոդվածի առկայությունը հիմք հանդիսացավ այսօրվա ոչ լեգիտիմ Սահմանադրական Դատարանի ձևավորման համար, քանի որ հենց այս հոդվածով են ծնվում հակասությունները նոր Սահմանադրության ընդունման նպատակների և նրանց կյանքի կոչելու ժամկետների և իրացման ձևերի միջև:

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է նախկին Սահմանադրական Դատարանի մոդելի քննադատությանը, և նոր Սահմանադրական Դատարանի մոդելի ձևավորման ժամկետների և ձևերի մինչև 2034-35 թթ. հետաձգմանը:

Հայտնի ճշմարտություն է, որ սահմանադրական նորմերը ունեն իմպերատիվ բնույթ, ինչը նշանակում է, որ սահմանադրությունը ընդունման պահից պետք է կատարվի, կենսագործվի սահմանադրական նորմերի բովանդակությանը համարժեք: Օրենսդիրը՝ ժողովուրդը քվեարկել է կողմ Սահմանադրական Դատարանի նոր մոդելի-տեսակին, որը պետք

11. Այդ մասին տես Ժ. Ջհանգիրյան «Легитимная власть гарант конституционализма»:

է ձևավորվի և գործի ընդունման պահից, այլ ոչ թե 15-20 տարի հետո: Սովորական և ոչ միայն սովորական քվեարկող քաղաքացիները չէին կարող ընկալել այն մանիպուլյացիաները, որոնք կատարել են մեր սահմանադրության կնքահայրերը հենց իրենց համար: Քվեարկող ժողովուրդը Սահմանադրություն է ընդունում նախ և առաջ առկա սերունդների՝ իր համար, այլ ոչ թե ապագա սերունդների, որի իրավունքն էլ չունի, քանի որ ապագա սերունդները իրենք կորոշեն՝ ինչ ձևերով կամ ինչ մեխանիզմով ապահովեն սահմանադրականությունը. ավելին՝ սահմանադրա-կանությունը կեղծիքով, մանիպուլյացիաներով չեն ապահովում:

Նոր սահմանադրությունով Սահմանադրական Դատարանին վերաբերվող ինստիտուցիոնալ հարց չի՝ լուծվել, չի հստակեցվել անգամ նրա տեղը իշխանությունների տարանջատման համակարգում, ավելին խառնաշփոթ է ստեղծվել անգամ «արդարադատություն» հասկացության մեջ: Հիմնականում փոփոխվել է կազմավորման ձևը և դատավորների պաշտոնավարման ժամկետները, այն էլ՝ ըստ անցումային դրույթների՝ ապագա սերունդների համար:

Յանկացած շատ ու քիչ գրագետ իրավաբան կամ մեկ այլ մասնագետ գիտի, որ սահմանադրական նորմերը ունեն իմպերատիվ բնույթ և ենթակա են կատարման իրենց բովանդակությանը համապատասխան ինչի արդյունքում և ձևավորվում է իրավական-սահմանադրական պետությունը:

Փորձը ցույց տվեց, որ դա այդպես չէ, որ ՀՀ վերջին սահմանադրության կնքահայրերը ձևավորել են Սահմանադրական Դատարանի նոր մոդել ոչ թե այս, այլ ապագա սերունդի համար, որով սահմանադրության անցումային դրույթներում ֆիքսել են այնպիսի դրույթներ որոնք հնարավորություն կտան ձևավերել Սահմանադրական Դատարան, հին (չգործող) սահմանադրությամբ նախատեսված նորմերով, ինչը և կյանքի կոչվեց:

Փորձենք հասկանալ՝ ո՞րն է նման անցումային դրույթի սահմանման նպատակը:

Գործող ՀՀ Սահմանադրությունը ընդուն-

վեց 2015 թ. դեկտեմբերի 6-ին և ամբողջությամբ ուժի մեջ մտավ 2018 թ. ապրիլի 9-ին¹² ընդունումից 2 տարի 4 ամիս հետո:

Հարց. բավարար էր այդ ժամանակահատվածը՝ մասնավորապես սահմանադրությամբ նախատեսված Սահմանադրական Դատարանի մոդելի կյանքի կոչման համար՝ սահմանադրական նորմերի պահանջներին համապատասխան:

Կարծում եմ՝ այո, հատկապես այն դեպքում, երբ նոր Սահմանադրության պահանջներին համապատասխան 2017 թ. ապրիլի 2-ին ձևավորված ԱԺ-ում պառլամենտական կայուն մեծամասնությունը պատկանում էր ՀՀԿ-ին՝ շուրջ 25 տարի իշխող կուսակցությանը:

Ստացվում է, որ ժամանակի տեսանկյունից չկար որևէ խնդիր: Տրամաբանությունը թելադրում է, որ նման անցումային դրույթի սահմանման նպատակը պետք է փնտրել այլ տիրույթում: Նման եզրակացությունը պայմանավորված է գործող Սահմանադրական Դատարանի և ԲԴԽ-ի ձևավորման պրակտիկայի վերլուծությամբ:

Ըստ վերը շարադրվածի՝ ստացվում է, որ Սահմանադրական Դատարանի կազմը ամբողջությամբ չէր թարմացվելու և նոր ընթացակարգը կիրառելի է այն ժամանակ, երբ առաջանա Սահմանադրական Դատարանի դատավորի թափուր տեղ: Ազգային ժողովի վեցերորդ գումարման երրորդ նստաշրջանի 2018 թվականի փետրվարի 27-ին գումարված հերթական նիստերի օրակարգում ընդգրկված էր Սահմանադրական Դատարանի անդամի նշանակման վերաբերյալ հարցը¹³: Օրակարգային հարցի քննարկման համար ներկայացված են եղել.

1. ՀՀ Ազգային ժողովի նախագահին (Ա.Բաբլոյան) հասցեագրված ՍԴ նախագահի 31.01.2018 թ. թիվ ՍԴՆ-3 գրության (Մոխց N 988-18, 31.08.2018) Կիմ Բալայանի տարիքը լրանալու հետ կապված լիազորությունների 01.02.2018 թ. դադարեցման մասին¹⁴:

2. 30.01.2018 թ. ՍԴԱՌ-6 որոշումն առ այն, որ 2017 թ. հոկտեմբերի 15-ից լրացել են Կիմ Բալայանի լիազորությունները, սակայն

12. ՀՀ նախագահի պաշտոնական կայքէջ <https://www.president.am/hy/armen-sarkissian/>.

13. <http://parliament.am/agenda.php?AgendaID=474&day=27&month=02&year=2018&lang=#27.02.2018>.

14. <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=9531&Reading=0>.

նա գեկուցող դատավոր է եղել գործով մինչև 31.01.2018 թ. և Սահմանադրական Դատարանը որոշել է արձանագրել, որ նրա լիազորությունները համարվում են դադարած 01.02.2018 թ. և նրա տեղը համարվում է թափուր¹⁵:

12.02.2018 թ. Ազգային ժողովի նախագահը, հաշվի առնելով 2005 թվականի, այլ ոչ թե 2015թ.-ի փոփոխություններով Սահմանադրության 83-րդ հոդվածի պահանջները, այդ թափուր պաշտոնի համար առաջարկել է Հրայր Թովմասյանի թեկնածությունը, որն այդ ժամանակահատվածում Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահն էր: Ազգային ժողովի վեցերորդ գումարման երրորդ նստաշրջանի 27.01.2018 - 02.03.2018 թթ. հերթական նիստերի արձանագրության համաձայն՝ 02.03.2018 թ. Հրայր Թովմասյանը գաղտնի քվեարկությամբ՝ 64 կողմ, 27 դեմ ձայների հարաբերակցությամբ նշանակվել է Սահմանադրական դատարանի անդամ¹⁶:

Միաժամանակ, ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ 02.03.2018 թ. հայտարարությամբ նշվում էր, «Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 1-ին մասի՝ հայտարարում է, որ 2018 թվականի մարտի 1-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Դատարանի նախագահի պաշտոնից հրաժարականի դիմում է ներկայացրել»: Ազգային ժողովի վեցերորդ գումարման երրորդ նստաշրջանի 27.02.2018-02.03.2018 թթ. հերթական նիստերի օրակարգում ընդգծված էր ԲԴԽ անդամների ընտրության վերաբերյալ հարցը, որի վերաբերյալ նշվում է. «Սահմանադրության 174-րդ հոդվածի 3-րդ մասի և 214-րդ հոդվածի 3-րդ մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ և 144-րդ հոդվածի 2-րդ մասերի համաձայն, Բարձրագույն դատական խորհրդի

հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ խմբակցությունների առաջադրմամբ: Ազգային ժողովը ԲԴԽ առաջին կազմի համապատասխան երեքական անդամների ընտրում է հինգ, իսկ երկուական անդամների՝ երեք տարի ժամկետով»: Ըստ հայտարարության տեքստի Գ. Հարությունյանն առաջադրվել է ՀՀ և ՀՅԴ խմբակցությունների կողմից 22.02.2018 թ.¹⁷, որի լիազորությունների ժամկետը կլրանար ՍԴ նախագահի պաշտոնում 23.03.2018 թ.¹⁸: 28.02.2018 թ. քվեարկության արդյունքներով ԲԴԽ անդամ ընտրվեց Գագիկ Հարությունյանը՝ կողմ՝ 96, դեմ՝ 2 ձայների հարաբերակցությամբ: Ստացվում է, որ Գ. Հարությունյանը լինելով ՍԴ նախագահ 22.02.2018 թ. առաջադրվել է որպես ԲԴԽ անդամի թեկնածու: 6 օր հետո՝ 28.02.2018 թ. ընտրվել է ԲԴԽ անդամ: 01.03.2018 թ. հրաժարականի դիմում է ներկայացրել, մինչդեռ իր լիազորությունների ավարտին մնացել էր 22 օր՝ հրաժարականի դիմումից հաշված:

12.02.2018 թ. N3 արձանագրությամբ, հիմք ընդունելով ՀՀ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանի հրաժարականի դիմումը (01.03.2018 թ.) և առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով, մարտի 8-ից դադարած է համարվել Գագիկ Հարությունյանի՝ ՀՀ ՍԴ նախագահի լիազորությունները: Նույն օրը Ազգային ժողովի նախագահը հայտարարել է ՀՀ Սահմանադրական Դատարանի նախագահի պաշտոնում թեկնածու առաջադրելու մասին. «Համաձայն 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 83-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրական Դատարանի կազմից Սահմանադրական Դատարանի նախագահի թափուր պաշտոնում նշանակելու համար Ազգային ժողովին առաջարկում են Հրայր Թովմասյանի թեկնածությունը»¹⁹: ՀՀ Ազգային ժողովի վեցերորդ գումարման երրորդ նստաշրջանի 2018 թվականի մարտի 20-21-ի հերթական նիստերի 20.03.2018 թ. արձանագրության համաձայն՝ գաղտնի քվեարկությամբ՝ 64 կողմ, դեմ 27՝

16. <http://parliament.am/register.php?lang=arm&month=02&year=2018>.
 17. http://parliament.am/draft_docs6/BDKH/BDKH_haytararutyun.pdf.
 18. http://parliament.am/draft_docs6/BDKH/Gagik_Harutyunyan.pdf.
 19. <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=9767&Reading=0>.

ծայների հարաբերակցությամբ Սահմանադրական Դատարանի նախագահ է նշանակվել Հրայր Թովմասյանը:

Շարդրանքից հետևում է՝

1. այն դեպքում, երբ ԲԴԽ-ն ձևավորվում է գործող Սահմանադրության նորմերի պահանջներին համապատասխան (որոշակի խախտումներով), Սահմանադրական Դատարանը ձևավորվում է նախատեսված անցումային դրույթներին համապատասխան, որը ապահովում է մերժված Սահմանադրական դատարանի մոդելի վերարտադրումը Հայաստանի Հանրապետությունում:

Հարց՝ ինչո՞ւ:

2. Սահմանադրական Դատարանի նախկին նախագահը ընտրվել է ԲԴԽ-ի անդամ, երբ ինքը դեռ Սահմանադրական դատարանի նախագահ էր.

Հարց՝ ինչո՞ւ:

3. Նախկին ՍԴ նախագահը Սահմանադրական Դատարանի նախագահի պաշտոնից հրաժարական է տալիս պաշտոնավարման ժամկետի լրանալուց 22 օր շուտ:

Հարց՝ ինչո՞ւ:

4. Հ. Թովմասյանը նշանակվում է Սահմանադրական Դատարանի նախագահ 2018 թ. մարտի 12-ին հին 2005 թ. Սահմանադրությամբ Սահմանադրական Դատարանի կազմավորման համար նախատեսված դրույթներին համապատասխան, նախագահի պաշտոնավարման օրվանից 28 օր շուտ:

Հարց՝ ինչո՞ւ. արդյո՞ք կար մտավախություն, որ Հ. Թովմասյանը չէր ընտրվի Սահմանադրական Դատարանի նախագահ ՀՀ նախագահի պաշտոնավարման պարագայում: Իհարկե ոչ՝, առավել ևս այն դեպքում, երբ նախագահը առաջադրվել էր նորընտիր պառլամենտում կայուն մեծամասնություն ունեցող կուսակցության՝ ՀՀԿ-ի կողմից:

Արդյունքում, մերժելով Սահմանադրական Դատարանի հին մոդելը՝ առաջարկվում և

Սահմանադրությամբ ամրագրվում է Սահմանադրական Դատարանի նոր մոդել, բայց ձևավորվում է մերժվածը:

Ստացվում է, որ կա հին սահմանադրությամբ ձևավորված Սահմանադրական Դատարան, որը պետք է իրականացնի նոր սահմանադրական նորմերի իրացման սահմանադրականության ապահովումը:

Ակամայից հարց է ծագում՝ ինչպե՞ս պետք է ապահովի սահմանադրականությունը մի մարմին, որը լեգիտիմ չէ, այն դեպքում, երբ լեգիտիմ իշխանությունը սահմանադրականության գրավականն է²⁰:

Գործող Սահմանադրական դատարանի՝ ոչ լեգիտիմ լինելը կարելի է հիմնավորել մի շարք հիմքերով:

1. Ժողովրդի կողմից մերժվել և ճանաչվել է ոչ լեգիտիմ այն իշխանությունը, որն ընտրել է գործող Սահմանադրական Դատարանը: Ոչ լեգիտիմ իշխանության կողմից ձևավորված բոլոր մարմինները լեգիտիմ չեն:

2. Կա հակասություն նոր և հին սահմանադրությունների միջև. մերժելով հինը, սահմանելով նորը, բայց շարունակելով նորի կյանքի կոչումը գործող սահմանադրության նորմ սկզբունքներին անհամապատասխան՝ միանշանակ հակասահմանադրական է և անբարոյական:

3. Սահմանադրական դատարանը պետք է ապահովի գործող սահմանադրության նորմերի իրավական պաշտպանությունը՝ սահմանադրականությունը, այն դեպքում երբ գործող Սահմանադրական դատարանի ձևավորումը ամբողջությամբ հակասահմանադրական է:

Հետևաբար՝ եթե սահմանադրական նորմերի բովանդակությունը և սահմանադրության ընդունման նպատակները չեն համապատասխանում, ուրեմն ընդունված սահմանադրությունը կարելի է անվանել կեղծ, շինծու:

Այստեղից հետևություն՝ ու՛մ էր պետք սահմանադրական նման անցումային դրույթ-

20. Sбн Джангирян Ж.Д., Легитимная власть гарант конституционализма, Конституционное и муниципальное право, М. 2013.

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԻԿՅԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների
իրավունքների պաշտպանության բաժնի պետ,
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
գիտակրթական միջազգային կենտրոնի
Քաղաքագիտության ամբիոնի դասախոս
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԴՆԹ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԴԱՇԴԱՆՈՒՄԸ՝ ՄԻջԱՄՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՁԻ
ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՐԳԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ**

ների սահմանումը: Պատասխանը թողնում եմ ընթերցողի հայեցողությանը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի հարգանքի իրավունք:

Անձնական կյանքի հարգման իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է և պետք է խստորեն պահպանվի: Ընդ որում, այս իրավունքը երաշխավորող պաշտպանությունը, ի տարբերություն մի շարք այլ իրավունքների, կիրառվում է միայն այն դեպքերում, երբ խախտումը կատարում է պետությունը, այլ ոչ թե մասնավոր անձը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ անձնական և ընտանեկան կյանքը «հարգելու» իրավունք ասելով չպետք է ենթադրել միայն պետության կողմից պասիվ վարքագծի դրսևորում, այսինքն՝ ձեռնպահ մնալ անձնական և ընտանեկան կյանքին միջամտելուց: Եվրոպական դատարանն իր վճիռներում նշում է, որ «հարգանք» ասելով՝ պետք է հասկանալ նաև պետության կողմից անձի պաշտպանվելու պոզիտիվ իրավունքը: Անձնական կյանքի հարգման իրավունքը ներառում է նաև անհատի անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հավաքումը, գրանցումը,

պահպանումը և օգտագործումը: Եվրոպական դատարանը, «Տվյալների պաշտպանության մասին» կոնվենցիայի դրույթների իմաստով, ի թիվս այլնի, անձնական տվյալներ է համարում նաև ԴՆԹ բնութագրերը, քանի որ դրանք վերաբերում են արդեն նույնականացված անձանց և անձանց, որոնք հետագայում կարող են նույնականացվել¹:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ պաշտոնատար անձանց կողմից անձին վերաբերող տեղեկությունների հավաքումն առանց նրա գիտության և համաձայնության պետք է դիտարկել կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված՝ անձնական կյանքի իրավունքի նկատմամբ միջամտություն՝ անկախ այն հանգամանքից, այդ տեղեկությունները հետագայում օգտագործվել են, թե ոչ²:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ս-ն և Մարփերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի վճռում հայտնել է իրավական դիրքորոշում առ այն, որ իշխանությունների կողմից պահվող անձնական տեղեկատվության հետագա օգտագործման համար անձի անհանգստությունը իրավաչափ է և համապատասխանում է այն հարցի որոշմանը՝ արդյո՞ք կա միջամտություն, թե ոչ: Հաշվի առնելով գենետիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումների

1. Տե՛ս Ս-ն և Մարփերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (S. and Marper v. the United Kingdom) գործով 2008 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատներ թիվ 30562/04 և 30566/04, կետ 68:
2. Տե՛ս Ամանն ընդդեմ Շվեյցարիայի (Amann v. Switzerland) գործով 2000 թվականի փետրվարի 16-ի վճիռը, գանգատ թիվ 27798/95, կետ 69:

արագ տեմպը՝ չի կարելի հաշվի չառնել այն հնարավորությունը, որ հետագայում գենետիկ տեղեկատվությանն առնչվող անձնական կյանքի շահերը կարող են բացասական ազդեցության ենթարկվել նոր միջոցներով կամ ձևերով, որոնք այսօր չեն կարող կանխատեսելի լինել (կետ 71): Սակայն եվրոպական դատարանը նշել է, որ իշխանությունների կողմից պահվող անձնական տեղեկատվության հետագա օգտագործման հնարավորությունից բացի, անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ բջջային նմուշները իրենց մեջ պարունակում են անձի վերաբերյալ շատ զգայուն տեղեկություններ, ներառյալ՝ նրա առողջության վերաբերյալ: Ավելին՝ նմուշները պարունակում են ինչպես անձին, այնպես էլ նրա հարազատներին առնչվող գենետիկ ծածկագիր (կետ 72): Հաշվի առնելով բջջային նմուշներում պարունակվող անձնական տեղեկատվության բնույթն ու չափը՝ դրանց հետագա պահպանումը պետք է համարվի անձանց անձնական կյանքը հարգելու իրավունքին խոչընդոտող: Այն փաստը, որ իշխանությունների կողմից ԴՆԹ բնութագրի միջոցով այս տեղեկատվության միայն սահմանափակ մասն է իրականում արդյունահանվում կամ օգտագործվում և անմիջական վնաս չի պատճառվում անձին, չի փոխում եզրահանգումը (կետ 73):

Եվրոպական դատարանի կարծիքով՝ ԴՆԹ բնութագրի՝ անձանց միջև գենետիկական կապը որոշելու կարողությունն ինքնին բավարար է եզրակացնելու, որ դրանց պահպանումը միջամտում է անձանց անձնական կյանքը հարգելու իրավունքին: Այս եզրահանգման վրա չի ազդում այն հանգամանքը, որ տեղեկատվությունը ծածկագրված է, հասկանալի է միայն համակարգչային տեխնոլոգիաների օգտագործմամբ և հասանելի միայն սահմանափակ թվով անձանց (կետ 75):

Ամփոփելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրահանգել է, որ ինչպես բջջային նմուշների, այնպես էլ ԴՆԹ բնութագրերի պահպանումը հանգեցնում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ անձի անձնական կյանքը հարգելու իրավունքի միջամտության (կետ 77):

Հետաքրքիր դիրքորոշում է հայտնել նաև Կանադայի գերագույն դատարանը: Մասնավորապես՝ «R-ն ընդդեմ S.A.B.» գործով դատարանը նշել է, որ մարդու ԴՆԹ-ն պարունակում է մարդու և նրա անձնական կյանքի մասին հսկայական ծավալի տեղեկատվություն: Ի տարբերություն մատնահետքերի՝ այն կարող է բացահայտել մարդու կենսաբանական պատկերի ամենածածուկ մանրամասները: ԴՆԹ նմուշառումը և պահպանումը պակաս կարևոր հարց չէ, և հասարակության հստակ շահագրգռվածության բացակայության պայմաններում պետության լուրջ միջամտություն է հանդիսանում իրավունքի սուբյեկտի կողմից մարդու մասնավոր կյանքի անձնական և տեղեկատվական իրավունքների իրականացման հարցերում³:

Խնդրի կապակցությամբ ուսումնասիրել է նաև Եվրոպայի խորհրդի մասնակից պետությունների օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան: Մասնավորապես՝ Ավստրիայում, Բելգիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Հունգարիայում, Իռլանդիայում, Իտալիայում, Լյուքսեմբուրգում, Նիդերլանդներում, Նորվեգիայում, Լեհաստանում, Իսպանիայում և Շվեդիայում քրեական գործերով հետաքննության ժամանակ ԴՆԹ-ի մասին տեղեկատվությունը հաշվառվում է ոչ թե պարբերաբար, այլ միայն որոշ հատուկ դեպքերում և/կամ երբ խոսքը վերաբերում է առավել ծանր, հատկապես երկարաժամկետ ազատազրկում նախատեսող հանցագործությունների մասին: Հինգ պետություններում (Բելգիա, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա և Շվեդիա) անձի նկատմամբ արդարացման դատավճռի կայացման կամ հարուցված քրեական գործով վարույթի դադարեցման դեպքում ծառայողական հրահանգի հիման վրա նման տեղեկությունները ենթակա են ոչնչացման: Վերը նշված մյուս պետություններում կիրառվում է նույն ընդհանուր սկզբունքը՝ չափազանց հազվադեպ դեպքերի համար նախատեսված որոշ բացառություններով: Օրինակ՝ Գերմանիայում, Լյուքսեմբուրգում և Նիդերլանդներում նման տեղեկատվությունը կարող է պահպանվել այն դեպքում, երբ անձի նկատմամբ դեռևս

3. Տե՛ս «R. ընդդեմ S.A.B.» գործով Կանադայի գերագույն դատարանի վճիռը, կետ 48:

պահպանվում են կասկածներ, կամ եթե առանձին գործի վերաբերյալ պահանջվում է լրացուցիչ հետաքննություն: Ավստրիայում այն կարող է պահպանվել, եթե առկա է հանցագործի կողմից նոր հանցագործություն կատարելու վտանգը, իսկ Լեհաստանում՝ որոշ ծանր հանցագործությունների դեպքում: Իսպանիայում և Նորվեգիայում ԴՆԹ-ի պահպանում թույլատրվում է հանցակազմի բացակայության պատճառով կասկածյալին ազատ արձակելու դեպքում, Ֆինլանդիայում և Դանիայում այդ տեղեկատվության պահպանումը թույլ է տրվում արդարացման վճռի կայացման դեպքում համապատասխանաբար 1 և 10 տարիների ընթացքում, իսկ Շվեյցարիայում՝ գործի վարույթի ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում: Ֆրանսիայում ԴՆԹ բնութագրերը կարող են պահպանվել արդարացման վճռի կայացումից կամ կասկածյալի նկատմամբ դատաքննության դադարեցումից հետո՝ 25 տարվա ընթացքում. ընդ որում, այդ ժամանակահատվածում դատախազը կարող է կարգադրել ոչնչացնել տվյալները՝ սեփական նախաձեռնությամբ կամ այլ անձի միջնորդությամբ, եթե դրանց պահպանումն այլևս անհրաժեշտ չէ կասկածյալի կապը հետաքննվող գործի հետ հաստատելու համար: Լատվիայում և Էստոնիայում նույնպես թույլատրվում է կասկածյալների նկատմամբ արդարացման վճիռ կայացնելուց հետո ԴՆԹ բնութագրերի պահպանում որոշակի ժամկետի ընթացքում:

Եվրոպայի խորհրդի 1981 թվականի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի 5-րդ հոդվածի «ե» ենթակետի համաձայն՝ ավտոմատ մշակման ենթարկվող անձնական տվյալները պետք է պահպանվեն այնպիսի եղանակով, որը թույլ է տալիս նույնականացնել տվյալների սուբյեկտներին՝ ոչ ավելին, քան անհրաժեշտ է այդ տվյալների պահպանման նպատակներով:

Պետք է նշել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված՝ թիվ R(92)1 հանձնարարականի 8-րդ կետով սահմանվում է, որ ԴՆԹ փորձաքննության համար անձանցից ստացված նմուշները կամ այլ մարմնի հյուսվածքները չպետք է պահպանվեն գործի վերջնական որոշումից

հետո՝ բացառությամբ եթե դրանք ուղղակիորեն կապված չեն այն նպատակների հետ, որոնց համար վերցվել են: Պետք է միջոցներ ձեռնարկել, որ ԴՆԹ փորձաքննության արդյունքները և դրա վերաբերյալ տեղեկությունները ոչնչացվեն, երբ դրանք այլևս անհրաժեշտ չէ պահպանել դրանք վերցնելու նպատակների համար:

Հանձնարարականի բացատրական հուշագրի 50-րդ կետի համաձայն՝ ընդհանուր մոտեցումն այնպիսին է, որ ԴՆԹ-ի վերաբերյալ կատարված եզրակացությունները և դրանց հիմքում ընկած նմուշները պետք է ոչնչացվեն, երբ այլևս դրանց պահպանման և օգտագործման նպատակը զոյություն չունի: Դա, որպես կանոն, տեղի է ունենում, երբ իրավախախտ անձի մեղավորության վերաբերյալ վերջնական որոշում է ընդունվում:

Բիոէթիկայի հանձնաժողովի հատուկ փորձագիտական հանձնաժողովը (CAHBI) գտել է, որ ներպետական օրենսդրությամբ «վերջնական որոշում» հասկացության տակ սովորաբար հասկացվում է դատական ակտը: Այնուամենայնիվ, աշխատանքային խումբն ընդունել է տվյալների շտեմարանի ստեղծման անհրաժեշտությունը որոշ դեպքերի և հանցագործությունների որոշ տեսակների համար, որոնք այնքան լուրջ են, որ կարող են համարվել այլ մոտեցում պահանջող հանգամանքներ: Աշխատանքային խումբը եկել է նման եզրահանգման «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, «Տվյալների պաշտպանության մասին» կոնվենցիայի և Եվրոպայի խորհրդի շրջանակի ներքո կազմված այլ նորմատիվ-իրավական ակտերի դրույթների խորը վերլուծության հիման վրա: Աշխատանքային խումբը նաև հաշվի է առել այն հանգամանքը, որ Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները պահպանում են դատվածությունների մասին տեղեկատվությունը, որը կարող է օգտագործվել քրեական դատավարության նպատակների համար: Այն հնարավոր է համարում նման բացառությունների սահմանումը՝ հետևյալ պայմանների հստակ պահպանման դեպքում.

- դատարանի կողմից անձի նկատմամբ մեղադրական վճռի կայացում,
- դատարանի կողմից անձի դատա-

պարտում մարդու կյանքին կամ առողջությանը վտանգող ծանր հանցագործություն կատարելու համար,

- տվյալների պահպանման ժամկետը խստորեն սահմանափակված է,
- տվյալների պահպանումը սահմանվում և կարգավորվում է օրենքով,
- տվյալների պահպանման գործընթացը վերահսկվում է խորհրդարանի կամ որևէ վերահսկիչ մարմնի կողմից:

Հանձնարարականի 8-րդ կետով սահմանվում է նաև, որ ԴՆԹ փորձաքննության արդյունքները և դրա վերաբերյալ տեղեկությունները, ամեն դեպքում, կարող են պահպանվել, եթե անձը մեղադրվել է կյանքի, անձնական անձեռնմխելիության և անվտանգության դեմ ուղղված ծանր հանցագործություններ կատարելու մեջ: Համաձայն նույն կետի՝ անձանցից ստացված նմուշները կամ այլ մարմնի հյուսվածքները և դրա վերաբերյալ տեղեկությունները **կարող են պահպանվել երկար ժամկետով միայն 2 դեպքում՝ երբ պահանջում է անձը, կամ երբ նմուշը որևէ անձի չի վերագրվում (օրինակ, եթե այն վերցվել է հանցագործության դեպքի վայրից):**

Հատկանշական է, որ ՀՀ ներպետական օրենսդրությունը ԴՆԹ բնութագրերի հավաքման և պահման վերաբերյալ պարունակում է դրույթներ, որոնք խնդրահարույց են անձի անձնական կյանքի հարգման իրավունքի տեսանկյունից: Մասնավորապես՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 6.2-րդ կետի համաձայն՝ Ոստիկանությունը հանցագործություններ հայտնաբերելիս և բացահայտելիս իրավունք ունի կենսաբանական ծագում ունեցող հետքերով ծանր և առանձնապես ծանր, ինչպես նաև սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություն կատարած անձանց հայտնաբերելու (բացահայտելու) նպատակով իրականացնել կենսաբանական ծագման նմուշներում հայտնաբերված և նույնականացված ԴՆԹ (դեզօքսիռիբոնուկլեինաթթու) բնութագրերի

հաշվառումներ: Հաշվառման ենթակա են հանցագործության դեպքի վայրից վերցված քրեական գործով չպարզված անձանց և մեղադրյալից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վերցված նմուշներից դատագենետիկական փորձաքննությունների արդյունքում հայտնաբերված ԴՆԹ բնութագրերը: **ԴՆԹ բնութագրերը պահվում են 80 տարի ժամկետով, բացառությամբ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ չիրականացնելու մասին որոշում կայացվելու կամ արդարացնող հիմքով քրեական գործի վարույթը կարճվելու կամ արդարացման դատավճիռ կայացվելու դեպքերի,** որոնց պարագայում ԴՆԹ բնութագիրը ենթակա է ոչնչացման՝ ոստիկանության տեղեկատվական կենտրոնից այդ մասին տեղեկատվությունն ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:

Ստացվում է՝ ԴՆԹ բնութագրերը չեն պահպանվում միայն քրեական հետապնդումը դադարեցնելու կամ չիրականացնելու մասին որոշում կայացվելու կամ արդարացնող հիմքով քրեական գործի վարույթը կարճվելու կամ արդարացման դատավճիռ կայացվելու դեպքում: Իսկ մյուս դեպքերում մեղադրյալից վերցված նմուշներից դատագենետիկական փորձաքննությունների արդյունքում հայտնաբերված ԴՆԹ բնութագրերը ենթակա են պահպանման 80 տարի ժամկետով, նույնիսկ եթե անձը չի խնդրում պահպանել դրանք, ավելին՝ պահանջում է վերացնել դրանք:

Հաշվի առնելով վերը նշված միջազգային իրավական չափանիշները և առաջատար երկրների միջազգային փորձը՝ անհրաժեշտ է.

1) վերանայել ԴՆԹ բնութագրերի պահպանման չափազանց երկար՝ 80-ամյա ժամկետը,

2) հստակ սահմանել, որ անկախ անձի մեղքի առկայությունից և քրեական գործի արդյունքից՝ ԴՆԹ-ի բնութագիրը երկար ժամկետով կարող են պահպանվել միայն այն դեպքում, եթե անձն է պահանջում, կամ դրանք վերցվել են դեպքի վայրից և որևէ անձի չեն վերագրվում:

ՍԱՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Արարատի մարզի դատախազության դատախազ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ:
ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ**

Ցանկացած ինստիտուտի վերաբերյալ բազմակողմանի ուսումնասիրություն իրականացնելու, ինչպես նաև կատարված հետևությունների հիմնավորվածությունն ապահովելու համար անհրաժեշտ է նախ և առաջ անդրադառնալ այդ ինստիտուտի հասկացության վերլուծությանը, ինչից ելնելով հարկ ենք համարում ուսումնասիրությունը սկսել ընդհանուր սեփականության հասկացության և տեսակների վերլուծությամբ:

Այսպես, ներկայումս ընդհանուր սեփականության տեսական և գործնական հիմնախնդիրները պահանջում են բազմակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն՝ բացահայտելու և վերհանելու ոլորտում առկա բացթողումներն ու խնդիրները և առաջադրել հնարավոր լուծումներ՝ հաշվի առնելով ինչպես այդ հարաբերությունների առանձնահատկությունները, այնպես էլ միջազգային իրավական պրակտիկայում առկա մոտեցումները:

Ընդհանուր սեփականությունը քաղաքացիական իրավունքի առանցքային ինստիտուտներից մեկն է, որի վերաբերյալ առկա մասնագիտական գրականությունը վկայում է նշված ոլորտի կարևորության մասին, և չնայած ոլորտում առկա հիմնախնդիրները բազմիցս ուսումնասիրվել են, այնուամենայնիվ, ընդհանուր սեփականության ինստիտուտի ուսումնասիրությունը շարունակում է մնալ արդիական:

Սոցիալական պետության կարևոր խնդիրներից մեկը հանդիսանում է սեփականության՝ այդ թվում ընդհանուր սեփականության

պաշտպանությունն ու պահպանությունը¹: Սեփականության իրավունքը, բնականաբար, թելադրում է գույքային հարաբերությունների կարգավորման անհրաժեշտություն: Այդ կարգավորման հիմնական բովանդակությունը սեփականության պաշտպանությունն է²:

Սեփականության իրավունքի և այդ իրավունքի պաշտպանությանն ուղղված նորմերն ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ, մասնավորապես 10-րդ հոդվածի 1-ին կետում, որի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: ՀՀ Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքներ» վերտառությամբ բաժնում ամրագրված սույն հոդվածը ելակետային նշանակություն ունի տնտեսական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման համար³:

Սեփականության իրավունքը կարևորվել է նաև միջազգային այնպիսի իրավական փաստաթղթերով, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա):

Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը երաշխավորում է սեփականության իրավունքը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ևս ճանաչում է սեփականության իրավունքը, մասնավորապես 17-րդ հոդվածում ամրագրված է ինչպես

1. Տե՛ս **Никитин В. А.**, Право собственности в СССР, М., 1958, էջ 22:
2. Տե՛ս **Պապյան Ռ.**, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Սբ. Էջմիածին, 2002, էջ 2013:
3. Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Եր, «Իրավունք», 2010, էջ 116-117:

միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ սեփականություն ունենալու յուրաքանչյուրի իրավունքը:

«Քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ միևնույն գույքը կարող է պատկանել ինչպես մեկ, այնպես էլ երկու կամ ավելի անձանց, մասնավորապես՝ «Քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի համաձայն՝ երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում ընդհանուր սեփականության իրավունքով: Երբ գույքը պատկանում է երկու և ավելի անձանց, առաջանում է այդ սուբյեկտների ընդհանուր սեփականությունը:

Վերոգրյալից հետևում է, որ սեփականության իրավունքը, այդ թվում՝ ընդհանուր սեփականության իրավունքը կարգավորվում է ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային պայմանագրերով, ընդ որում, նախատեսվում է սեփականության պատկանելությունը ինչպես մեկ անձի, այնպես էլ երկու կամ ավելի անձանց, որն անվանվում է ընդհանուր սեփականություն: Երկու դեպքում էլ և՛ ներպետական օրենսդրությամբ, և՛ միջազգային պայմանագրերով նախատեսված են սեփականության իրավունքի և այդ իրավունքի պաշտպանությանն ուղղված երաշխիքներ:

Ընդհանուր սեփականության հասկացության բացահայտումը պահանջում է սահմանազատել ընդհանուր (բազմասուբյեկտ) սեփականությունը մի քանի անձանց միջոցներով ստեղծված իրավաբանական անձի (միասուբյեկտ) սեփականությունից:

Ընդհանուր սեփականության իրավունքի տարբերակիչ հատկանիշներն են ընդհանուր գույքի առկայությունը և այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտների բազմակիությունը կամ համասեփականատերերի գոյությունը, որից բխում է, որ ընդհանուր սեփականությունը բազմասուբյեկտ սեփականություն է⁴:

Ընդհանուր սեփականության հարաբերություններում «համասեփականատերերի կողմից գույքի միավորում» չի կատարվում, «խառը» սեփականություն չի առաջանում,

իրավունքի որևէ նոր սուբյեկտ չի ստեղծում, գույքի միավորում կամ խառնում տեղի չի ունենում, այլ նույն գույքի նկատմամբ առաջանում է սուբյեկտների բազմաթիվություն⁵: Ընդհանուր սեփականությունը բնութագրվում է բազմաթիվ սուբյեկտների և մեկ օբյեկտի առկայությամբ: Ընդհանուր սեփականության հարաբերություններ կարող են առաջանալ սեփականության իրավունքի սուբյեկտների միջև, այն է՝ քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետության, համայնքի, որոնք իրենց իրավագործությունները պարտավոր են իրականացնել փոխադարձ համաձայնությամբ⁶:

Նկատենք, որ «Օրենսդրությամբ սահմանված չէ ընդհանուր սեփականության սուբյեկտների շրջանակը, սակայն համակարգային վերլուծության արդյունքում կարող ենք եզրահանգել, որ ընդհանուր սեփականության սուբյեկտներն են քաղաքացիները, իրավաբանական անձինք, պետությունը, համայնքը:

Կարծում ենք, որ տարամեկնաբանություններից և հետագայում պրակտիկայում հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է հստակեցնել սուբյեկտների շրջանակը և «Քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ կերպ. «Երկու կամ ավելի անձանց (ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետության, համայնքի) սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում ընդհանուր սեփականության իրավունքով»:

Հատկանշական է, որ ընդհանուր սեփականությունը բնութագրող հատկանիշ հանդիսացող սուբյեկտների բազմաթիվությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է, իսկ մյուս էական հատկանիշը հանդիսանում է ընդհանուր օբյեկտի առկայությունը, այսինքն՝ ընդհանուր սեփականության հարաբերությունների իրավական կարգավորման համար քննարկման առարկա է հանդիսանում միևնույն օբյեկտի նկատմամբ մի քանի սուբյեկտների սեփականության իրավունքը:

«Օրենսդրության ուսումնասիրությունից հետևում է, որ ընդհանուր սեփականության

4. Տե՛ս **Նազարյան Վ.**, «Քաղաքացիական օրենսգրքի գիտագործնական մեկնաբանություններ, Ե., 2000, էջ 59:

5. Տե՛ս Гражданский кодекс Российской Федерации, Комментарий, М., 1995, էջ 295:

6. Տե՛ս Гражданское право, под ред.Е.А. Суханов, том 1, М.,1998, էջ 578:

օբյեկտ է համարվում գույքը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի

1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքի օբյեկտներն են գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, ընդ որում հարկ է նշել, որ ընդհանուր սեփականության օբյեկտ կարող է լինել միայն այն գույքը, որը սեփականության իրավունքով կարող է պատկանել ընդհանուր սեփականության սուբյեկտներին:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է պատասխանել այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք միևնույն գույքը ընդհանուր սեփականության իրավունքով կարող է պատկանել և՛ քաղաքացիներին, և՛ պետությանը:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցներն են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք ու իրավաբանական անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ պետությունը քաղաքացիաիրավական հարաբերություններում քաղաքացիների հետ հանդես է գալիս հավասար հիմունքներով, ինչը նշանակում է, որ միևնույն գույքի նկատմամբ և՛ քաղաքացիները, և՛ պե-

տությունը կարող են ունենալ սեփականության իրավունք. միևնույն ժամանակ հարկ է առանձնացնել ՀՀ Սահմանադրությամբ որպես պետության բացառիկ սեփականություն հանդիսացող ընդերքը և ջրային ռեսուրսները, որոնց նկատմամբ ընդհանուր սեփականության որևէ այլ սուբյեկտ, բացի պետությունից չի կարող ունենալ սեփականության իրավունք:

Հետևաբար՝ միևնույն գույքի նկատմամբ ընդհանուր սեփականություն և՛ քաղաքացիների, և՛ պետության միջև կարող է առաջանալ, սակայն տեսությամբ ամրագրված նորմերը, կարծես, պրակտիկայում կիրառություն չեն ստացել, մասնավորապես պրակտիկայում հայտնի չէ միևնույն գույքի նկատմամբ քաղաքացիների և պետության համասեփականություն:

Այսպիսով, քաղաքացիական իրավունքի տեսությունում տարբեր հեղինակների կողմից առանձնացված չափանիշների համակցությամբ հնարավոր է արտացոլել ընդհանուր սեփականության էությունը, մասնավորապես ընդհանուր սեփականության համար բնորոշ հատկանիշներն են սուբյեկտների բազմաթիվությունը և միևնույն օբյեկտի առկայությունը:

Ա. Պ. Սերգենը, Յ. Կ. Տոլստոյը նշել են, որ ընդհանուր սեփականությունը բնութագրվում է որպես բազմաթիվ սուբյեկտների սեփականության իրավունք, որոնք հանդիսանում են ընդհանուր սեփականության մասնակիցներ կամ համասեփականատերեր: Միևնույն օբյեկտի նկատմամբ իրավունքի սեփականության սուբյեկտների բազմաթիվությունն էլ անհրաժեշտություն է առաջացնում ընդհանուր սեփականության հարաբերությունների կարգավորման նախատեսման համար⁷:

Ռուս իրավագետ Վ. Ա. Նիկիտինի պնդմամբ հասարակության զարգացման հետ մեկտեղ փոխվում են նաև սեփականության ձևերը: Սեփականության իրավունքը ծագում է այն դեպքում, երբ սեփականությունը պատկանում է քաղաքացիներին, սակայն երբ այն պատկանում է երկու կամ ավելի անձանց, առաջանում է ընդհանուր սեփականությունը⁸:

Վ. Նազարյանը նշել է, որ ընդհանուր սեփականության իրավունք չի ծագում,

7. St'u Гражданское право, под ред. А. П. Сергеев, Ю.К. Толстой, том 1, М., 2008, էջ 522:

եթե գույքը կազմված է մի քանի բաղադրամասերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփականատերը: Նման իրավիճակ, օրինակ, ծագում է բազմաբնակարան շենքի բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու դեպքում: Բնակարան գնած քաղաքացու մոտ դրա նկատմամբ ծագում է սեփականության իրավունք, մինչդեռ ամբողջությամբ շենքի նկատմամբ նրա մոտ ընդհանուր սեփականության իրավունք չի առաջանում: Հետևաբար՝ շենքի նկատմամբ ընդհանուր սեփականության մասին քաղաքացիական օրենսդրության կանոնները չեն տարածվում առանձին բնակարանների վրա: Սակայն այս դեպքում էլ անխուսափելի է շենքից անբաժանելի ընդհանուր օգտագործման օբյեկտների (տանիքի, հիմքի, նկուղի, աստիճանների, վերելակների և այլնի) նկատմամբ ընդհանուր սեփականության գոյությունը, որոնք ապահովում են շենքի բնականոն տնտեսական օգտագործումը: Ընդհանուր բաժնային սեփականության դեպքում սեփականատերերից յուրաքանչյուրը որոշակի բաժին ունի ընդհանուր գույքի նկատմամբ սեփականության իրավունքում: Ընդհանուր համատեղ սեփականության դեպքում դրա մասնակիցները գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքում նույնպես ունեն բաժիններ, սակայն դրանց չափերը նախապես որոշված չեն: Դրանք որոշվում են սոսկ ընդհանուր սեփականության հարաբերությունները դադարելիս կամ մասնակի առանձնանալիս⁹:

Կ. Ի. Սկլովսկին նշել է, որ ընդհանուր սեփականությունը առաջանում է պատահաբար կամ անհրաժեշտաբար, որի բնութագրական առանձնահատկությունն այն է, որ իրականությունում անհնար է գտնել այնպիսի համաձայնություն, որի հիմնական նպատակը ընդհանուր սեփականության առաջացումն է¹⁰:

Միաժամանակ Ե. Ա. Սուխանովը նշել է, որ ընդհանուր սեփականությունը չի հանդիսանում սեփականության առանձին տեսակ,

այն հիմնվում է սեփականության գոյություն ունեցող ձևերի վրա¹¹:

Իրավաբանական գրականության մեջ առանձնացվում է ընդհանուր սեփականության իրավունքի երկու ընկալում՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Մի շարք հեղինակներ գտնում են, որ ընդհանուր սեփականության իրավունքը կարող է գոյություն ունենալ միայն օբյեկտիվ իմաստով, որը չունի սուբյեկտիվ ընկալում կամ հասկացություն¹², մինչդեռ հեղինակների մյուս մասը առանձնացնում է նաև ընդհանուր սեփականության իրավունքի սուբյեկտիվ իմաստը, մասնավորապես ինչպես նշել է Ե. Ա. Սուխանովը, նման տեսակետն անընդունելի է այն հիմնավորմամբ, որ այն հակասում է գործող օրենսդրությանը, քանի որ օրենսդիրը նախատեսել է «Ընդհանուր սեփականության իրավունք» վերտառությամբ գլուխ, բացի այդ, ընդհանուր սեփականության իրավունքի սուբյեկտիվ ընկալումը բխում է իրավունքի ընդհանուր տեսությունից¹³:

Անդրադառնալով ընդհանուր սեփականության տեսակներին՝ հարկ է նշել, որ ներպետական օրենսդրությամբ առանձնացվում է երկու տեսակ՝ համատեղ և բաժնային:

«Հ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում է ընդհանուր սեփականության իրավունքով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքը կարող է սեփականությանը պատկանել սեփականության իրավունքում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշելով (բաժնային սեփականություն) կամ առանց այդ բաժինները որոշելու (համատեղ սեփականություն):

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ընդհանուր սեփականության երկու տեսակ՝ բաժնային և համատեղ. ընդ որում, սեփականությունը

8. Տե՛ս **Никитин В. А.**, Право собственности в СССР, М., 1958, էջ 18-19:

9. Տե՛ս **Նազարյան Վ.**, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գիտագործնական մեկնաբանություններ, Ե., 2000, էջ 59-61:

10. Տե՛ս **Скловский К. И.**, Собственность в гражданском праве, М., Издательство «Дело», 1999, էջ 167-168:

11. Տե՛ս **Гражданское право**, под. ред. Е. А. Суханов, том 1, М., 1998, էջ 578:

12. Տե՛ս **Мисник Н.Н.**, Правовая природа общей собственности, Правоедение, 1993, էջ 33:

13. Տե՛ս, **Гражданское право**, под. ред. Е.А.Суханов, том 1, М., 1998, էջ 578-579:

կարող է համարվել ընդհանուր բաժնային, երբ ընդհանուր սեփականության իրավունքում մասնակիցների բաժինները որոշված են: Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ սեփականությունը համարվում է բաժնային, եթե օրենքով դրա նկատմամբ սահմանված չէ համատեղ սեփականություն, ինչը նշանակում է, որ սույն հոդվածում տրված չէ ընդհանուր բաժնային սեփականության հասկացությունը: Այն բացահայտվում է միայն բացառման սկզբունքի կիրառմամբ, մինչդեռ ցանկացած երևույթի սահմանումը ենթադրում է նրա ընդհանուր և էական հատկանիշների վերացարկված արտացոլում:

Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ ընդհանուր բաժնային սեփականության հասկացությունն ունի կարևոր գիտական նշանակություն¹⁴: Ընդհանուր բաժնային սեփականության հասկացության համար բնութագրական է հանդիսանում նրա բաժնային բնույթը¹⁵:

Ընդհանուր բաժնային սեփականության հասկացությունը օբյեկտիվ իմաստով բնութագրվում է որպես իրավական նորմերի համակցություն, որը կարգավորում է միևնույն գույքի նկատմամբ մի քանի սեփականատերերի իրավահարաբերությունները, իսկ սուբյեկտիվ իմաստով բնութագրվում է որպես երկու կամ ավելի անձանց իրավունք փոխադարձ համաձայնությամբ և իրենց հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել ընդհանուր ունեցվածքը¹⁶:

Ընդհանուր բաժնային սեփականության հիմնական առանձնահատկությունը սեփականության իրավունքում համասեփականատերերից յուրաքանչյուրին պատկանող բաժնի որոշակիությունն է: Ընդհանուր բաժնային սեփականության համասեփականատիրոջ իրավունքը կախված է նրա մասնակցության փաստից, իսկ բաժնի չափը՝ իր ներդրած միջոցների չափից, համասեփականատերեր դառնալու հանգամանքից, օրինակ կտակարարի կամքից, ժառանգությամբ թողնված գույքի արժեքից և այլն¹⁷:

Ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցների թվի փոփոխությունը մյուսների բաժնի չափի վրա չի ազդում, քանի որ համասեփականատերերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է դուրս գալ՝ վերցնելով իր բաժինը, որի հետևանքով մյուս սեփականատերերի բաժինը չի փոփոխվում: Կարող է փոխվել միայն բաժնի թվաքանակն արտահայտությունը:

Ընդհանուր բաժնային սեփականության մասնակցի մահվան դեպքում ժառանգություն է բացվում նաև ընդհանուր սեփականության մեջ նրա ունեցած բաժնի նկատմամբ: Ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցներին պատկանում է որոշակի բաժին և այդ բաժինն օտարելու իրավունք: Հետևաբար բաժնի օտարումով ընդհանուր սեփականության մի մասնակից փոխարինվում է մեկ այլ անձով:

Ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը, բացի ժառանգությամբ ու նվիրատվության կարգով ստացած գույքից, իրավունք է ձեռք բերում միայն այն գույքի նկատմամբ, որի ստեղծմանն անմիջական մասնակցություն է ունեցել: Ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրը իր բաժնի չափին համապատասխան մասնակցում է ինչպես ընդհանուր գույքից ստացած եկամուտների բաշխմանը, այնպես էլ նրա կառավարման և պահպանման նպատակով արված ծախսերին:

Ընդհանուր բաժնային սեփականության էությունից բխում է, որ ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցները ցանկացած ժամանակ կարող են դադարեցնել ընդհանուր սեփականությունը: Ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցներն ազատորեն օգտվում են ընդհանուր գույքում ունեցած իրենց բաժինը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու իրավազորություններից և ցանկացած ժամանակ կարող են առանձնացնել իրենց բաժինը կամ օտարել: Ընդհանուր սեփականության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ընդհանուր սեփականության մասնակիցը, երբ վաճառում է իր բաժինը,

14. Տե՛ս **Мананкова Р.П.**, «Правоотношение общей долевой собственности граждан по советскому законодательству», Томск, 1977, էջ 8:

15. Տե՛ս **Никитин В. А.**, «Право собственности в СССР», М., 1958, էջ 20:

16. Տե՛ս **Гражданское право**, под. ред. Е.А.Суханов, том 1, М., 1998, էջ 580-581:

17. Տե՛ս **Քարսեղյան Տ.Կ.**, ՀՀ Քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Ե., 2006, էջ 363-364:

մյուս մասնակիցներն ունեն այդ բաժինը գնելու նախապատվության իրավունք¹⁸:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, նախատեսելով ընդհանուր սեփականության երկու տեսակ, տարբերակման հիմքում դրել է սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշելու կամ առանց այդ բաժինը որոշելու առանձնահատկությունը: Ինչը նշանակում է, որ ընդհանուր բաժնային սեփականության բացահայտման համար անհրաժեշտ է նախ և առաջ վերհանել այն հանգամանքը, թե արդյոք ընդհանուր սեփականության իրավունք առհասարակ ծագում է, որից հետո, առաջնորդվելով օրենսգրքում ամրագրված կանոնով, տարանջատել ընդհանուր սեփականության կոնկրետ տեսակը:

Այսպիսով, ընդհանուր սեփականության երկու տեսակներն ունեն ընդհանրություն. այն է՝ թե՛ ընդհանուր համատեղ սեփականության, թե՛ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում էլ միևնույն գույքը պատկանում է մի քանի անձանց, որոնք սեփականության իրավունքով կարող են տնօրինել, տիրապետել և օգտագործել այն:

Սակայն սույն ուսումնասիրության շրջանակներում առավել կարևոր են այն տարբերությունները, որոնք ընկած են ընդհանուր սեփականության տեսակների տարանջատման հիմքում, մասնավորապես ընդհանուր սեփականության երկու տեսակների դեպքում էլ սեփականատերերից յուրաքանչյուրը որոշակի բաժին ունի ընդհանուր գույքի նկատմամբ, սակայն ընդհանուր բաժնային սեփականությունում դրանց չափերը նախապես որոշված են:

Բացի այդ, ընդհանուր համատեղ սեփականությունում սեփականատերերից յուրաքանչյուրն ունի նույնական իրավունքներ համապատասխան օբյեկտի նկատմամբ, իսկ ընդհանուր բաժնային սեփականությունում սեփականատերերի բաժնի չափը կարող է տարբերվել:

Այսպիսով, հաշվի առնելով, որ ընդհանուր սեփականությանը վերաբերող իրավանորմերը կարգավորում են ինչպես համասեփականատերերի միջև առաջացած հարաբերությունները, այնպես էլ համասե-

փականատերերի և երրորդ անձանց միջև առաջացած հարաբերությունները, անհրաժեշտ է ինքնավար կամքի դրսևորման այնպիսի իրավակարգավորում նախատեսել, որպեսզի չխաթարվեն իրավահարաբերությունների որևէ սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը՝ կանոնակարգելով ընդհանուր բաժնային սեփականության հարաբերություններում համասեփականատերերի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության հետ կապված հարցերը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ օրենսդիրը, նախատեսելով ընդհանուր սեփականության երկու տեսակ՝ բաժնային և համատեղ, սահմանել է միայն ընդհանուր սեփականության հասկացությունը, որից հետո ամրագրել է ընդհանուր սեփականության երկու տեսակների տարբերակման հիմքը՝ անտեսելով դրանցից յուրաքանչյուրի հասկացության սահմանման անհրաժեշտությունը:

Փաստորեն ներպետական օրենսդրությամբ տրված չէ ընդհանուր բաժնային սեփականության հասկացությունը, մինչդեռ ցանկացած հիմնախնդրի հիմքում համապատասխան սահմանումն է, որը թույլ է տալիս առավել հստակ պատկերացում ունենալ ուսումնասիրվող առարկայի էության վերաբերյալ:

Կարելի է համաձայնվել Գ. Հ. Ղարախանյանի տեսակետի հետ, որի համաձայն՝ ընդհանուր սեփականության իրավունքը քաղաքացիների սեփականության իրավունքի իրականացման եղանակ է: Ընդհանուր սեփականության իրավունքի ամեն մի մասնակից գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագործությունները իրականացնում է ոչ թե ինքնուրույն, այլ մյուս սեփականատերերի գիտությամբ: Ընդհանուր սեփականության մասնակիցների կամքն ուղղված է միևնույն նպատակին, նրանց կամարտահայտությունը նույնանպատակ է: Այն հակընդդեմ բովանդակություն ունենալ չի կարող: Ընդհանուր սեփականության իրավունքը քաղաքացիների սեփականության իրավունքի իրականացման եղանակ է¹⁹, գոյություն ունեցող սեփականության հարաբերությունների դրսևորման յուրօրինակ ձև է²⁰:

18. Տե՛ս Ղարախանյան Գ. Հ., Ընդհանուր սեփականության իրավունք, Ե., 1971, էջ 32-36:

Գտնում ենք, որ ընդհանուր սեփականության տեսակ հանդիսացող ընդհանուր բաժնային սեփականությունը չի հանդիսանում սեփականության ինքնուրույն տեսակ, այն հիմնվում է սեփականության ընդհանուր դրույթների վրա, որի առանձնահատկությունը կայանում է սեփականության սուբյեկտների բազմաթիվության մեջ: Ավելին, ընդհանուր բաժնային սեփականության հարաբերությունների իրավական կարգավորումը հնարավոր չէ առանց սեփականության ընդհանուր դրույթները հաշվի առնելու: Հետևաբար ընդհանուր բաժնային սեփականության հասկացության սահմանման համար անհրաժեշտ է նախ և առաջ բացահայտել սեփականության հասկացությունը, սեփականության իրավունքի իրականացման եղանակները, այնուհետև ընդհանուր բաժնային սեփականությունը, դի-

տարկելով իբրև ընդհանուր սեփականության ենթատեսակ, տալ սահմանումը, որի շնորհիվ հնարավոր կլինի անհատականացնել տվյալ ինստիտուտը և վերհանել այս ինստիտուտին բնորոշ հատկանիշները (սեփականության սուբյեկտների բազմաթիվությունը, նրանց կամաարտահայտությունը և այլն):

Ամփոփելով կարող ենք տալ ընդհանուր բաժնային սեփականության հետևյալ հասկացությունը. ընդհանուր բաժնային սեփականությունը իրավական նորմերի համակցություն է, որը կարգավորում է միևնույն գույքի նկատմամբ մի քանի սեփականատերերի իրավահարաբերությունները, որում սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը որոշված է, և որոնք իրենց հայեցողությամբ կարող են տիրապետել, տնօրինել և օգտագործել իրենց բաժինը:

19. Տե՛ս Ղարախանյան Գ. Հ., Ընդհանուր սեփականության իրավունք, Ե., 1971, էջ 3:

20. Տե՛ս Բարսեղյան Տ. Կ., ՀՀ Քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Ե., 2006, էջ 362:

ՏԱԹՆԻԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ,
 ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության
 գլխավոր իրավաբանի պաշտոնակատար

**ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ
 ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ
 ՍԿԶԲՈՒՆՔԻՑ ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆ**

Իրավունքի էությունը և սոցիալական նշանակությունն ամենից առաջ բացահայտվում և հստակեցվում են իրավունքի սկզբունքներում և գործառույթներում¹ : Իրավունքի սկզբունքները «ելակետային, հիմնարար գաղափարներ են, դրույթներ, որոնք կազմում են իրավունքի ծագման, զարգացման և գործողության բարոյական և իրավական հիմքը»²:

Որպես ընթացակարգային գործունեության տեսակ՝ հաշտեցման գործընթացը չի կարող կազմակերպվել և հաջողությամբ իրականացվել առանց որոշակի սկզբունքների պահպանման, որոնք արտահայտում են հանրության պատկերացումները և հաշտարարի օժանդակությամբ վեճի լուծման կազմակերպման և իրականացման հետ կապված պահանջները (ստանդարտները)³:

«Հաշտարարության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշտարարությունն իրականացվում է կամավորության, գաղտնիության, կողմերի հավասարության, հաշտարարի անկախության և անկողմնակալության սկզբունքների հիման վրա:

Պատահական չէ, որ հաշտարարության սկզբունքները թվարկելիս առաջին հերթին հիշատակվում է կամավորությունը: Հաշտարարության ընթացակարգի համար կամավորությունն ունի առանցքային նշանակություն

և շատ դեպքերում այն հանդիսանում է հաշտարարության կիրառման խթան՝ ապահովելով գրավչությունն ընթացակարգի նկատմամբ:

Կամավորության սկզբունքը կանոն է, համաձայն որի՝ հաշտեցման ընթացակարգի սկիզբը և ավարտը, ինչպես նաև համաձայնության կնքումը և կատարումն իրականացվում են բացառապես հաշտարարության մասնակիցների կամքով: Կամավորության սկզբունքը գործում է ինչպես կողմերի փոխհարաբերություններում, այնպես էլ հաշտարարի հետ հարաբերություններում: Կամավորության սկզբունքը նախ և առաջ ենթադրում է հաշտարարության իրականացում՝ կողմերի փոխադարձ համաձայնության հիման վրա: Երկրորդ՝ հաշտարարության հետագա ընթացքը շարունակելը ևս կախված է կողմերի կամահայտնությունից: Երրորդ՝ կողմերի համար փոխադարձաբար ընդունելի որոշումը կայացվում է առանց որևէ արտաքին միջամտության⁴:

Ի տարբերություն դատական վարույթի, որտեղ վեճի բոլոր կողմերը ներգրավվում են գործընթացում, հաշտարարության գործընթացը կամավոր է, իսկ հաշտարարը՝ ազատորեն ընտրված: Կամավորությունը նշանակում է, որ կողմերը՝ հաշտեցման վարույթի ընթացքում առանց որևէ արտաքին միջամտության և փոխադարձ համաձայնությամբ ընդունում են որոշումներ, և

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 119 2020

1. Տե՛ս **Байтин М. И.**, О принципах и функциях права: новые моменты, Правоведение N 3, 2000, ըստ՝ Д. С. Кулапов, Принципы медиации: многообразие подходов к регулированию, Вестник Саратовской государственной юридической академии, N 2 (97), 2014, էջ 47-52:
 2. Տե՛ս նույն տեղում, էջ 47-52:
 3. Տե՛ս **Сухова Н. В.**, Принципы процесса медиации, Вестник Тюменского государственного университета. Социально-экономические и правовые исследования N 3, 2013.
 4. Տե՛ս **Калашникова С. И.** Медиация в сфере гражданской юрисдикции, дис.... канд. юрид. наук, Уральская государственная юридическая академия, Екатеринбург, 2010, էջ 32:

ինչպես հաշտարարը, այնպես էլ կողմերը կարող են ցանկացած պահի հրաժարվել մասնակցել հաշտարարությանը՝ դադարեցնելով այն: Քանի որ հաշտարարությունը համաձայնեցված ընթացակարգ է, կողմերից ոչ մեկը չի կարող հարկադրվել գնալ հաշտարարության կամ որևէ համաձայնություն չի կարող հարկադրաբար կատարվել, քանի դեռ կողմերը դրա վերաբերյալ համաձայնություն չեն կայացրել⁵:

Ելնելով հաշտարարության կիրառման կարգից՝ առանձնացվում են հաշտարարության հետևյալ տեսակները՝ 1) կամավոր հաշտարարություն, 2) պարտադիր հաշտարարություն:

Կամավոր հաշտարարությունը կիրառվում է կողմերի փոխադարձ համաձայնության հիման վրա: Կամավորության սկզբունքի գործողության պայմաններում դատարանը կամ վեճը քննելու և լուծելու համար լիազորված այլ անձը իրավասու են առաջարկելու դիմել հաշտարարության, սակայն կողմերը կարող են ընդունել կամ մերժել նման առաջարկը՝ առանց որևէ բացասական հետևանքի, ինչպիսին է օրինակ՝ հաղթող կողմին դատական ծախսերի հատուցումից հրաժարումը: Կամավոր հաշտարարության մեխանիզմը հետևյալն է. դատարանն իրավասու չէ ինքնուրույն նախաձեռնել հաշտարարության գործընթաց և կողմերին ուղարկել հաշտարարության. միաժամանակ, դատարանի վրա դրված է կողմերին՝ հաշտարարին դիմելու իրավունքը պարզաբանելու պարտականություն:

Վերը թվարկված բոլոր պայմանների պահպանման պարագայում կարելի է խոսել հաշտարարության կամավորության սկզբունքի բացարձակ բնույթի մասին: Գործնականում, սակայն, նշված սկզբունքն իրացվում է մասամբ, որի արդյունքում ծագում է կամավորության սկզբունքի սահմանափակման հնարավորության և թույլատրելի սահմանների խնդիրը⁶:

Եվրոպական խորհրդարանի և խորհրդի «Քաղաքացիական և առևտրային հարցերով հաշտարարության որոշ հարցերի վերաբերյալ»

2008 թվականի մայիսի 21-ի թիվ 2008/52/EC դիրեկտիվով (այսուհետ՝ Դիրեկտիվ) նախատեսված կարգավորումներից բխում է, որ հաշտարարությունը կամավոր ընթացակարգ է այն առումով, որ կողմերն իրենք են ներգրավվում ընթացակարգում, կարող են հաշտարարությունն իրականացնել իրենց համար ցանկալի ձևով, ինչպես նաև ցանկացած ժամանակ դադարեցնել այն: Միաժամանակ, անհրաժեշտ է դատարաններին վերապահել կողմերին հաշտարարության ուղղորդելու հնարավորություն: Դիրեկտիվը ոչնչով չի կաշկանդում, որպեսզի ներպետական օրենսդրությամբ հաշտարարության կիրառությունը համարվի պարտադիր կամ դրա համար սահմանվեն խրախուսական միջոցներ կամ սանկցիաներ՝ **պայմանով, որ օրենսդրություն կողմերին չխոչընդոտի իրականացնել իրենց դատական պաշտպանության (դատարանի մատչելիության) իրավունք**

Պարտադիր հաշտարարության փորձ կա, օրինակ, Գերմանիայում, որտեղ որոշակի գործերով նախատեսված է պարտադիր մինչդատական հաշտարարություն, մասնավորապես՝ գույքային-իրավական վեճերով, որոնցով վեճի առարկան չի գերազանցում 750 եվրոն, ինչպես նաև հարևանների միջև ծագած վեճերով և պատվի ու արժանապատվության հետ կապված վեճերով, եթե խախտումները տեղի չեն ունեցել մամուլի կամ ռադիոյի միջոցով: Կանադայում ևս բոլոր քաղաքացիական գործերը, որոնցով պատասխանողի կողմից ներկայացվել է առարկություն, պարտադիր ուղարկվում են հաշտարարության: Կողմերի միջնորդությամբ դատարանն իրավասու է կողմերին ազատել հաշտարարության պարտադիր կիրառությունից⁷:

Իտալիայում պարտադիր հաշտարարությունն առաջին անգամն ներդրվեց 2010 թվականին՝ տարաբնույթ քաղաքացիական գործերով (օրինակ՝ անշարժ գույքի հետ կապված գործերով, ժառանգության հետ կապված գործերով, բանկային պայմանագրից բխող գործերով և այլն)՝ նպատակ ունենա-

5. Տե՛ս **Peter Naylor**, Business Law in the Global Marketplace, the Effects on International Business, Elsevier Butterworth-Heinemann, Linacre House, Jordan Hill, Oxford, 2006, էջ 239:
6. Տե՛ս նույն տեղում, էջ 33:
7. Տե՛ս **Калашникова С. И.**, Медиация в сфере гражданской юрисдикции, дис... канд. юрид. наук, Уральская государственная юридическая академия, Екатеринбург, 2010, էջ 61-67:

լով նվազեցնել դատարանների ծանրաբեռնվածությունը: Ձեռնարկված միջոցները, սակայն արդյունավետ չէին, քանի որ նշված կարգավորումներն արժանացան հանրության բուռն քննադատությանը՝ սահմանադրությամբ ամրագրված դատարանի մատչելիության, օրենքի և դատարանի առջև հավասարության հիմնարար դրույթներին հակասելու պատճառով: 2012 թվականին Իտալիայի սահմանադրական դատարանը նշված դրույթները ճանաչեց հակասահմանադրական: Սահմանադրական դատարանը, սակայն անդրադարձել էր միայն իրավական ակտի ընդունման ընթացակարգային խախտումներին՝ չանդրադառնալով դատարանի մատչելիության իրավունքի հետ հարաբերակցությանը: 2013 թվականին Իտալիայի խորհրդարանն ընդունեց նոր օրենք՝ նախատեսելով հաշտարարության 4 տեսակ՝ կամավոր, պարտադիր՝ օրենքի ուժով (սպահովագրության պայմանագրի և բանկային իրավունքի ոլորտում), դատարանի կողմից նշանակված և պարտադիր՝ կողմերի համաձայնության ուժով⁸:

Ցանկացած երկրում պարտադիր հաշտարարության կիրառման հիմնական խնդիրը մրցակցությունն է դատական պաշտպանության իրավունքը երաշխավորող նորմերի հետ: Այս առումով հաշտարարությունը որպես պարտադիր ընթացակարգ նախատեսելը հիմնականում առաջացնում է դատական ծախսերի և քննության ժամկետների հետ կապված հարցեր, որոնք հաճախ խնդրահարույց են: Այդ պատճառով էլ Իտալիայում պարտադիր հաշտարարությունը ենթադրում է միայն հաշտարարի հետ նախնական հանդիպման անհրաժեշտություն: Եթե առաջին հանդիպման ընթացքում կողմերը եզրահանգում են, որ հաշտարարության գործընթացի հետագա շարունակությունը նպատակահարմար չէ, դրանով իսկ հաշտարարությունն ավարտվում է, իսկ վեճի լուծման արտադատական կարգը համարվում է պահպանված: Բացի այդ, պարտադիր հաշտարարությունը հնարավոր է միայն հետևյալ պայմանների պահպանմամբ՝

գործընթացին իրավաբանի պարտադիր մասնակցություն, անկախ ներկայացուցչի մասնակցությունից՝ կողմերի անմիջական մասնակցություն, եռամսյա ժամկետ՝ կողմերի համաձայնությամբ երկարաձգելու հնարավորությամբ, վարձատրություն՝ օրենքով սահմանված դրույքաչափերին համապատասխան, հաշտարարություն իրականացնող հաստատությունը գործում է այն վարչական տարածքում, որտեղ գտնվող դատարանին ընդդատյա է տվյալ վեճը, առկա է հաշտության համաձայնության հարկադիր կատարման հնարավորություն⁹:

Հաշտարարությունը որպես պարտադիր ընթացակարգ նախատեսելը հետապնդում է հաշտարարության կիրառությունը խրախուսելու և դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակ: Պարտադիր հաշտարարության կիրառման արդյունավետությունը և արդարացիությունը մշտապես եղել է քննարկման առարկա՝ դատական պաշտպանության իրավունքի և արդարադատության մատչելիության հետ հարաբերակցության առումով: Մասնավորապես, Անգլիայի վերաքննիչ դատարանը, քննելով դատարանի՝ կողմերին պարտադիր հաշտարարության ուղարկելու իրավասության հարցը, նշել է որ նման պրակտիկան խախտում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքը: Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսի նահանգի Քաղաքացիական դատավարության 2005 թվականի ակտի համաձայն՝ Գերագույն դատարանն իրավասու է վարույթի ցանկացած փուլում կողմերին ուղարկել հաշտարարության՝ անկախ իրենց համաձայնությունից: Նշված հարցի հետ կապված Morrow Chinadotcom Corp. գործով դատարանը նշել է, որ հաշտարարությունն արդյունավետ չէ, եթե կողմերը չեն ցանկանում մասնակցել դրան: Թեև մի շարք երկրներում հաշտարարությունը նախատեսված է որպես պարտադիր ընթացակարգ, այնուամենայնիվ, հաշտարարության պարտադիրությունը հակասում է նշված ընթացակարգի բնույթին: Կաս-

8. Сեն Загайнова С. К., Чудиновская Н. А., Шереметова Г. С., Обязательная медиация в Италии: проблемы реализации // Электронное приложение к Российскому юридическому журналу, 2017. №6, էջ 57-58, աղբյուրը՝ <https://cyberleninka.ru/article/n/obyazatel'naya-mediatsiya-v-italii-problemy-realizatsii> [20.04.2020 թվականի դրությամբ]:

9. Сեն նույն տեղում:

կաժ չկա, որ պարտադիր հաշտարարությունը կարող է նպաստել իրավական համակարգի, ամենից առաջ՝ դատարանների արտակարգ ծանրաբեռնվածության նվազեցմանը, սակայն հաշտեցման ընթացակարգերի՝ որպես վեճերի կարգավորման պաշտոնական մեխանիզմի զարգացումը պետք է ծառայի ոչ այնքան պետության շահերին, որքան՝ համապատասխանի վիճելի իրավահարաբերության կողմերի պահանջներին: Այս առումով կողմերին հաշտարարության դիմելուն հարկադրելը նպատակահարմար չէ այն դեպքում, երբ կողմերը չունեն համագործակցությունը շարունակելու ո՛չ հիմք, ո՛չ ցանկություն¹⁰:

Կարելի է եզրակացնել, որ հաշտեցման ընթացակարգերի զարգացման սկզբնական փուլում անհրաժեշտ է վիճելի իրավահարաբերության կողմերին պարզաբանել հաշտարարության առավելությունները և հնարավորությունները, ինչպես նաև խթանել դրա կիրառման պրակտիկան: Այդ նպատակով թույլատրելի են կամավորության սկզբունքի գործողության որոշ սահմանափակումներ, օրինակ՝ պարտադիր կարգով հաշտարարի հետ տեղեկատվական հանդիպում կազմակերպելու առումով: Միաժամանակ, վիճելի իրավահարաբերության մասնակիցները պետք է պահպանեն առաջին իսկ հանդիպումից հետո հաշտարարությունից հրաժարվելու իրավունքը: Հակառակ պարագայում մեծ է հավանականությունը, որ հաշտարարությանը կողմերի մասնակցությունը կարող է կրել ձևական բնույթ՝ հանգեցնելով գործի քննության ժամկետների անհիմն ձգձգման¹¹:

Հաշտարարության՝ որպես պարտադիր ընթացակարգ նախատեսելու վերաբերյալ կարգավորումը վիճելի է: Նմանատիպ կարգավորման որոշ կողմնակիցներ գտնում են, որ պարտադիր հաշտարարություն չնախատեսելը խոչընդոտում է հաշտարարության զարգացմանը: Հակառակ մոտեցման կողմնակիցները գտնում են, որ հաշտարարությունն իր բնույթով կարող է կիրառվել միայն կամավորության հիման վրա և միայն այդ դեպքում այն կարող է գործել պատշաճ և արդյունավետ, իսկ հակառակ դեպքում՝ հաշտարարությունը

դարձնելով պարտադիր, այն կկորցնի դատական վարույթի համեմատությամբ իր գրավչությունը: Կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ պարտադիր հաշտարարությունն ազդում է «Հիմնարար իրավունքների մասին» եվրոպական խարտիայի 47-րդ հոդվածով երաշխավորված՝ տրիբունալի առջև իր իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների իրացման իրավունքի վրա:

Հաշտարարության կողմնակիցների մեծամասնությունը հանդես է գալիս այն որպես պարտադիր ընթացակարգ նախատեսելու օգտին: ԵՄ անդամ պետությունների մեծամասնությունը և գիտնականները, սակայն, պնդում են հակառակը: Վերջիններին շրջանում առաջարկվել է հաշտարարությունը որպես պարտադիր ընթացակարգ նախատեսել միայն որոշակի կատեգորիայի գործերով (ինչպիսիք են առևտրային գործերը, աշխատանքային և ընտանեկան իրավունքի հետ կապված, ինչպես նաև այլ փոքր գործերը): Հաշտարարությունը բոլոր տեսակի վեճերով որպես պարտադիր ընթացակարգ նախատեսելու կողմնակիցներն ավելի քիչ են: Քիչ են նաև հաշտարարության չդիմելու համար սանկցիաների կիրառման կողմնակիցները, չնայած որ նրանց կողմից ընդունելի է ծախսերն այն կողմի վրա դնելու կարգավորումը, ով առանց պատճառների հրաժարվում է հաշտարարությունից: Հաշտարարության դիմելու համար խրախուսական միջոցներ նախատեսելու կարգավորումներն առավել ընդունելի են: Որպես այդպիսի միջոցներ դիտարկվում են հատուցման ենթակա դատական ծախսերի նվազեցումն այն կողմերի համար, ովքեր փորձել են հաշտվել՝ նախքան հայց ներկայացնելը, արդյունավետ հարկային նվազեցումները, անվճար հաշտարարություն նախատեսելը կամ պետության կողմից հաշտարարի ծառայություններին ֆինանսական աջակցություն ցուցաբերելը:

Խրախուսման միջոցներ նախատեսելը հաշտարարության դիմելու հարցում կողմերին խրախուսելու արդյունավետ միջոց է: Վեճի լուծմանն ուղղված ծախսերը կողմերի համար կարևոր գործոն են՝ որոշելու համար

10. Տե՛ս **Калашникова С. И.**, նշվ. աշխ., էջ 61-67:

11. Տե՛ս նույն տեղում, էջ 34-35:

դիմել դատարան, թե հաշտարարության: Այդ պատճառով ֆինանսական բնույթի խրախուսման միջոցներ նախատեսելը, որոնք տնտեսական առումով կողմերի համար առավել գրավիչ են դարձնում դատական վարույթի փոխարեն հաշտարարության դիմելը, կարելի է դիտարկել որպես լավագույն փորձ¹²:

Հայաստանի Հանրապետությունում հաշտարարության կիրառելիությունը խրախուսելու և դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նկատառումներից ելնելով՝ ներդրվել է պարտադիր հաշտարարության ինստիտուտը:

Այսպես՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) 184-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե մեծ է վեճը հաշտությամբ ավարտելու հավանականությունը, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մեկ անգամ կարող է նշանակել մինչև 4 ժամ անվճար հաշտարարություն: Դատարանի նախաձեռնությամբ նշանակված հաշտարարությունը պարտադիր է կողմերի համար. ընդ որում, ՔԴՕ 187-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով դատարանն իրավասու է անկախ գործի ելքից դատական ծախսերը լրիվ կամ մասնակի դնել գործին մասնակցող այն անձի վրա, որը դատարանի կողմից անհարգելի ճանաչված պատճառներով հրաժարվել է մասնակցել հաշտարարությանը:

Բացի այդ, այնքանով, որքանով ՔԴՕ 3-րդ հոդվածի 3-րդ մասը վեճի կարգավորման՝ օրենքով կամ պայմանագրով նախատեսված արտադատական կարգի պահպանումը դիտարկում է որպես հայց հարուցելու իրավունքի ծագման նախադրյալ և դատարանն իրավասու է նշված կարգը պահպանված չլինելու պարագայում վերադարձնելու հայցադիմումը կամ հայցը թողնելու առանց քննության՝ կարելի է արձանագրել, որ ներպետական օրենսդրությամբ նախատեսված է նաև պարտադիր հաշտարարության մյուս տարատեսակը՝ հաշտարարության պարտադիրությունը կողմերի համաձայնությամբ՝ հաշտարարության վերաբերյալ համաձայնության առկայության

պարագայում:

Միաժամանակ, միջազգային իրավական ակտերի վերլուծությունից բխում է, որ հաշտարարության վերաբերյալ համաձայնությունը չի սահմանափակում կողմի՝ դատարան կամ արբիտրաժային տրիբունալ դիմելու հնարավորությունը, սակայն հաշտարարության գործընթացում կողմը պետք է զերծ մնա այդպիսիք նախաձեռնելուց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերջինս գտնում է, որ դա անհրաժեշտ է իր իրավունքների պաշտպանության համար: Բանն այն է, որ կողմի՝ դատարան կամ արբիտրաժային տրիբունալ դիմելու իրավունքի սահմանափակումը որոշ դեպքերում կարող է հանդիսանալ հաշտարարության դիմելու խոչընդոտ: Բացի այդ, դատարանի դիմելու իրավունքի սահմանափակումը կարող է առաջացնել սահմանադրականության հետ կապված խնդիրներ, քանի որ մի շարք երկրների իրավազորություններում արդար դատաքննության իրավունքը նախատեսված է որպես անօտարելի իրավունք: Ուստի՝ բոլոր դեպքերում դատարանի դիմելու հնարավորության նախատեսումը ենթադրում է, որ նույնիսկ եթե կողմերը համաձայնվել են հրաժարվել հաշտարարության ընթացքում դատական կամ արբիտրաժային վարույթ նախաձեռնելու իրավունքից, կողմին հնարավորություն է ընձեռված անտեսելու այդպիսի համաձայնությունը, երբ իր կարծիքով դատական կամ արբիտրաժային վարույթ նախաձեռնելն անհրաժեշտ է իր իրավունքների պաշտպանության համար¹³: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետից բխում է, որ վեճի կարգավորման օրենքով կամ պայմանագրով նախատեսված արտադատական կարգը պահպանված չլինելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու հիմքերից բացառություն է նախատեսված միայն այն դեպքերի համար, երբ դատարանը գտնում է, որ վեճի կարգավորման արտադատական կարգ սահմանող պայմանագիրն առոչինչ է, ուժը կորցրել է կամ ակնհայտորեն չի կարող կատարվել: Գտնում ենք, որ անհրաժեշտ է

12. Տե՛ս http://ec.europa.eu/justice/civil/files/act_part1_adopted_en.pdf [11.03.2020 թվականի դրությամբ]:

13. Տե՛ս UNCITRAL Model Law on International Commercial Conciliation with Guide to Enactment and Use, United Nations, New York, 2004, էջ 53-54, աղբյուրը՝ http://www.uncitral.org/pdf/english/texts/arbitration/ml-conc/03-90953_Ebook.pdf [07.05.2019 թվականի դրությամբ]:

վեճի կարգավորման արտադատական կարգը պահպանված չլինելու պարագայում դատարանին ընձեռել հայցադիմումը վարույթ ընդունելու հնարավորություն նաև այն դեպքերում, երբ հայցվորը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դատարան դիմելն անհրաժեշտ է հայցվորի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման համար կամ դատարանը գտնում է, որ հայցադիմումը վարույթ ընդունելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից (օրինակ՝ առկա է խախտված իրավունքների կամ օրինական շահերի անհապաղ վերականգնման անհրաժեշտություն, հարցն ունի հանրային հնչեղություն և պահանջվում է գործի հրապարակային քննություն, առկա են մարդու հիմնարար իրավունքների այնպիսի խախտումներ, որոնք չեն կարող վերացվել առանց դատական միջամտության):

Իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն արտահայտվում է տեսակետ, համաձայն որի՝ պարտադիր հաշտարարության մեխանիզմը կողմերին պարտադրում է **միայն սկսել հաշտարարություն սակայն չի պարտադրում արդյունքու հասնել համաձայնության**¹⁴: Գտնում ենք, որ նշված մոտեցումը միանգամայն արդարացված է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր վեճ ունի առանձնահատուկ փաստակազմ և կողմերի փոխհարաբերությունները տարբեր վեճերով տարբեր են: Ուստի՝ կոնկրետ վեճով հաշտության համաձայնության կնքման հնարավորությունը կարող է բացահայտվել միայն հաշտարարության փորձի ընթացքում: Միաժամանակ, կողմի համար պետք է անվերապահորեն երաշխավորվի հաշտարարությունից ցանկացած պահի (առաջին իսկ հանդիպումից հետո) հրաժարվելու իրավունքը, թե վերջինս համարում է որ իրավունքի պաշտպանության հաշտարարական ձևն արդյունավետ չէ, այլապես հաշտարարության հետագա ընթացքը շարունակելը կարող է կրել ձևական բնույթ՝ հանգեցնելով գործի քննության ժամկետների անհիմն ձգձգման:

ՔԴՕ 187-րդ հոդվածի 4-րդ մասով

նախատեսված, անկախ գործի ելքից հաշտարարությանը մասնակցելուց հրաժարված կողմի վրա դատական ծախսերը դնելու վերաբերյալ կարգավորումը հանդես է գալիս որպես սանկցիա՝ զսպիչ մեխանիզմ քաղաքացիական շրջանառության անբարեխիղճ մասնակիցների համար, որոնք անհիմն կերպով հրաժարվում են վեճի կարգավորման հաշտարարական ձևից:

Կարծում ենք՝ անկախ գործի ելքից հաշտարարությանը մասնակցելուց հրաժարված կողմի վրա դատական ծախսերը դնելիս առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, թե ո՞ր փուլում է կողմը հրաժարվել հաշտարարությանը մասնակցելուց: Մասնավորապես՝ եթե կողմն ի սկզբանե համաձայնվել է սկսել հաշտարարություն և հետագայում առանց հիմնավորման հրաժարվել հաշտարարությունից, այս դեպքում անկախ գործի ելքից հաշտարարությանը մասնակցելուց հրաժարված կողմի վրա դատական ծախսերը դնելու վերաբերյալ սանկցիան կիրառելի չէ, քանի որ վերջինս **ձեռնամուխ է լինում ցանկացած պահի հաշտարարությունի հրաժարվելու իրավունքի իրացմանը**: Հետևաբար, գտնում ենք, որ անկախ գործի ելքից հաշտարարությանը մասնակցելուց հրաժարված կողմի վրա դատական ծախսերը դնելու վերաբերյալ կարգավորումը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ կողմն ի սկզբանե հրաժարվում է մասնակցել հաշտարարությանը՝ առանց գեթ մեկ փորձի:

ՔԴՕ 187-րդ հոդվածի 4-րդ մասից հնարավոր չէ միանշանակ հետևության հանգել, թե օրենքը որ փուլով է պայմանավորում հաշտարարությանն առանց հարգելի պատճառների մասնակցելուց հրաժարվելու անբարենպաստ հետևանքները: Ուստի՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է նշված հոդվածում հստակեցնել, որ խոսքը ոչ թե հաշտարարության ընթացակարգը սկսելուց հետո դրա հետագա ընթացքից հրաժարվելու, այլ՝ առհասարակ հաշտարարություն սկսելուց առանց հարգելի պատճառների հրաժարվելու դեպքերի մասին է:

Հայաստանի Հանրապետության դա-

14. Stū Melissa Hanks Perspectives on mandatory mediation, UNSW Law Journal, Volume 35 (3), աղբյուրը՝ <https://www.austlii.edu.au/au/journals/UNSWLJ/2012/39.pdf> [11.07.2020 թվականի դրությամբ, էջ 952]:

տական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությամբ նախատեսվում է «դիտարկել որոշակի իրավահարաբերությունների (ընտանեկան, աշխատանքային, բանկային և այլն) վերաբերյալ վեճերով դատարանի կողմից անվճար հաշտարարություն նշանակելը պարտադիր դարձնելու իրավական հնարավորությունը»: Գտնում ենք, որ հաշտարարության՝ որպես պարտադիր ընթացակարգի նախատեսումն անհրաժեշտ է դիտարկել Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի համատեքստում և պարտադիր հաշտարարություն նախատեսել միայն պայմանով, որ այն բացասաբար չանդրադռնա դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետության վրա և ապահովի բավարար երաշխիքներ արդար դատաքննության իրավունքի տարրերի, ամենից առաջ՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության ապահովման համար: Միաժամանակ, կարևորում ենք պարտադիր հաշտարարության արդյունքում կնքվող հաշտության համաձայնության՝ պարտադիր կարգով ներկայացումը դատարանի հաստատմանը՝ հաշվի առնելով հաշտության համաձայնության օրինականության, այլ անձանց իրավունքների և օրինական շահերի հաշվառման անհրաժեշտությունը և հարկադիր կատարման հնարավորության երաշխավորումն այնքանով, որքանով «կատարման իրավունքը «դատարանի իրավունքի» բաղկացուցիչ մասն է կազմում (Hornsby-ն ընդդեմ Հունաստանի, § 40, Scordino-ն ընդդեմ Իտալիայի (թիվ 1) [ՄՊ], § 196): Հակառակ դեպքում, 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները կգրկվեին իրենց արդյունավետ ողջ ուժից (Burdov-ն ընդդեմ Ռուսաստանի, §§ 34 եւ 37): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակներով, ցանկացած դատարանի կողմից կայացված վճռի կատարումը պետք է համարվի «դատավարության» անբաժանելի մասը (Hornsby-ն ընդդեմ Հունաստանի, § 40, Romańczyk-ն ընդդեմ Ֆրանսիայի, § 53, ալիմենտային պարտքերի բռնագանձումը

թույլատրող վճռի կատարման վերաբերյալ): Ընդ որում, անկախ այն հանգամանքից, թե արդյոք 6-րդ հոդվածը կիրառելի է նախնական վարույթի նկատմամբ, պարտադիր չէ, որ քաղաքացիական իրավունքները որոշող կատարողական թերթը լինի այնպիսի վարույթի արդյունքը, որի նկատմամբ 6-րդ հոդվածը կիրառելի է (Buj-ն ընդդեմ Խորվաթիայի, § 19)»¹⁵:

Միաժամանակ, հաշտարարությունը որպես պարտադիր ընթացակարգ նախատեսելիս հարկ է նկատի ունենալ, որ Եվրոպայի խորհրդի 2003 թվականի հունվարի 27-ի թիվ 2003/8/EC դիրեկտիվի 21-րդ կետը («Իրավաբանական օգնության նվազագույն պահանջները սահմանելու վերաբերյալ») անդրսահմանային վեճերով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը տարածում է ոչ միայն ավանդական իրավական ընթացակարգերի, այլև՝ արտադատական ընթացակարգերի, ներառյալ՝ հաշտարարության նկատմամբ, եթե օրենքը կողմերից պահանջում է կիրառել դրանք կամ եթե դատարանը կողմերին հանձնարարում է կիրառել դրանք: Հետևաբար՝ բոլոր այն դեպքերում, երբ հաշտարարության՝ որպես արտադատական ընթացակարգի կիրառման պահանջը նախատեսված է օրենքով կամ հաշտարարությունը նշանակվում է դատարանի կողմից, անհրաժեշտ է երաշխավորել իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

Ամփոփոելով՝ կարելի է փաստել, որ կամավորության սկզբունքը հաշտարարության ընթացակարգի գլխավոր արժանիքներից է և ունի հիմնարար նշանակություն հաշտարարության արդյունքում կայացված համաձայնությունների կատարման տեսանկյունից: Մի շարք դեպքերում կամավորությունը հանդիսանում է հաշտարարության կիրառման խթան՝ ապահովելով ընթացակարգի գրավչությունը: Միաժամանակ, ազգային իրավական համակարգերում հաշտարարության ներդրման սկզբնական փուլերում հաշտարարության՝ որպես պարտադիր ընթացակարգի նախատեսումն ունի էական նշանակություն՝ հաշտարարության կիրառությունը խրախուսելու և դրա

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 119 2020

15. Տե՛ս Ուղեցույց Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ. արդար դատաքննության իրավունք (քաղաքացիաիրավական հայեցակետ), 33-րդ, 92-րդ և 93-րդ կետեր, աղբյուրը՝ https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_HYE.pdf [21.01.2020 թվականի դրությամբ]:

վերաբերյալ հանրային պատշաճ ընկալում | թացում անհրաժեշտ է երաշխավորել դատա-
ծնավորելու տեսանկյունից: Ընդ որում, պար- | կան պաշտպանության սահմանադրական
տադիր հաշտարարության ներդրման գործըն- | իրավունքի տարրերի հետևողական իրացումը:



ЛУСИНЕ ТАСАЛЯН

Преподаватель образовательного комплекса Полиции РА

МЕДИАЦИЯ ИЛИ ТРУДОВОЙ СПОР

Введение

С момента внедрения в республике Армения института медиации, трудовые споры также решаются альтернативным путем решения споров – путем медиации. Что позволяет сделать вывод, что будет стимулом для достижения результатов дистанционного развития и приобретений в сфере применения медиации.

Необходимо подчеркнуть также, что по мнению медиаторо–правовых специалистов, в трудовом праве применение медиации дает возможность сторонам спорного правового правоотношения найти решение их же спора с помощью взаимного согласия и задачам этой сферы.

Опыт решения трудовых споров путем медиации более развит или приемлем в тех странах, где более приемлемы и /или/ развиты альтернативные пути решения споров. Преимущество медиации в этом случае рассматривает разные экономико – правовые влияния, взаимоотношения и влияния государство – работодатель – работник. В свою очередь, уменьшая нагрузку судебной системы, также содействует уменьшению конфликтов в сфере трудовых отношений.

Медиация, как процедура, новшество также для российского общества, которая может урегулировать в большем количестве конфликты в обществе, в том числе – в сфере труда. При ее помощи возможно уменьшить социальный низкий уровень, напряженность, является благоприятным условием для формирования правосознания, а также играть существенную роль для дальнейшего развития ме-

диации в обществе¹.

О необходимости внедрения медиации в России также часто упоминается в научных статьях разных авторов, одновременно, применение медиации в сфере труда почти отсутствует. В федеральных законах не предусматривается и тем не менее не запрещается разрешение трудовых споров путем медиации. согласно федеральному закону от 27 июля 2010 года номер 193-ФЗ «Об альтернативной процедуре урегулирования споров (процедуре медиации)»².

В отличие от Федеральных и других стран, часть 5-ая Французского закона о медиации определяет коллективные трудовые споры, трудовое законодательство определяет процедуру медиации, возможность реализации, те конфликтные ситуации, которые подлежат урегулированию путем медиации. В трудовом кодексе Франции есть статьи о медиации. Часть 2-ая трудового кодекса Франции (коллективные трудовые споры), регулирующая коллективные споры, трудовые отношения, а также статья L1152-6 в части i трудового кодекса Франции предусматривают процедуры проведения процесса.

Научные результаты: Если анализировать опыт медиации Украины, то можем сказать, что там медиация медленно, но уверенно распространилась в сфере трудовых отношений³. В этой стране вместе с семейной медиацией трудовая медиация развивается вполне успешно. Но украинские юристы и медиаторы сталкиваются с разными задачами и препятствиями, предлагая Медиацию в качестве средства решения трудовых споров. Одно из них

1. Смотри Соловьева С. В., Медиативный подход к договороспособности российского общества // Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского. 2013. № 3-2. С. 188-191.

2. Смотри Федеральный закон от 27.07.2010 г. № 193-ФЗ «Об альтернативной процедуре урегулирования споров с участием посредника (процедуре медиации)» // Собрание законодательства РФ. 2010. № 31. Ст. 4162.

3. Смотри Трудовые споры и медиация: специфика Украины, /trudovye_sporu_i_mediaciya.pdf/ 27.06.2018г./.

сталкивание интересов похожих препятствий. Происходит сталкивание интересов, когда специализированные в области трудового права юристы одновременно являются лицензированными примирителями /медиаторами/. В схожих случаях они не могут быть назначены и общаются об этом работодателю или работнику, иначе нарушится принцип беспристрастности. В таких случаях не закон, не специальность или квалификация, и не документы не будут иметь значение. Дело в том, что противоположная спорящая сторона может заявить отвод, и /или/ на практике оказывается в незаконной ситуации, более, важно в данном случае вообще отказать от решения спора путем медиации.

Поэтому, медиаторы-юристы должны быть очень осторожны, предлагая своим заявителям медиацию по трудовым делам. Для них интересы посетителя должны быть важнее собственных интересов или интересов компании, иначе в этом случае будут нарушены принципы примирения.

Если провести сравнительные грани вместе с имеющейся ситуацией в республике Армения, то можем подчеркнуть, что в отличие от федерального законодательства, во внутригосударственной правовой системе более развитая, можем сказать более, что она имеет некоторую всеобщность с французской правовой системой, а также задачи Украины присутствуют в нас. Хотя одновременно всеобщности в отрицательном смысле с федеральными задачами также имеются, так как в нас также не развит институт примирения и трудовые споры снова имеют низкий показатель.

В частности, трудовой кодекс РА⁴ регулирует частный и коллективный трудовой спор: по указанному закону, статьи 60-74 регулируют коллективный трудовой спор, а также согласно подпункту 3 пункта 1 статьи 202 гражданско-процессуального кодекса РА, из рассматриваемых дел в порядке особого производства являются также дела по отдельным трудовым спорам, а глава 24 полностью регулирует производство по отдельным трудовым спорам.

В частности, часть 2 статьи 60 трудово-

го кодекса определяет, что в случае возникновения трудового спора по поводу совершения изменений и дополнений в коллективном договоре предприятия, это обсуждается в комиссии по вопросам медиации (в том числе – с участием посредника). В случае не разрешения коллективного спора (в том числе – не состоянии коллективных переговоров, отказ от обсуждения вопроса в комиссии по вопросам медиации), по остальному сроку продолжает действовать коллективный договор предприятия.

Теоретически, с первого взгляда юридически ясно и понятно изложено для каждого лица, но при узком профессиональном изучении или для невооруженного взгляда юриста очевидно – имеется профессиональная задача или может быть задача словесного перевода – это словосочетание с участием посредника. В выше перечисленных статьях кодекса также встречаем выражения примирение или комиссия по вопросам медиации.

В результате проведения с нашей стороны разносторонних изучений заключили, что слово медиатор является словесным переводом с английского слова Mediation, которое переводится как медиатор.

Заключение

Не зависимо от того обстоятельства, что законодатель имел ввиду, что в комиссии по вопросам медиации, согласно процедуре, могут принимать участие лица, имеющие соответствующую компетенцию, тем не менее определил также процесс примирения с участием посредника. Руководствуясь пунктом 2 статьи 2 закона РА «О примирении», это – примирение может осуществляться по спорам, вытекающими из гражданских, семейных, трудовых, а в предусмотренных законом случаях, также иных правоотношений, считаем необходимым привлечь внимание законодателя к статье 60 трудового законодательства и вытекающим из нее и /или/ соответствующим законодательству статьям и совершить также необходимое законодательное изменение: это – слово посредник заменить словом лицензированный примиритель.

4. Трудовой кодекс РА /ОБРА 2004.12.21/69(368)/.

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
Զինճառայողների և նրանց ընտանիքների անդամների
իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՅ՝ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄԸ
ԱՃԽԱՏԱՆՔԻ ԱՉԱՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Աշխարհի պատմության զգալի ժամանակահատվածում մարդկությունը պայքար է ծավալել ստրկության և հարկադիր աշխատանքի դեմ: Արդյունքում, առաջադեմ մարդկությունն ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական մակարդակներում սահմանեց աշխատանքի ազատության սկզբունքը: Այս աշխատանքը կառուցելիս մեր նպատակը չի հանդիսանում բացահայտել այդ սկզբունքի գաղափարական, բարոյահոգեբանական կամ արժեքաբանական մակարդակը: Ուսումնասիրության առարկա դարձած կարգավորման վերլուծությունը կառուցելիս անդրադառնալու ենք դրա զուտ իրավական խնդրին:

Ժամանակակից աշխարհում վաղուց արդեն ամրագրված է աշխատանքի ազատության սկզբունքը: Միջազգային մի շարք փաստաթղթեր սահմանում են ստրկության, մարդու թրաֆիքինգի և շահագործման, հարկադիր և պարտադիր աշխատանքն արգելող դրույթներ:

Այս համատեքստում դիտարկելու ենք «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված կարգավորումն առ այն, որ ազգային անվտանգության մարմինների ծառայողը ենթակա է ծառայությունից արձակման իր հիմնավորած զեկուցագրով՝ այլ աշխատանքի անցնելու կամ ընտանեկան հանգամանքների կապակցությամբ:

Այսպես, Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրությամբ¹ յուրաքանչյուր քաղաքացի, իսկ 2005² և 2015³

թվականներին փոփոխություններով՝ յուրաքանչյուր ոք աշխատանքի ընտրության ազատություն ունի: Կարծում ենք՝ Սահմանադրությամբ ամրագրված աշխատանքի ընտրության ազատությունը պետք է մեկնաբանել երկու տեսանկյունից՝ 1) յուրաքանչյուր ոք ազատ է որոշել՝ ցանկանում է առհասարակ անցնել աշխատանքի, թե՛ ոչ, 2) յուրաքանչյուր ոք ազատ է որոշել, թե՛ աշխատանքի ինչ տեսակով է ուզում զբաղվել: Ընդ որում, աշխատանքի ընտրության ազատությունը Սահմանադրության այն հոդվածներից է, որը որևէ կերպ չի կարող սահմանափակվել Սահմանադրությունից ցածր ուժ ունեցող իրավական ակտով:

2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 32-րդ հոդվածով ամրագրվեց նաև հարկադիր աշխատանքի արգելքը: Արդեն 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 57-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվեց պարտադիր կամ հարկադիր աշխատանքի արգելքը:

Աշխատանքի միջազգային կազմակերպության «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» Կոնվենցիայի⁴ (այսուհետ՝ նաև Աշխատանքի կոնվենցիա) 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Կոնվենցիայի նպատակների համար «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» եզրույթը նշանակում է՝ որևէ պատժի սպառնալիքի տակ որևէ անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը:

«Մարդու իրավունքների և հիմնարար

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 119 2020

1. Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 1995թ., 29-րդ հոդված:
2. Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2005 թվականի փոփոխություններով, 32-րդ հոդված:
3. Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015 թվականի փոփոխություններով, 57-րդ հոդված:
4. Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան վավերացրել է 25.10.2004 թ., ուժի մեջ է մտել 17.12.2005 թ.:

ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի⁵ (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի⁶ 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ աշխատանքի իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են պաշտպանել արդյունավետ կերպով իր ապրուստը վաստակելու աշխատողի իրավունքը **նրա կողմից ազատորեն ընտրված ցանկացած աշխատանքով:**

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 16-րդ կետի բովանդակության համաձայն՝ զինված ուժերի անդամներն ունեն զինված ուժերից դուրս գալու իրավունք:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն հարկադիր աշխատանք է համարում «պարտադրանք որևէ աշխատողի նկատմամբ՝ կատարելու աշխատանք՝ հակառակ իր ցանկություններին և առանց ազատորեն արտահայտված իր համաձայնության»⁷: Կոմիտեն Իռլանդիայի վերաբերյալ 2012 թվականի իր եզրակացություններում նշել է, որ անձն ունի աշխատանքը դադարեցնելու ազատություն⁸:

Եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը: Համանման կարգավորում է նախատեսում նաև ՀՀ Սահմանադրությունը: Մասնավորապես, 57-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտադիր կամ

հարկադիր աշխատանք չի համարվում զինվորական կամ այլընտրանքային ծառայությունը:

Չնայած նշված կարգավորմանը՝ միջազգային չափանիշներով հստակ մեկնաբանվել է կոնվենցիոն այս բացառությունը՝ նշելով, որ այս բացառությունը վերաբերելի է բացառապես զորակոչի միջոցով իրականացվող պարտադիր զինվորական ծառայությանը:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետն՝ ամբողջությամբ և իր համատեքստում, ուղղված է **պարտադիր զինվորական ծառայությանն** այն երկրներում, ուր այն գոյություն ունի երկու պատճառով. մի կողմից՝ կապված համոզմունքների հիման վրա ծառայություն հրաժարվող անձանց հետ, որոնք ամենայն հավանականությամբ նորակոչիկներ են և ոչ կադրային զինվորականներ, իսկ մյուս կողմից՝ պարբերության վերջում նշված զինվորական պարտադիր ծառայության հստակ հղման հետ կապված⁹:

Այսպիսով՝ վերը նշված կարգավորումների, չափանիշների, մեկնաբանությունների և դիրքորոշումների համատեքստում կարելի է եզրահանգել, որ յուրաքանչյուր ոք ինքն է որոշում՝ իրականացնել առհասարակ որևէ աշխատանք (ծառայություն), թե ոչ, յուրաքանչյուր ոք ինքն է որոշում իր կողմից իրականացվող աշխատանքի տեսակը. ընդ որում, այդ աշխատանքը պետք է իրականացվի բացառապես անձի կողմից հստակ արտահայտված կամքի առկայության պայմաններում, և անձը պետք է աշխատանքից արձակման հնարավորություն ունենա:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով սահմանվում են Ազգային անվտանգության մարմինների ծառայողին ծառայությունից արձակելու հիմքերը, որոնցից մեկը ծառայողին հնարավորություն է տալիս ներկա-

5. Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան վավերացրել է 26.04.2002թ., ուժի մեջ է մտել 26.04.2002 թ.:

6. Խարտիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի մարտի 1-ից:

7. Տ՛ես, Նախարարների կոմիտեի Զինված ուժերի անդամների մարդու իրավունքների վերաբերյալ թիվ (2010)4 հանձնարարական, Բացատրական հուշագիր, II Մեկնաբանություններ, «Գ»՝ «Զինծառայողները չպետք է շահագործվեն հարկադիր կամ պարտադիր աշխատանքի միջոցով», վերջին պարբերություն

8. Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի XIV-1 եզրակացություն, 435-րդ և 436-րդ էջեր:

9. Տե՛ս Շիտոսն ընդդեմ Հունաստանի (CHITOS v. Greece) վճիռը, 2015 թվականի հոկտեմբերի 19, գանգատ թիվ 51637/12, կետ 83:

յացնել իր կամքով ծառայությունից արձակվելու վերաբերյալ զեկուցագիր: Ինչպես նշվել է, վերևում, այդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն (այսուհետ՝ նաև քննարկվող հոդված)՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողը ենթակա է ծառայությունից արձակման իր հիմնավորած զեկուցագրով՝ այլ աշխատանքի անցնելու կամ ընտանեկան հանգամանքների կապակցությամբ:

Նշված դրույթով սահմանվում է Ազգային անվտանգության մարմիններում ծառայությունից արձակման հիմքերից մեկը՝ ծառայողի զեկուցագիրը, որի իրացման համար անհրաժեշտ է երկու պայմաններից մեկի առկայությունը՝ այլ աշխատանքի անցնելը կամ ընտանեկան հանգամանք:

Այսպիսով, ստացվում է, որ Ազգային անվտանգության ծառայողը այլ աշխատանքի անցնելուց կամ ընտանեկան հանգամանքից տարբերվող այլ պայմանով չի կարող իր զեկուցագրով արձակվել ծառայությունից:

Նշված կարգավորումն, իհարկե, ակնհայտ հակասության մեջ է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային իրավաբանությամբ ամրագրված աշխատանքի ընտրության ազատության, հարկադիր կամ պարտադիր աշխատանքի արգելքի սկզբունքների հետ, քանի որ օրենսդրական մակարդակով սահմանափակված է բացի հոդվածով նշված երկու պայմաններից որևէ այլ պայմանով, կամ առանց որևէ պայմանի՝ սեփական ցանկությամբ, ծառայությունից դուրս գալու իրավունքը:

Վերևում մեջբերված միջազգային չափանիշներից մեկի համաձայն՝ աշխատանքը չի համարվում հարկադիր կամ պարտադիր այն դեպքում, երբ անձն այդ աշխատանքին է անցել սեփական հստակ ձևակերպված կամարտահայտությամբ: Այս չափանիշն, իհարկե, չի կարող նեղ մեկնաբանություն ունենալ և վերաբերվել բացառապես աշխատանքի անցնելուն, այն հավասարապես վերաբերելի է աշխատանքը շարունակելուն: Այլ կերպ՝ թեկուզև ի սկզբանե ազատ արտահայտված կամքով աշխատանքի անցած լինելու պարագայում աշխատանքը կարող է վերաճել հարկադիրի

կամ պարտադիրի, եթե անձն այլևս չունի այդ աշխատանքն իրականացնելու կամարտահայտություն, ցանկանում է դադարեցնել այդ աշխատանքի իրականացումը, սակայն չի կարողանում օգտվել այդ իրավունքից:

Քննարկվող հոդվածը ոչ միայն բացառում է հոդվածով նշված պայմաններից տարբերվող պայմանով կամ առանց որևէ պայմանի ծառայությունից արձակվելու հնարավորությունը, այլևնույնիսկ նշված պայմանների առկայության դեպքում անձը պարտավորված է հիմնավորել դրանք: Ստացվում է, որ, օրինակ, այլ աշխատանքի անցնելու դեպքում անձը պարտավոր է այդ փաստը հիմնավորել իր զեկուցագրով: Իհարկե անհասկանալի է, թե այս դեպքում ինչ է ենթադրում զեկուցագրի «հիմնավոր» լինելը, արդյոք անձը պարտավոր է որևէ կերպ ապացուցի այլ աշխատանքի անցնելու իր պնդումները՝ ներկայացնելով այդ հանգամանքը հիմնավորող որևէ փաստաթուղթ: Անհասկանալի է նաև, թե ինչ է ենթադրում «ընտանեկան հանգամանքների կապակցությամբ» բառակապակցությունը և ինչպես պետք է հիմնավորվի այդ պայմանի առկայությունը:

Ավելին, բացի աշխատանքի ընտրության ազատությունից, նշված կարգավորումը խիստ խնդրահարույց է նաև խտրականության արգելքի սկզբունքի տեսանկյունից:

Այսպես՝ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 26-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ և ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք առանց որևէ խտրականության. այդ առնչությամբ որևէ կարգի խտրականություն պետք է արգել-

14. Ավելի մանրամասն տե՛ս Гражданский процессуальный кодекс Эстонской Республики: Принят 20.04.2005, RT 2005, 26, 197. Вступление в силу 01.01.2006, статья 98:

վի օրենքով, և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից, ըստ որևէ հատկանիշի, այն է՝ ըստ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ հանգամանքի:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի ներքո հարց առաջանալու համար պետք է տարբերություն լինի համեմատաբար նույն իրավիճակում հայտնված անձանց նկատմամբ վերաբերմունքում: Նման տարբերությունը խտրական է, եթե այն չունի որևէ օբյեկտիվ և հիմնավոր արդարացում, այլ կերպ ասած՝ եթե դա չի հետապնդում օրինական նպատակ կամ եթե չկա համապատասխան հիմնավոր կապ կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև: Պայմանավորվող պետությունները կիրառում են հայեցողության լայն շրջանակ, երբ գնահատում են, թե արդյոք առկա են տարբերություններ, և եթե այո, ապա ինչ չափով են դրանք այլ նման իրավիճակներում արդարացնում վերաբերմունքի տարբերությունները¹⁰:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 77-րդ կետը սահմանում է, որ զինծառայողները պետք է զերծ լինեն մարդու իրավունքների և ազատությունների հետ կապված ցանկացած հիմքով խտրականությունից, օրինակ՝ պայմանավորված սեռով, սեռական կողմնորոշմամբ, ռասայով, մաշկի գույնով, լեզվով, կրոնով, քաղաքական կամ այլ համոզմունքներով, ազգային կամ սոցիալական ծագմամբ, ազգային փոքրամասնության պատկանելով, գույքային դրությամբ, ծննդով կամ այլ դրությամբ: Խտրականության բացառման սկզբունքը չի խախտվի, եթե համանման իրավիճակներում հայտնված անձանց միջև տարբերակումն ունենա օբյեկտիվ և ողջամիտ բացատրություն և հետապնդի իրավաչափ նպատակ, և եթե գործադրված միջոցները ող-

ջամտորեն համաչափ են հետապնդվող նպատակին:

Խտրականության արգելքի սկզբունքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ այդ սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարվում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության արգելքի սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից¹¹:

Վերոնշյալ կարգավորումների և իրավական դիրքորոշումների համատեքստում ներկայացնենք Հայաստանի Հանրապետության այլ մարմիններում ծառայությունից արձակման վերաբերյալ առկա կարգավորումները:

- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագրի ներկայացնելիս, եթե չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության՝ չծառայած ժամկետ:

- «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ ծառայողները փրկարար ծառայությունից ազատվում են անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր զեկուցագրի հիման վրա, այդ թվում՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու, պետական այլ ծառայություն տեղափոխվելու, հանրային ծառայության այլ պաշտոններում նշանակվելու կապակցությամբ (հարկ է նկատել, որ նշված կարգավորման մեջ «այդ թվում» եզրույթը սահմանում է նաև այն դեպքերը, որոնք ներառվում են անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր զեկուցագրի հիման վրա ծառայությունից արձակման հիմքում:

10. Տե՛ս Բուրդենն ընդդեմ Անգլիայի (BURDEN v. The United Kingdom) գործով 2008 թվականի ապրիլի 29-ի վճիռը, գանգատ թիվ 13378/05, կետ 60:

11. Տե՛ս Սահմանադրական դատարանի 2010 թվականի մայիսի 4-ի ՍԴՈ-881 որոշումը:

Սակայն ոչ մի պարագայում այդ դեպքերը սպառիչ պայմաններ չեն, և դրանցից տարբերվող այլ պայմանի առկայության դեպքում ևս անձը կարող է ազատվել Փրկարար ծառայությունից):

• «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ծառայողները Ոստիկանությունում ծառայությունից ազատվում են անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր զեկուցագրի հիման վրա, այդ թվում՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ («այդ թվում» եզրույթի մեկնաբանությունը նույնն է, ինչ «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթի պարագայում):

• «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողը հարկադիր կատարման ծառայությունից ազատվում է անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա:

• «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ քրեակատարողական ծառայողը քրեակատարողական ծառայությունից ազատվում է անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա:

Այսպիսով, ինչպես պարզ է դառնում վերևում նշված կարգավորումներից, որևէ այլ ծառայությունում սեփական նախաձեռնությամբ ծառայությունից ազատվելու համար նշված չէ որևէ պայման, որի առկայության դեպքում միայն ծառայողը կարող է ազատվել ծառայությունից: Ավելին՝ այլ ծառայություններում նաև բացակայում է սեփական նախաձեռնությամբ ծառայությունից ազատման վերաբերյալ զեկուցագիրը կամ գրավոր դիմումը «հիմնավորելու» պահանջ:

Առնվազն անհասկանալի է, թե որն է Ազգային անվտանգության ծառայողների նկատմամբ մյուս ծառայությունների համեմատ այսպիսի տարբերակված մոտեցում ցուցաբերելու օբյեկտիվ հիմքը կամ իրավաչափ նպատակը: Հասկանալի է, որ Ազգային անվտանգության ծառայությունը, իր դերով և նշանակությամբ պայմանավորված, իրականացնում է այնպիսի գործառույթներ, օժտված է այնպիսի իրավասությամբ և լիազորություններով, որոնց շրջանակներում Ազգային անվտանգության ծառայողներն առնչություն են ունենում պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող կարևորագույն նշանակություն ունեցող տեղեկատվության հետ: Ենթադրաբար, տարբերակված այդպիսի կարգավորում սահմանելու հիմքերից մեկը կարող է հանդիսանալ նաև գաղտնիության բարձր աստիճանը, սակայն, չենք կարծում, որ միայն այդ հանգամանքը կարող է հավակնել օբյեկտիվ հիմք կամ իրավաչափ նպատակ դառնալուն (առնվազն այն հանգամանքով պայմանավորված, որ այլ մարմինների ծառայողներ նույնպես հասանելիություն ունեն պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկատվությանը):

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով աշխատանքի ընտրության ազատության սահմանադրական և աշխատանքի ազատության միջազգային դրույթների հետ հակասությունը, ինչպես նաև խտրականության արգելքի սկզբունքի վերաբերյալ կատարված վերլուծությունները՝ անհրաժեշտ է «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում կատարել փոփոխություն՝ հանելով զեկուցագրի հիմնավորված լինելու, ինչպես նաև ծառայությունից արձակվելու համար որևէ պայմանի առկայություն նախատեսող կարգավորումները:

ԱՆԻ ՄԵԺԼՈՒՄՅԱԼ

Ավան և Նոր Նորք վարչական
շրջանների դատախազության դատախազ

**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՎԻԿՏԻՄԻՉԱՅԻԱՆ ՈՐՊԵՍ
ՍՈՅԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ**

Անչափահասների վիկտիմիզացիայի առանձնահատկությունները վեր հանելու համար առաջին հերթին անհրաժեշտ է հասկանալ «վիկտիմիզացիա» և «վիկտիմայնություն» հասկացությունների բովանդակությունը:

Վիկտիմայնությունը հանցագործությունից տուժելու անձի առավել կամ պակաս հակվածությունն է: Վիկտիմայնությամբ օժտված է ցանկացած մարդ: Այն կարող է պայմանավորված լինել մարդու անձնային, վարքագծային առանձնահատկություններով, զբաղեցրած պաշտոնով, գործունեության բնույթով և այլ հատկանիշներով: Ինչ վերաբերում է անձնային առանձնահատկություններին, ապա վիկտիմոլոգիայում առանձնացվում են մի շարք հատկություններ, որոնք մեծացնում են հանցագործությունից տուժելու հավանականությունը: Դրա հետ մեկտեղ, սակայն, մարդկային շատ հատկություններ միանշանակ չեն կարող դիտարկվել որպես վիկտիմային. կախված իրադրությունից, միևնույն հատկությունը կարող է վիկտիմային լինել, կարող է և հակա-վիկտիմային դեր կատարել¹:

Ըստ էության, վիկտիմայնությունն ընկալվում է երկու իմաստով. որպես առանձին մարդկանց զոհ դառնալուն ամսափակվածություն՝ (քրեաբանական տեսանկյունից՝ հանցագործության զոհ), և որպես հասարակության և պետության անընդունակություն՝ պաշտպանել իր քաղաքացիներին:

Կրիմինալ վիկտիմոլոգիայում զոհ է համարվում հանցագործությունից տուժած ցանկացած անձ, անկախ այն հանգամանքից՝ հանցագործությունը պաշտոնապես գրանցվել է, թե ոչ, զոհը ճանաչվել է տուժող, թե ոչ:

Վիկտիմոլոգիայի հիմնարար հասկացություններից մեկը՝ վիկտիմայնությունը, անձի՝ հանցագործության զոհ դառնալու հատկությունն է: Այն ցույց է տալիս հանցագործության զոհ դառնալու անձի առավել կամ պակաս հակվածությունը կամ հնարավորությունը: Ընդ որում, վիկտիմայնության աստիճանը կարող է կախված լինել անձի անհատական բնութագրերից, իրավական կարգավիճակից, զբաղմունքի տեսակից:

Վիկտիմոլոգիայի հիմնական գաղափարները հանգում են հետևյալին².

1. զոհի վարքը էական ազդեցություն է գործում հանցավոր վարքի մոտիվացիայի վրա: Այն կարող է հեշտացնել այն կամ նույնիսկ դրդել դրան: Եվ ընդհակառակը, վարքագծի ճիշտ ընտրությունը կարող է անհնարին դարձնել հանցավոր ոտնձգությունը (կամ դրա հավանականությունը հասցնել նվազագույնի կամ, ծայրահեղ դեպքում, թույլ կտա խուսափել քրեական արարքի լուրջ բացասական հետևանքներից),

2. հանցագործության զոհ դառնալու հավանականությունը կախված է հատուկ ֆենոմենից՝ վիկտիմայնությունից: Յուրաքանչյուր անձ կարող է գնահատվել, թե որքանով մեծ է նրա՝ հանցագործության զոհի վերածվելու հավանականությունը: Այդ հավանականությունն էլ հենց որոշում է մարդու վիկտիմայնությունը (որքանավելի մեծ է հավանականությունը, այնքան ավելի բարձր է վիկտիմայնությունը),

3. վիկտիմայնությունն որոշակի անձի, սոցիալական դերի կամ սոցիալական իրավիճակի այն հատկությունն է, որը գրգռում է հանցավոր վարքի կամ հեշտացնում է դրա

1. Ա. Գաբուզյան, Կրիմինալոգիա:

2. **Лопашенко Н. А.**, Еще раз об основании и принципах криминализации, М. 2003. стр. 45.

դրսևորումը:

4. Համապատասխանաբար առանձնացվում են անձնային, դերային և իրավիճակային վիկտիմայնություն,

5. վիկտիմայնություն կախված է մի շարք գործոններից,

- անձնային բնութագրերից,
- անձի իրավական կարգավիճակից,

նրա ծառայողական ֆունկցիաների առանձնահատկություններից, նյութական ապահովածությունից և պաշտպանվածության մակարդակից,

- իրավիճակի կոնֆլիկտայնության աստիճանից և այն տեղի և ժամանակի առանձնահատկություններից, որոնցում այդ իրավիճակը զարգանում է,

6. վիկտիմայնության մեծությունը կարող է փոփոխվել. դրա բարձրացման գործընթացը բնորոշվում է որպես վիկտիմայնացում, իջեցումը՝ ապավիկտիմայնացում: Ազդելով բարձր վիկտիմայնության պատճառ հանդիսացող գործոնների վրա՝ հասարակությունը կարող է իջեցնել այն և դրանով իսկ ազդել հանցավորության վրա:

Եթե վիկտիմայնությունն դա պոտենցիալ ունակություն է, ապա վիկտիմիզացիան՝ դրա փաստացի իրագործումը: Զոհ դառնալու ունակությունը (վիկտիմայնություն) դա պատճառն է, իսկ որպես զոհ գրանցումը՝ արդյունքը: Վիկտիմիզացիան դիտարկվում է երկու ասպեկտով.

1. անհատական - մեկ մարդու
2. զանգվածային - վիկտիմիզացիան որպես սոցիալական երևույթ, հանցագործության զոհերի և վնաս հասցնելու գործողությունների ամբողջություն որոշակի վայրում և որոշակի ժամանակ, որոնք ունեն որակական և քանակական բնութագրիչներ: Այդ իմաստով զանգվածային վիկտիմիզացիան կարելի է դնել մեկ շարքում «հանցագործություն» երևույթի հետ:

Անհրաժեշտ է տարբերել կրկնվող վիկտիմիզացիան երկրորդայինից: Կրկնվող վիկտիմիզացիայի դեպքում, մարդը հանդիսանում է տուժող երկու և ավելի հանցագործ արարքներից: Մինչդեռ երկրորդային կամ ռիկոչետային վիկտիմիզացիայի դեպքում տուժում են

զոհի հարազատները, ազգականները, ովքեր զոհի հետ նույն ապրումներն են ունենում³:

Անհրաժեշտ է նշել, որ կապը վիկտիմիզացիան և վիկտիմայնությունը փոխկապված են և մի շարք դեպքերում՝ փոխներգործում են. այսպես, որքան շատ են կոնկրետ վայրում կատարվում հանցագործություններ, այնքան մեծ է տվյալ բնակավայրի բնակչության հնարավորությունը վերածվել հանցագործության զոհի:

Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում ընտանիքում երեխաների վիկտիմիզացիային⁴: Երեխաների վիկտիմիզացիան երկակի ասպեկտ ունի. մի կողմից այն կործանարար է հենց անչափահաս զոհի համար, մյուս կողմից՝ անչափահաս տարիքում ոտնձգության, հատկապես դաժան վերաբերմունքի զոհ դառնալու հանգամանքը շատերի մոտ հիմք է հանդիսանում, որ նրանք իրենց բացասական փորձը տեղափոխեն այլ անձնաց, իսկ առավել հաճախ՝ իրենց կամ օտար երեխաների վրա:

Անչափահասների վիկտիմայնության բարձր մակարդակը պայմանավորված է ոչ միայն նրանց հոգեֆիզիկական որակներով, այլ նաև նրանց սոցիալական դերերով, տեղով սոցիալական հարաբերությունների համակարգում, դիրքով, որը նա զբաղեցնում է ընտանիքում⁵:

Ինչ վերաբերվում է անչափահասների վիկտիմիզացիայի քանակական-որակական բնութագրիչներին, ապա այստեղ անհրաժեշտ է նշել հետևյալը:

Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալների՝ աշխարհում ամեն օր դաժան վերաբերմունքից մահանում է 3 երեխա: 100-ից մոտավորապես յուրաքանչյուր 1-2 դեպքում ֆիզիկական բռնությունը ավարտվում է մահով:

Անչափահասների հանդեպ կատարվում են նաև շահադիտական հանցագործություններ: Օրինակ՝ Դ. Ռիվմանի տվյալների համաձայն՝ անչափահասների 4.2% տուժում են բնակարանային գողություններից, թեև հաճախ նրանք ոչ թե առաջնային, այլ երկրորդային զոհեր են: Մասնավորապես, ըստ նշված հեղինակի ուսումնասիրության արդյունքների՝ բնակարա-

3. **Антонян Ю.М., Самовичев Е.Г.**, Неблагоприятные условия формирования личности в детстве. М., 1983, стр. 98.

4. **Wallace H.** Victimology: legal, psychological, and social perspectives. Boston, 1998. P. 175.

5. **Ривман Д.В.**, Устинов В.С. Виктимология. СПб., 2000 с. 70.

նային գողությունից տուժած 260 մեծահասակների (առաջնային վիկտիմիզացված) հետ մեկտեղ տուժել են նաև նրանց 239 երեխաները: Անչափահաս տղաների 4.5% և աղջիկների 3% մինչև 16 տարեկան դառնալը տուժել են գրպանահատներից, 3%-ը՝ ավազակությունից, 6.9%-ը՝ գողությունից, 13.5%-ը՝ շորթումից⁶:

Անչափահասների վիկտիմիզացիան իր մեջ ներառում է մի շարք տարրեր՝ վիկտիմային իրադրային փաստեր, անչափահասի վիկտիմային անհատական և հոգեբանական առանձնահատկությունները, առանձնահատուկ էմոցիոնալ վիճակն անչափահասի վիկտիմային վարք:

Անչափահասի վիկտիմիզացիայի գործընթացում կարևոր է վերջինիս վարքը՝ անչափահասի գործողության կամ անգործության կատարումը, ինչը նպաստում է, որ ինքը հայտնվի զոհի կարգավիճակում: Կրիմինոգիայում վիկտիմային վարք ասելով հասկանում ենք իրադրություն, որի ընթացքում զոհը որոշակիորեն նպաստում է հանցանքի կատարմանը, գիտակցաբար կամ անգիտակցաբար ստեղծում է օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պայմաններ հանցանքի կատարման համար: Վիկտիմալոգիայում իբրև առաջնային առանձնացվում են հետևյալ դրույթները⁷

1. զոհի վարքը ունենում է էական ազդեցություն հանցավոր վարքի մոտիվացիայի վրա: Այն կարող է թե խաթարել և թե նպաստել հանցանքի կատարմանը,

2. զոհի կարգավիճակում հայտնվելը էապես կախված է վիկտիմայնության առանձնահատուկ ֆենոմենից: Յուրաքանչյուր անձի դեպքում կարելի է որոշել թե որքան է նրա զոհ դառնալու հավանականությունը: Եվ այս հավանականությունն էլ որոշում է տվյալ անձի վիկտիմայնությունը,

3. յուրաքանչյուր անձի մոտ վիկտիմայնությունը կարող է դրսևորվել տարբեր կերպ: Առանձնանում են վիկտիմայնության երեք տեսակ՝ անհատական, դերային և իրադրային:

Անչափահասների վիկտիմիզացիայում

անչափ կարևոր են նաև երեխայի, այսինքն պոտենցիալ զոհի անհատական հոգեբանական⁸, վարքի առանձնահատկությունները և հոգեհուզական վիճակը: Այլ կերպ ասած, բացի իրադրության վիկտիմային գործոններից, գոյություն ունեն ոչ պակաս առաջնային և երկրորդական վիկտիմոգեն տարրեր և անչափահասի վարքը, որոնք էլ իմք են հանդիսանում երեխայի վիկտիմիզացիային:

Զոհի⁹ ուսումնասիրության մեջ կարևոր է նրա վարքի արտաքին և ներքին մեխանիզմների որոշումը: Դրա համար անհրաժեշտ է զոհի անձի բազմակողմանի ուսումնասիրություն, հատկապես հաշվի առնելով՝

- հոգեկան հարմարվողականություն, որը ներառում լարվածության ու վրդովմունքի գործընթացները, անհանգստություն, էմոցիոնալ կայունություն

- անձի դժվարին իրավիճակներում դիմադրելու կարողությունն ու առանձնահատկություններ, պաշտպանական մեխանիզմները

- մոտիվացիոն առանձնահատկությունները

- սեփական պահանջմունքների վերահսկողությունը, ինքնավստահությունն և սեփական անձի հանդեպ վերաբերմունքը

Անչափահասների դեմ ուղղված հանցագործությունները իրենցից ներկայացնում են սոցիալապես վտանգավոր ոտնձգություններ, որոնք խախտում են հատկապես այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են անչափահասների ֆիզիկական, ինտելեկտուալ և բարոյական կրթությունը:

Հանցագործությունները, որոնք կատարվում են անչափահասների նկատմամբ պատճառում են նրանց հոգեկան մեծ տրավմա՝ խաթարելով նրա զարգացման բնականոն ընթացքը: Այս դեպքերում նրանց անհրաժեշտ է հոգեբանների և ծնողների հետ աշխատանքը:

Հանցավոր¹⁰ ոտնձգության զոհ դարձած անչափահասները հետագայում կարող են ունենալ որոշակի խնդիրներ, որոնք հենց որոշակի դեպքերում առաջանում են հանցանքի

6. Ривман Д.В., Устинов В.С. Виктимология. СПб., 2000 с. 165.

7. Ильяшенко А. Н., Криминологическая характеристика жертв ,Москва 2007, ст. 78.

8. Малкин-Пых И. Г. Психология поведения жертвы.-М.: Изд-во, Эксмо, 2006.-1008 с.

9. Сидоренко Э. Л. Индивидуализация наказания с учетом отрицательного поведения потерпевшего//ПЮ. 2003.

10. <http://www.jourclub.ru/30/674/4/> Особенности личности несовершеннолетних жертв преступлений.

հետևանքով: Օրինակ՝ վախ, չարություն, կյանքի ոչ ճիշտ ընկալում, վրեժխնդրություն և այլն:

Ներկայիս դրությամբ անչափահասների դեմ ուղղված հանցագործությունները գնահատվում են պաշտոնական վիճակագրական ցուցանիշներով: Բայց, սրանից բացի գոյություն ունեն մի շարք լատենտային հանցագործություններ, որոնց թիվը դժվար է նույնիսկ պատկերացնել:

Առանձնացվում են հատկապես անչափահասների վիկտիմայնությունը վերաբերող ընդհանուր և հատուկ պատճառներ և պայմանները: Անչափահասների վիկտիմիզացիան կախված է նրանց խառնվածքից, գենետիկական նախահակումից՝ ուղղված շեղվող վարքագծի: Այս կամ այն սոցիալականացման զոհ դառնալը կախված է բնավորության անձնային շատ գծերից, որոնք կարող են նպաստել անձի բարձր կամ ցածր վիկտիմայնությանը: Դրանցից են աձի համառությունը, կայունությունը, ճկունությունը, ռեֆլեքսների այս կամ այն չափի զարգացվածությունը, արժեհամակարգը: Այս հատկանիշներով էլ պայմանավորված հաճախ զոհ դառնալու պարագայում մեղքը հենց ընկնում է զոհի վրա և ինքն է պատասխանատու իր հետ կատարվածի համար:

Հանցագործության մեխանիզմի ներսում առանձնացնում են վիկտիմիզացիայի անձնական և իրադրային պատճառներ: Դրանց նաև անվանում են վիկտիմոգեն գործոններ: Անձնական պատճառներն են՝ որոշակի կենսաֆիզիկական, հոգեբանական, հոգեկան և սոցիալական որակները: Գոյություն չունեն «բնածին զոհեր» կամ «զոհեր տրված բնությունից»: Մարդու կողմից ձեռք բերված ֆիզիկական, հոգեկան և սոցիալական գծերն ու հատկանիշները (ֆիզիկական կամ այլ թերություններ, անկարողությունը ինքնապաշտպանության կամ ոչ բավականաչափ պատրաստվածության դրան, հատուկ արտաքին հոգեբանական կամ նյութաֆինանսական դուրեկանությունը) կարող են դառնալ նրա վիկտիմիզացիայի պատճառ¹¹:

Իրադրության պատճառներն են օբյեկտիվ հատկությունները, կյանքի հանգամանքները, որոնց մեջ հայտնվելով մարդը դառնում է

հանցագործության զոհ: Դա հանցագործության վայրի, ժամանակի, միջոցի և իրադրության հանգամանքն է: Փաստացի, յուրաքանչյուր մարդ այս կամ այն չափով զոհ դառնալու պոտենցիալ ունի:

Անչափահասի վիկտիմայնությունը կախված է նաև նրա խառնվածքից, գենետիկ հակվածությունից այս կամ այն դրությունում որոշակի պահելաձև դրսևորելու: Անչափահասների զոհ դառնալը հաճախ պայմանավորված է լինում հենց իր անհատական խառնվածքից, որը որոշակի դրությունից ելնելով կարող է թե նպաստել նրա զոհ դառնալուն, և թե նպաստի, որպեսզի չհայտնվի զոհի կարգավիճակում:

Այսպիսով՝ կարելի է առանձնացնել մի շարք պայմաններ, որոնք անչափահասին դարձնում են վիկտիմային՝

1. կարիքային հոգեբանական առանձնահատկությունները՝ մասնավորապես չափից դուրս վստահությունը, բարությունը,

2. այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ, ինչպիսիք են ինքնագնահատականի բացակայություն, էմոցիոնալ անկայունությունը, հոգեհուզական լարվածության բարձր աստիճանը,

3. սեռական զարգացվածություն բացակայությունը,

4. նյարդային-հոգեբանական խնդիրները,

5. լքվածությունը, էմոցիոնալ անկայունությունը, ջերմության պակասը, ֆիզիկական զարգացվածության պակասը, ներշնչվածությունը, վտանգը գնահատելու և դրանից խուսափելու անկարողությունը,

6. ընտանեկան դաժան վերաբերմունքի առկայություն, ուժեղի մոտ թույլ լինելու կարողությունը և թույլի մոտ ուժեղ լինելը:

Ելնելով վերոգրյալից կարելի է փաստել, որ անչափահասների վիկտիմիզացիայի կանխարգելումը կարող ենք համարել կրիմինալոգիայի և վիկտիմալոգիայի կարևորագույն խնդիրներից մեկը, քանի որ ներկայիս ժամանակներում քիչ չեն այն անչափահասները, որոնք հանցագործության զոհ են դառնում: Հանցանքները, որոնք կատարվում են նրանց նկատմամբ, և զոհի կարգավիճակը հետագայում իր հետևանքներն է ունենում անչափահասի

11. Галушко Д. М., Ювенальная виктимология: криминологические и социально-психологические проблемы: дис. ... канд. юрид. наук. М., 2003. С. 12.

ամբողջ կյանքի ընթացքում: Իսկ կանխարգելման հիմնական ուղղություններից է անչափահասների իրավական դաստիարակությունը՝ իրավագիտակցության մակարդակի ձևավորումը՝ այսինքն սեփական իրավունքների ու պարտականությունների գիտակցումը:

Անչափահասը սոցիալիզացիայի ընթացքում սկզբում ճանաչում և յուրացնում են հասարակության նորմերն ու մշակութային արժեք-

ները, հետո միայն ձևավոխում դրանք իր սեփական արժեքների, շահերի, պահանջմունքների: Սակայն ոչ միշտ է մարդու կողմից ձևավորվածը դառնում դրական: Դրա հետ մեկտեղ բացասականը կարող է որոշիչ լինել մարդու անձի մեջ, բերել շեղվող վարքի, որը տանում է ինչպես վիկտիմիզացիայի, այնպես էլ կրիմինալիզացիայի:



ԱՐԱՄ ԹԱՄԱԶՅԱՆ

Արդարադատության պետական խորհրդական,
 ՀՀ վաստակավոր իրավաբան,
 իրավաբանական գիտությունների դոկտոր

ՄԱՐԻԱՄ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական
 ապահովման և սպասարկման բաժնի
 գլխավոր մասնագետ

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴԱԺԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԱՆՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ
 ՃՆՇՄԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՀԱԲԵԿՄԱՆ ՄԻՋՈՑ**

Հողվածում քննարկվում է դաժանության դրսևորումները մարդկության քաղաքակրթության բոլոր ժամանակներում, մի կողմից՝ որպես հանցավոր վարքագծի դրսևորման անձնական հատկանիշ, մյուս կողմից՝ որպես պետության և պետական իշխանության ձեռքին ցանկացած անհնազանդության ճնշման և բնակչությանն ահաբեկման մեջ պահելու միջոց: Վերջին դեպքում, փաստորեն, պետության պատմության, նրա պատմական զարգացման տևական ժամանակաշրջանում դաժանությունն իր դրսևորումներով գրեթե բարձրացվել և հասցվել է օրենքի աստիճանի:

Հողվածում մանրակրկիտ կերպով վերլուծվել է պետական մակարդակով դաժանության դրսևորումները նախաքրիստոնեական (հեթանոսական, զրադաշտական) ժամանակներից մինչև մեր օրերը՝ «Աստծո դատաստան»-ից և «ճակատագրական մեղք»-ի գաղափարից մինչև միջնադարյան ինկվիզիցիա, Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունից մինչև 21-րդ դարը ներառյալ:

Բանալի բառեր. առանձին դաժանություն, տանջանք, տառապանք, Աստծո դատաստան, Աստծո օրհնություն, ճակատագրական մեղք, կաշին քերել, կաշին քերթել, մարմինը երկու կես անել, քառատում, խաչելություն, գլխատում, ողջակիզում, անվաջարդում, գնդակահարություն, կախաղան, կաթոլիկ եկեղեցի, ինկվիզիցիա, արյան վրեժ, օրդալիա, Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, «Սաքսոնական կապիտուլյաներ», գերմանական «Կորոլինա», Ռուսական Պրավդա, Ռազմական Արտիկուլ, Ռուսաստանի 1649, 1832, 1845, 1903 թվականների օրենքների ժողովածուներ, էլեկտրական աթոռ, մահացու ներարկում, գազային մահախցիկ, ցմահ ազատագրկում:

АРАМ ТАМАЗЯН

Государственный советник юстиции,
 Заслуженный юрист РА, доктор юридических наук

МАРИАМ БАГДАСАРЯН

Главный специалист Отдела правового
 обеспечения и обслуживания Аппарата
 Национального Собрания РА

**ПРОЯВЛЕНИЕ ЖЕСТОКОСТИ СО СТОРОНЫ ГОСУДАРСТВА КАК СРЕДСТВО ПОДАВЛЕНИЯ
 НЕПОВИНОВЕНИЯ И УСТРАШЕНИЯ НАСЕЛЕНИЯ**

В статье рассматриваются проявления жестокости во все времена человеческой цивилизации, с одной стороны, как личностная особенность проявления преступного поведения, с другой стороны, как средство со стороны государства подавления любого неповиновения и способ запугивания населения. В последнем случае, по сути, за всю историю государства, за длительный период его исторического развития, жестокость с его проявлениями была почти возведена до уровня закона.

В статье подробно рассматриваются проявления жестокости на государственном уровне с дохристианских (языческих, зороастрийских) времен до наших дней - от «Божьего суда» до идеи «фатальной вины», от средневековой инквизиции, Французской буржуазной революции включая до 21-го века.

Ключевые слова: особая жестокость, мучение, страдание, Божий суд, Божье благословение, фатальная вина, соскобление кожи, сдирание кожи, разрубленные тела пополам, четвертование, распятие, обезглавливание, сожжение заживо, колесование, расстрел, повешение, католическая церковь, инквизиция, кровная месть, ордалия, Мхитар Гош, Судебник, «Саксонские capitoлии», немецкая «Каролина», Русская Правда, Артикул воинский, Соборное уложение 1649, 1832, 1845, 1903 годов, электрический стул, смертельная инъекция, газовая камера, пожизненное заключение.

ARAM TAMAZIAN

State Councillor of Justice.
Honored Lawyer of the Republic of Armenia,
Doctor of Law

MARIAM BAGHDASARYAN

Chief Specialist of Legal Support and Service
Department of the RA National Assembly Staff

**THE MANIFESTATION OF CRUELTY BY THE STATE AS A MEANS OF SUPPRESSING DISOBEDIENCE
AND INTIMIDATING THE POPULATION**

The article examines the manifestations of cruelty at all times of human civilization, as a personal feature of the manifestation of criminal behavior, on the one hand, and as a means of suppressing any disobedience in the hands of the State and a way to intimidate the population, on the other hand. In the latter case, in fact, throughout the entire state history, the cruelty with its manifestations has almost been elevated to the level of law.

In the article, a detailed analysis of the manifestations of cruelty on the state level is provided from pre-Christian (pagan, zoroastrian) times up to the present day - from the «Divine Court» and the idea of «fatal fault», to the medieval Inquisition, the French bourgeois revolution to the 21st century.

Keywords: exceptional brutality, torture, suffering, God's judgment, divine justice, God's blessing, fatal guilt, flaying, dividing the body into two, quartering, crucifixion, beheading, execution wheel, shooting, hanging, Catholic church, Inquisition, blood revenge, ordeal, Mkhitar Gosh, Datastanagirq (Book of Law), «The Saxon Capitols», the German «Carolina», Russkaya Pravda, the Military Code, the Sobornoye Ulozheniye of 1649, 1832, 1845, 1903, electric chair, lethal injection, gas chamber, life imprisonment.

ՄՈՒՇԵՂ ԱՐԱՄՅԱՆ

Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի տեղակալ

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

Հոդվածը նվիրված է հափշտակության տեսակների ուսումնասիրությանը ըստ արտասահմանյան օրենսդրությունների: Դրանում կատարված են համեմատական վերլուծություններ և բացահայտված են օտարերկրյա պետությունների օրենսդրություններում հափշտակությանը տրված սահմանումների դրական և բացասական կողմերը: Հոդվածում փորձ է արված գտնել լուծումներ ներպետական օրենսդրությամբ հափշտակության ամբողջական հասկացության ամրագրման ուղղությամբ:

Բանալի բառեր. հափշտակություն, հասկացություն, օտարերկրյա օրենսդրություն, բերգլերի:

МУШЕГ АРАМЯН

Заместитель прокурора административных округов Аван и Нор Норк

ВИДЫ ХИЩЕНИЙ ПО УГОЛОВНОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ ЗАРУБЕЖНЫХ СТРАН

Статья посвящена изучению видов хищения по иностранным законодательствам. В статье проведен сравнительный анализ, выявлены положительные и отрицательные стороны определения хищений в законодательстве иностранных государств. В статье предпринята попытка найти решения, чтобы закрепить всю концепцию хищения в национальном законодательстве.

Ключевые слова: хищения, концепция, зарубежное законодательство, берглери.

MUSHEGH ARAMYAN

Deputy prosecutor of Prosecutors Office of Avan and Nor Nork Administrative Districts

TYPES OF THEFT UNDER THE CRIMINAL LAWS OF FOREIGN COUNTRIES

The article is devoted to the study of the types of theft under foreign laws. The article provides a comparative analysis, reveals the positive and negative aspects of the definition of theft in the legislation of foreign countries. The article attempts to find solutions to consolidate the whole concept of theft in national legislation.

Key words: theft, concept, foreign country, burglary.

ԴԱՎԻԹ ՕՇԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

**ՎՆԱՍ ԵԶՐՈՒՅԹԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ
«ԳՐԱՎԱՌՈՒՄՆ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼԸ» ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Սույն հոդվածը նվիրված է Գրավառուին վնաս պատճառելը հանցակազմում վնաս եզրույթի հասկացության և սահմանների հստակեցմանը: Հոդվածում վերլուծվում է վնասի ինստիտուտի մասնավոր-իրավական հիմքերը, տեսակները և սահմանները: Այդ վերլուծության արդյունքում քննարկվում են վնասի ինստիտուտի մասնավոր-իրավական կառուցակարգերը սույն հանցակազմի համատեքստում: Մասնավորապես, հեղինակի կողմից առաջարկվում են որոշակի չափանիշներ, որոնք կարող են օգտակար լինել այս հանցակազմի քրեաիրավական որակման ժամանակ:

Բանալի բառեր. դեղիկտային պարտավորություններ, վնաս, հանցակազմ, գրավառու, գրավային հարաբերություններ

ДАВИТ ОГАНЯН

Аспирант Образовательного комплекса полиции Республики Армения

**ПОНЯТИЕ И ГРАНИЦЫ ТЕРМИНА УЩЕРБ В КОНТЕКСТЕ ПРЕСТУПЛЕНИЯ ПРИЧИНЕНИЕ
УЩЕРБА ЗАЛОГАДЕРЖАТЕЛЮ**

Данная статья посвящена определению понятия и границ термина ущерб в контексте преступления Причинение ущерба залогодержателю. В статье анализируются частно-правовые основы, типы и границы института ущерба.. В результате данного анализа обсуждается частно-правовые сооружения института ущерба в контексте данного преступления. В частности, автор предлагает определенные критерии, которые могут быть полезны при уголовно-правового квалификации преступления.

Ключевые слова: деликтные обязательства, ущерб, состав преступления, залогодержател, залоговые отношения

DAVIT OHANYAN

Postgraduate student of Educational Complex of Police of RA

**THE CONCEPT AND BOUNDARIES OF THE TERM OF DAMAGE AT THE CONTEXT OF THE CRIME CAUSE
DAMAGE TO THE PLEDGEE**

This article is devoted to the clarification of the concept and boundaries of the term of damage at the context of the crime cause damage to the pledgee. In the research have been analyzed the private-legal grounds, types and boundaries of the institute of damage. As a result of that analyze, the private-legal structure of the institute of damage at the context of that crime are discussed. The author, particularly, offers certain criterias, which can be useful in qualification of that crime.

Key words: tort law, damage, crime, pledgee, collateral relations.

ՀԱՐՈՒՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի վերապատրաստման և որակավորման բարձրացման բաժնի դասախոս, «Լիզլ Ինվեսթիգեյշն» իրավաբանական ընկերության տնօրեն և գլխավոր իրավաբան

ՆԵՐԱՆՁՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏՃԱՌ

Կոռուպցիայի դեմ պայքարը, որպեսզի լինի առավել արդյունավետ՝ պետք է ուշադրություն դարձնել նաև կոռուպցիոն վարքագծի ներանձնային պատճառների բացահայտմանը, քանզի կոռուպցիան ի սկզբանե ծնվում է մարդուց, ուստիև դրա դեմ պայքարը, որպեսզի լինի հիմքային և ամբողջական պետք է սկսել անձից, որը փորձ է արվել ուսումնասիրել սույն հոդվածի սահմաններում:

Բանալի բառեր. կոռուպցիա, քրեաբանություն, կրիմինալոգիա, կոռուպցիոն վարքագիծ, ներանձնային խնդիր:

ЗАРУИ АРУТЮНЯН

"Лигл Инвестигейшн " юридическая компания – директор, главный юрист
Преподаватель - Отдел переподготовки, повышения квалификации и научно-исследовательской деятельности Академии Гос. Управления РА

ВНУТРИЛИЧНОСТНЫЕ ПРОБЛЕМЫ КАК ПРИЧИНА КОРРУПЦИОННОГО ПОВЕДЕНИЯ

Для того, чтобы борьба с коррупцией была более эффективной, нужно также обратить внимание на выявление внутриличностных причин коррупционного поведения, поскольку коррупция изначально рождается от человека, поэтому борьбу с ней, чтобы была фундаментальной и целостной, нужно начать с личности, что и попытались изучить в рамках данной статьи.

Ключевые слова: коррупция, криминология, коррупционное поведение, внутриличностная проблема.

ZARUHI HARUTYUNYAN

Director-Chief Legal Officer -"Legal Investigation" LLC
Lecturer - Department of Training, Qualification Improvement, and Research Activities at State Public Administration Academy of RA

INTRAPERSONAL PROBLEMS AS A CAUSE OF CORRUPTION BEHAVIOR

In order to ensure more effective fight against corruption it is necessary to pay attention to the identification of the intrapersonal causes of corrupt behavior, as the corruption is coming from the person, therefore in order to ensure more fundamental and complete fight against it, it should be started from the person, which was tried to explore within this article.

Key words: corruption, criminology, corruption behavior, intrapersonal problem.

ԺՈՐԱ ԶՃԱՆԳԻՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՏԵՂԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՁԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Դիտելով արդարադատությունը որպես միասնական կատեգորիա՝ հեղինակը իրավաբանական պատասխանատվության տեսակների հիմքով տարբերակում է արդարադատության ոլորտները, այդ թվում նաև՝ Սահմանադրական արդարադատությունը, որը միասնական դատական իշխանության գործառնություններից մեկն է, և որի իրականացման համար առաջարկվում է վերականգնել Գերագույն Դատարանը և դրա կազմում ստեղծել Սահմանադրական արդարադատության պալատ:

Հարցի նման լուծումը հնարավորություն կտա Սահմանադրական Դատարանը դիտել որպես դատական իշխանության մարմին և դատական իշխանության մարմինների բուրգի վերևում տեսնել Գերագույն Դատարանը:

Բանալի բառեր. սահմանադրության իրավական պաշտպանություն, արդարադատություն, Սահմանադրական արդարադատություն, արդարադատության միասնականություն, դատական իշխանության միասնություն, յուրիսդիկցիա, սահմանադրականություն, լեգիտիմ իշխանություն, արդարադատության ոլորտ, իմպերատիվություն, Սահմանադրության ընդունման իրական նպատակ, կեղծ-շինծու սահմանադրություն...

ЖОРА ДЖАНГИРЯН

Доктор юридических наук, профессор

МЕСТО КОНСТИТУЦИОННОГО СУДА В СИСТЕМЕ РАЗДЕЛЕНИЯ ВЛАСТЕЙ СОГЛАСНО КОНСТИТУЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ 2015 ГОДА

Рассматривая правосудие как единую категорию, автор выделяет сферы правосудия по видам юридической ответственности, в том числе конституционное правосудие, которое является одной из функций единой судебной власти, и для осуществления которой предлагается восстановить Верховный суд и в его составе создать Палату конституционного правосудия. Такое решение позволит Конституционный суд рассматривать как орган судебной власти и видеть Верховный суд на вершине пирамиды судебных органов.

Ключевые слова: правовая защита конституции, правосудие, единство правосудия, единство судебной власти, юрисдикция, конституционализм, легитимная власть, сфера правосудия, императивность, реальная цель принятия Конституции...

ZHORA JHANGIRYAN

Doctor of Law, Professor

THE PLACE OF THE CONSTITUTIONAL COURT IN THE SYSTEM OF SEPARATION OF POWERS ACCORDING TO THE RA CONSTITUTION WITH AMENDMENTS OF 2015

Considering justice as a unified category, the author distinguishes between the spheres of justice based on the types of legal liability, including Constitutional Justice, which is one of the functions of a single judiciary, for the implementation of which it is proposed to restore the Supreme Court and establish the Constitutional Justice Chamber within it.

Such a solution would allow the Constitutional Court to be seen as a body of judicial power and the Supreme Court would stand above the pyramid of judicial bodies.

Keywords: Legal Protection of the Constitution, justice, constitutional justice, unity of justice, unity of the judiciary, jurisdiction, constitutionality, legitimate government, sphere of justice, imperativeness, real goal of the Adoption of the Constitution, fake Constitution

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԻԿՅԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
Զինճառայողների և նրանց ընտանիքների անդամների
իրավունքների պաշտպանության բաժնի պետ,
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
գիտակրթական միջազգային կենտրոնի
Քաղաքագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԴՆԹ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ՝ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՁԻ
ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՐԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ**

Միջազգային իրավաբանության և առաջատար երկրների լավագույն փորձի հիման վրա հողվածում մանրամասն ներկայացվել է ԴՆԹ բնութագրերի պահպանման կարգավորումները՝ անձի անձնական կյանքը հարգելու իրավունքի տեսանկյունից: Հողվածում վեր են հանվել ԴՆԹ բնութագրերի երկարաժամկետ պահպանման վերաբերյալ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները և հիմնավորվել նախատեսված 80 տարի պահպանելու ժամկետը վերանայելու և դրանք պահելու հիմքերը հստակ սահմանելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. ԴՆԹ բնութագրեր, հետազոտության նմուշներ, պահպանման 80 տարվա ժամկետ, անձնական կյանքի հարգման իրավունք:

РАЗМИК МАРИКЯН

Начальник отдела по защите прав военнослужащих и членов их семей
Аппарата защитника прав человека Республики Армения,
Преподаватель кафедры политологии
Международного научно-образовательного центра
Национальной академии наук Республики Армения,
Кандидат юридических наук

**ХРАНЕНИЕ ПРОФИЛИ ДНК КАК ВМЕШАТЕЛЬСТВО В ПРАВО ЧЕЛОВЕКА НА
НЕПРИКОСНОВЕННОСТЬ ЧАСТНОЙ ЖИЗНИ**

Основываясь на международных стандартах и лучшей практике ведущих стран, в статье подробно представлены правила хранения профилей ДНК с точки зрения права на уважение частной жизни человека. В статье освещены положения Закона РА «О Полиции» о долгосрочном хранении профилей ДНК, обоснована необходимость пересмотра 80-летнего срока и четкое определение оснований для их хранения.

Ключевые слова: профиль ДНК, клеточные образцы, 80 лет срок хранения, уважение личной жизни человека.

RAZMIK MARIKYAN

Head of Unit for Protection of Rights of Military Servicemen and their Family Members of
Human Rights Defender's Office, Lecturer at Department of Political Sciences of
International Educational Center of National Academy of Sciences, PhD in Law

**RETENTION OF DNA FILES AS AN INTERFERENCE WITH THE RIGHT
TO RESPECT FOR PRIVATE LIFE**

Based on international standards and the best practices of leading countries, the article in detail introduces the regulations of DNA profiles' retention, in terms of the right to respect for a person's private life. The article highlights the provisions of the RA Law on Police about the long-term retention of DNA profiles, justifies the need to revise the 80-year term and clearly define the grounds for retaining them.

Keywords: DNA profile, cellular samples, 80 years retention term, respect for private life.

ՍԱՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Արարատի մարզի դատախազության դատախազ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ:
ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ**

Տվյալ հոդվածի շրջանակներում հեղինակը ներկայացրել է ընդհանուր բաժնային սեփականության հասկացությունը: Հեղինակը մասնավորապես վերլուծել է ներպետական օրենսդրական զարգացումները, այնուհետև ներկայացվել են եզրահանգումներ և օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ: Վերլուծվել են նաև միջազգային փորձում առկա մոտեցումները:

Բանալի բառեր. գույք, բաժին, սեփականատեր, սեփականության իրավունք, ընդհանուր բաժնային սեփականություն:

САМИНЭ ПЕТРОСЯН

Прокурор прокуратуры Араратской области,
Аспирант кафедры гражданского права ЕГУ

**ПОНЯТИЕ ОБЩЕЙ СОБСТВЕННОСТИ. ДОЛЕВАЯ СОБСТВЕННОСТЬ
КАК ВИД ОБЩЕГО ИМУЩЕСТВА**

В рамках данной научной работы автором представлены развития понятия общей долевой собственности. В частности, автором были исследованы внутринациональной законодательной относительно данного института, в следствие чего были представлены некоторые выводы и законодательные предложения. В работе исследованы также некоторые подходы международного сообщества.

Ключевые слова: имущество, доля, владеде, право на собственность, долевая собственность.

SAMINE PETROSYAN

Prosecutor of prosecutor's Office of Ararat Region,
PhD student at YSU Chair of Civil Law

**THE CONCEPT OF COMMON PROPERTY.SHARE OWNERSHIP
AS A TYPE OF COMMON PROPERTY.**

In the framework of this article, the author presents the concept of common share ownership. The author specifically analyzes developments in the legislative concerning domestic violence, and in the end conclusion is presented. The author analyzes also some approaches, that exist in international practice.

Keywords: property, section, owner, right for property, common share ownership.

ՏԱԹԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ,
 ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության
 գլխավոր իրավաբանի պաշտոնակատար

**ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
 ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ**

Հեղինակի կողմից քննարկվում են հաշտարարության կամավորության սկզբունքը և բացառություններն այդ սկզբունքից: Հեղինակը վերլուծում է պարտադիր հաշտարարության կիրառման համար անհրաժեշտ պայմանները, ներկայացնում պարտադիր հաշտարարության ներդրման ոլորտում միջազգային լավագույն փորձը և հանգում եզրակացությունների՝ ազգային իրավական համակարգում պարտադիր հաշտարարության ներդրման վերաբերյալ:

Բանալի բառեր. հաշտարարություն, վեճերի կարգավորում, հաշտեցման ընթացակարգեր, հաշտարար, վեճերի լուծման այլընտրանքային ձև, հաշտարարության կամավորություն, պարտադիր հաշտարարություն:

TATEVIK SARUKHANYAN

Аспирант кафедры гражданского процессуального права ЕГУ,
 И.О. Главного юриста юридического департамента аппарата Премьер-министра

**ДОБРОВОЛЬНОСТЬ МЕДИАЦИИ И ОБЯЗАТЕЛЬНАЯ МЕДИАЦИЯ КАК ИСКЛЮЧЕНИЕ ИЗ
 ПРИНЦИПА ДОБРОВОЛЬНОСТИ**

Автор обсуждает принцип добровольности медиации и исключения из этого принципа. В данной статье автор анализирует необходимые условия для применения обязательного посредничества, представляет лучшую международную практику в сфере инвестирования обязательного посредничества и делает выводы о внедрении обязательного посредничества в национальной правовой системе.

Ключевые слова: медиация, урегулирование споров, примирительные процедуры, медиатор, альтернативная форма разрешения споров, добровольность медиации, обязательная медиация.

TATEVIK SARUKHANYAN

PhD student of the YSU Chair of Civic procedure,
 Acting chief counsel of the department for
 legal of the Prime minister's office

**THE VOLUNTARINESS OF MEDIATION AND THE MANDATORY MEDIATION AS AN EXCEPTION
 FROM THE PRINCIPLE OF VOLUNTARINESS**

The author discusses the principle of voluntariness of mediation and the exceptions from that principle. In this article the author analyzes the necessary conditions for applying mandatory mediation, represents the best international practice in the sphere of investment of mandatory mediation and makes conclusions about the implementation of mandatory mediation in national legal system.

Key words: mediation, dispute resolution, settlement procedure, mediator, alternative dispute resolution form, voluntariness of mediation, mandatory mediation.

ԼՈՒՍԻՆ ԹԱՍԱԼՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դասախոս

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՛ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐ

Աշխատանքային իրավահարաբերություններից բխող վեճերը Հայաստանի Հանրապետությունում ևս կարող են լուծվել նաև վեճերի լուծման այլընտրանքային միջոցով: Աշխատանքային իրավահարաբերություններից բխող վեճերը կարող են լուծվել հաշտարարության (մեդիացիայի) միջոցով՝ արտադատական և դատավարական կարգով արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ:

Բնալի բառեր. աշխատանք, վեճ, հաշտարար, հաշտեցման հարցերով հանձնաժողով, իրավահարաբերություններ:

ЛУСИНЕ ТАСАЛЯН

Преподаватель образовательного комплекса Полиции РА

МЕДИАЦИЯ ИЛИ ТРУДОВОЙ СПОР

Споры, вытекающие из трудовых правоотношений, в республике Армения могут решаться также путем альтернативного решения споров. Споры, вытекающие из трудовых правоотношений, могут решаться путем медиации с участием медиатора, лицензированного во внесудебном и процессуальном порядке.

Ключевые слова: работа, спор, медиатор, комиссия по вопросам медиации, закон, правоотношение.

LUSINE TASALYAN

Lecturer in educational complex of Police of the RA

MEDIATION OR LABOR DEBATES

The debates stemming from the labour legal relation can be solved in the Republic of Armenia by the alternative measure of debate as well. The debates stemming from labour legal relations through the mediation can be solved by out of judicial and by legal procedure by the participation of the authorized mediator.

Key words: work (labour), debate, mediator, commission of mediation, law, legal relation.

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների
պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել զինվորական ծառայությունից արձակման սահմանափակման խնդրին՝ հիմք ընդունելով ինչպես Սահմանադրության, այնպես էլ միջազգային իրավաբանությամբ ամրագրված սկզբունքները: Արդյունքում, վեր է հանվել Ազգային անվտանգության ծառայողների սեփական նախաձեռնությամբ ծառայությունից արձակման վերաբերյալ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքում առկա խնդիրը և հիմնավորվել օրենսդրական սահմանափակումը վերացնելու անհրաժեշտությունը: Նշված խնդիրը դիտարկվել է երկու տեսանկյունից. 1) Սահմանադրությամբ ամրագրված՝ աշխատանքի ընտրության ազատության և միջազգային չափանիշներով նախատեսված՝ աշխատանքի ազատության սկզբունքների տեսանկյունից, 2) խտրականության արգելքի վերաբերյալ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավաբանությամբ ամրագրված սկզբունքի տեսանկյունից:

Բանալի բառեր. զինվորական ծառայություն, աշխատանքի ազատ ընտրության իրավունք, պարտադիր կամ հարկադիր աշխատանք, ազգային անվտանգության մարմիններ, ծառայությունից արձակման իրավունք, խտրականություն:

ГАМЛЕТ АРУТЮНЯН

Ведущий специалист отдела по защите прав военнослужащих и членов их семей
Аппарата Защитника прав человека Республики Армения

**ОГРАНИЧЕНИЕ УВОЛЬНЕНИЯ СО СЛУЖБЫ В КОНТЕКСТЕ ПРАВА
НА СВОБОДНЫЙ ВЫБОР ТРУДА**

В данной статье обсуждена проблема ограничения увольнения с военной службы, учитывая принципы, закрепленные как в Конституции, так и в международном праве. В результате была выявлена проблема Закона РА «О службе в органах национальной безопасности», связанная с увольнением со службы по собственной инициативе и обоснована необходимость устранения законодательного ограничения. Указанная проблема рассмотрена с двух точек зрения: 1) с точки зрения принципа свободы выбора труда, закрепленного Конституцией и установленного международными стандартами принципа свободы труда, 2) с точки зрения принципа запрета дискриминации, закрепленного как в международном, так и в государственном праве.

Ключевые слова: военная служба, право на свободу выбора труда, обязательный или принудительный труд, органы национальной безопасности, право на увольнение со службы, дискриминация.

HAMLET HARUTYUNYAN

Lead Specialist of Unit for Protection of Rights of
Military Servicemen and their Family Members of Human Rights Defender’s Office

**RESTRICTION OF DISMISSAL FROM SERVICE IN THE CONTEXT OF THE RIGHT
TO FREE CHOICE OF LABOUR**

This article, based on the principles enshrined in both the Constitution and international law, discusses the problem of restricting dismissal from military service. As a result, the problem of the RA Law “On Service in the National Security Bodies” was identified, related to dismissal from service on one’s own initiative, and the need to eliminate the legislative restriction was substantiated. This problem was considered from two points of view: 1) from the point of view of the Constitutional principle of freedom of labour choice and the principle of freedom of labour established by international standards, 2) from the point of view of the principle enshrined in both international and domestic legislation on the prohibition of discrimination.

Keywords: Military service, the right to freedom of labour choice, compulsory or forced labour, national security agencies, the right to dismissal, discrimination.

ԱՆԻ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՎԻԿՏԻՄԻԶԱՑԻԱՆ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հոդվածում բացահայտված է անչափահասների վիկտիմիզացիայի գործընթացի էությունը ժամանակակից հասարակությունում: Վերհանված են վիկտիմիզացիայի նեգատիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները և դրանց կապը: Անչափահասի վիկտիմիզացիան անձնավորության հիմնական բաղադրատարրերը ներկայացված են որպես վիկտիմիզացիայի հիմնական արդյունք: Հիմնավորված է նախականիչ վիկտիմիզացիայի գիտական ուսումնասիրության առաջադիմական և գործնական նշանակությունը:

Բանալի բառեր. վիկտիմիզացիա, վիկտիմիզացիայի անձնավորություն, անչափահաս, գործոն:

АНИ МЕЖЛУМЯН

Прокурор прокуратуры административных округов Аван и Нор Норк

ВИКТИМИЗАЦИЯ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ КАК КАК СОЦИАЛЬНО-ПРАВОВОЙ ПРОЦЕСС

В статье раскрывается сущность процесса виктимизации подростков в современном обществе. Показаны негативные объективные и субъективные факторы виктимизации и их взаимосвязь. Представлены основные компоненты виктимной личности подростка, как продукт виктимизации. Обоснована перспективность и практическая значимость педагогических исследований по проблеме профилактики виктимизации.

Ключевые слова: виктимизация, виктимная личность, подросток, фактор.

ANI MEZHLUMYAN

Prosecutor in Prosecutor's Office of Avan and Nor Nork Administrative Districts

VICTIMIZATION OF ADOLESCENTS AS A SOCIAL-LEGAL PROCESS

The article reveals the essence of the process of victimization of adolescents in modern society. The article shows negative objective and subjective factors of victimization and their relationship. The main components of the victim's personality of a teenager are presented as a product of victimization. In the article has also been substantiated the perspective and practical significance of pedagogical research on the problem of prophylactic victimization.

Key words: victimization, victim's personality, adolescents, factors.

ՀՀ ՂԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՓԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՁՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել:

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (210x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ծախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 119 2020